Էջմիածին

ՌՆԳ

Ի. ՏՈՒՄԻ

Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

IX



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Կոստանդնուպոլսի Պատրիարքին և բյուրեանայ ժողովրդին	3
Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Ս. Ծնություն Տ. Տ. Գեորգ Զ-ի անվանակոչության տոնի առթիվ ստացված շնորհավորական հեռագրերը	5
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Գահն ու Գանակալը	11
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ.— Խաղաղության պաշտպանության շարժումը և Հայ Եկեղեցին	16
ԴԵՐՊՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ.— Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի	18
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ	21
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	27
ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ	30
ԱՂԱՓԻՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ.— Տպավորություններ Թալինից	42
Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Մանրանկարիչ Սարգիս Պիծակ	45
Ս. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ.— Դրիգոր Եպիսկոպոս Մանուչարյան	51
ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ.— Ձեկույց Երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի ձեռագիրների մասին	56
Երանաշնորհ Տ. Գարեգին Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցը Ալեքսանդրիայի մեջ	58
Բ.— «Կիլիկյան հայկական պետության պատմություն», պրոֆ. Գ. Գ. Միքայելյան	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՍՄՍԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1953 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳԻՆ Զ.Ի

ԼԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԱՀԻ ՎՐԱ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ԳԵՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՕՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵՂԻՆ ԵՒ ԿԱՄՕՒՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՔՈՌՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵՆԵՂԵՑՒՈՑ ՍՐԲՈՅՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԹԻՒՐՔԻՈՅ ԴԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԴԱՐԵՎԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ԹՐՔԱՀԱՅ ՍԻՐԵՑԵԱԼ ՀՕՏԻՆ ՄԵՐՈՒՄ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՍՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԴԱՀԱՍԱԼԷ ՆՈՐԻՆ

Ամենապատվությանդ՝ Կոստանդնուպոլսում նորակառույց, Ս. Խաչ եկեղեցու կողմին, Արմաշի Դպրեվանքի ծրագրով միջնակարգ դպրոց բանալու որոշումը՝ իրենց կոչման գիտակից և եկեղեցուն ու Ազգին նվիրված հոգևոր պաշտոնյաներ և ուսուցիչներ պատրաստելու նպատակով, ողջունում ենք:

Ամենուրեք հայկական համայնքները մեծ կարիք ունեն ազգային-եկեղեցական կրթական հաստատությունների՝ իրենց ազգային-եկեղեցական կարիքները արժանապես ու լիապես հոգալու և իրենց ազգային դեմքը անաղարտ պահելու և դիմազուրկ չլինելու համար: Այս իսկ տեսակետով, բնականաբար, Մեզ հաճելի է լսել ու ողջունել նոցա բացումը ամենուրեք: Նմանապես ողջունելի է նոցա բացումը բյուրֆանայ համայնքներում՝ նկատի առնելով նախ՝ երկրում գոյություն ունեցող մեծ պահանջը հանանայության, ուսուցչության և հատկապես երկրի ծայրագավառներում և երկրորդ՝ օտարանպատակների համար ներկայումս նամարյա ամենուրեք գոյություն ունեցող դժվարին մուտքը որևէ երկիր, որի նկատմամբ Թյուրքիան ավելի խստապահանջ է, ինչպես պարզորեն երևեցավ այս վերջին պատրիարքական ընտրության առթիվ բեկնածուների նշման ժամանակ:

«Ս. Խաչ Դպրեվանքի Պատրիարքության Հայոց Թյուրքիայի» վարժարանի բացումը ողջունելի է նաև այն պատճառով, որ դպրանոցը պիտի ղեկավարի Սրբազան Պատրիարքը, որ իր անցյալ գործունեությամբ բազմաթիվ ապացույցներ է տվել՝ թե ինքը եկեղեցական-ազգային կրթական ասպարեզում ընդունակ և հաջող գործիչ է և նվիրված գործին, որով արժանացել է Ազգի մտավորական տարրերի համակրության: Այդ պարագան գրավական է, որ բացվելիք նոր դպրոցը՝ ունենալով իր կրոնասեր և ազգասեր ղեկավարը, այդ ոգով պիտի մկրտե թյուրքահայ երիտասարդ սերունդը, այդ ոգին պիտի դրոշմե նոցա հոգու մեջ և այդ ոգու ներշնչումը պիտի պահանջե դասատիրակներից և ուսուցիչներից. ոգի, որին այնքան կարոտ է ցաքուցրիվ ընկած հայությունը: Այլև ուրախ ենք նաև, որ Սրբազան Պատրիարքը հետ այսու իր սիրած ու վարժ ուղիով պիտի քայլե՝ սրտով ուրախ, հոգով հանգիստ:

Իմ սիրելի՛ ժողովուրդ, մեր նախնիքը դարերի ընթացքում տոկացել են ամեն դառնության՝ պահպանելու համար իրենց ազգային դեմքը: Նոքա պայքարել ու պաշտպանել են Ազգի ազատությունը և Հայրենիքի ու Հայրենի Պետության անկախությունը: Եվ միայն բնաջնջման վտանգից զերծ մնալու նպատակով է, որ ստիպված են եղել լաց ու կոծով թողնել իրենց պաշտած հայրենի հողը և գաղթել, սակայն, միշտ պահպանելով իրենց հոգու խորքում վերստին Հայրենիք դառնալու հույսը:

Մեր նախնիքը իրենց հյուրընկալված նոր երկրում մի ձգտում, մի իղձ են ունեցել՝ պահպանել իրենց խղճի ազատությունն ու ազգային դեմքը և հայ մնալ: Եվ այդ նպատակի համար էլ, ուր որ գնացել են, հիմնել են «Ազգային տուն», այն է՝ եկեղեցի, դպրոց, մամուլ:

Հայ եկեղեցին դարերի ընթացքում եղած է հայության համար ո՛չ միայն հավատի վտարան, այլև ազգապահպանման էական ազդակ: Հայ եկեղեցին է, որ հավատացյալների աչքն ու սիրտը դեպի ինքը դարձնելով՝ ի մի է խրմբում և շաղկապում իր տարագիր զավակներին, ջերմացնելով նոցա սիրտը նախնյաց ջերմեռանդությամբ և մեծահոգությամբ ու առ Ազգն և Հայրենիքը ունեցած անձնվիրությամբ՝ պահելով նրանց հնադարյան հաստատության՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո:

Նյութական եկեղեցին բարոյական շենք դարձնողը կենդանի հավատն է, իսկ հավատը կենդանի ու վառ պահողը՝ անձնվեր հովիվն է: Անձնվեր հովիվն է, որ հավատացյալների միտքը լուսավորում է Ս. Ավետարանի լուսով և սիրտը ջերմացնում սիրո զգացմունքով դեպի ընկերը և այսպես ղեկավարում է անձնվեր հովիվը հավատացյալների միտքն ու սիրտը դեպի բարին, գեղեցիկն ու ճշմարիտը՝ դաստիարակելով նոցա ճշմարիտ հավատացյալ և դարձնելով Հիսուս Քրիստոսի հավատարիմ ու ճշմարիտ աշակերտը:

Հայ դպրոցն է, որ հայ մատաղ սերունդը հայեցի է դաստիարակում և կրթում՝ մարզելով նոցա միտքը Հայ Աշխարհի քաջամարտիկ նահատակների պատմությամբ և սրբազան ավանդներով: Հայ դպրոցն է, որ վառում է հայ մատաղ սերնդի սիրտը Հայրենիքի սիրով և մկրտում նոցան ազգային ոգով: Հայ եկեղեցին, իր անձնվեր հովիվով և հայ դպրոցը՝ իր անձնվեր ուսուցիչով ազգային ինքնագիտակցության գոյության սյուներն են: Նոցա միացյալ ջանքերով է, որ հայությունը ամենուրեք, մանավանդ գաղութահայությունը օտար երկրներում և կոլտուրապես բարձր ազգերի մեջ կարող է անխաբար պահպանել իր ազգային ոգին և, իբրև ազգ, անձույլ մնալ:

Հայ մամուլն է Սփյուռքի մեջ, որ արթնությամբ հետևել ու հետևում է վտարանդի հայության ղեկավարների գործունեությանը՝ բարյացակամությամբ

և սիրով նշելով նոցա գայթումները՝ ուղղելու նպատակով և գնահատելով նոցա ճշմարիտ ընթացքը, որպես հաջողություն:

Իմ սիրելի՛ հայ ժողովուրդ, դուք էլ սիրեցե՛ք ձեր նախնյաց նման Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, այն Եկեղեցին, որ գարերով պահել է ձեզ հայ, հետ այսու էլ նա պիտի պահե ձեզ հայ: Նա է նաև, որ պիտի զորացնե հանդեպ միմյանց տածած ձեր թուլացած սերը՝ վերստին եղբայրացնելով ձեզ: Սիրեցե՛ք հայ դպրոցը, հատկապես ձեր հորաքաց Դպրեվանքը, որ պիտի ջերմացնե ձեր սիրտը Հայրենիքի սիրով, պիտի մկրտե և ուռճացնե ձեր զավակների հոգին ազգային-կրոնական ոգով: Սիրեցե՛ք և պահպանեցե՛ք հայ մամուլը, որ խրատ պիտի հանդիսանա հաստատությունների և մարմինների գայթումները բարյացակամությամբ և սիրով ընդգծելու և ճշմարիտ ուղին նշելու: Իսկ Մենք ենք և կմնանք աղոթող ձեզ համար և օրհնող ձեր բարի ձեռնարկները:

Աստվածային օրհնությունն ենք հայցում ձեզ վրա, որ մնաք եղբայրասեր և եկեղեցասեր, ազգասեր և հայրենասեր ու էջմիածնասեր, որով ընդմիշտ անխաբար պիտի պահպանվի ձեր տոգային դեմքը:

Աստվածային Աջը թող հովանի և պահապան լինի ձեր բոլոր ազգային-եկեղեցական հաստատություններին ու մարմիններին և հաջողությամբ պսակե ձեր բարի ձեռնարկները: Աստվածային Աջը հատկապես հովանի և առաջնորդ լինի ձեր մեծագույն մարմնի՝ Ազգային-եկեղեցական խառն ժողովին, որ՝ Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ՝ Ամենապատիվ Սրբազան Պատրիարքի նախագահությամբ՝ հոգա ձեր եկեղեցական-ազգային կարիքները և առաջնորդե ձեզ դեպի բարին, գեղեցիկն ու ճշմարիտը:

Մաղթում ենք Ամենաբարձրյալին, որ ներշնչե խառն ժողովի մեծամասնական և փոքրամասնական հատվածներին՝ ցուցաբերել հանդեպ միմյանց փոխադարձ եղբայրական վերաբերմունք և ջերմ խոնարհական ոգի, որպեսզի համերաշխ գործեն և հաջողությամբ պսակվեն նոցա ազգօգուտ ձեռնարկները: Մաղթում ենք նաև, որ Տերը առավել ևս զորացնե Սրբազան Պատրիարքի ուղղամտության և անաչառության ոգին, որ հաջողի ղեկավարել Ազգային Սահմանադրության ճիշտ ոգով և համերաշխ պահել խառն ժողովը, որպեսզի վերջինս էլ համերաշխության և համագործակցության ճշմարիտ օրինակ հանդիսանա իր հովանու ներքո գործող հաստատություններին ու մարմիններին և Թյուրքիայում ծվարած հայ ժողովրդական հատվածին: Եվ ձեր ալեզարդ Հայրապետը տեսնե այն և մխիթարվի և փառք տա Ամենակալին:

Շնորհք և ողորմություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ, ամէն:

Գէորգ Զ

ԾԱՌԱԿՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն սեպտեմբերի
1953 Փրկչական ամի, ի թուականս Հայոց ՌՆԳ,
յիններորդում ամի Հայրապետութեան Մերոյ՝
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ՕՐՔԱՋՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒՐՔՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Դ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻՑ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձնամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ Վեհափառության անվանակոչությունը, ցանկանում եմ Ձեզ քաջառողջ կյանք և արդյունավետ գործունեություն՝ ի փառս հայ ժողովրդի ու Հայրենիքի:

ՀՐԱՉԵԱ ԴԻՐԳՈՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Ձեզ Վեհափառության տոնի առթիվ Մենք և միաբանությունը ներկայացնում ենք Ձեզ Սրբության մեր լավագույն իղձերը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, և բարգավաճում՝ եկեղեցուն և հայ ժողովրդին:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Մենք և միաբանությունը ճարգանքով կմատուցանենք մեր շնորհավորությունները Ձեր անվանակոչության տոնի առթիվ: Կաղոթենք Ամենակարողին՝ որ պարգևե Ձեզ Վեհափառության երկար կյանք:

Սրբոց Հակոբյանց տաճարին մեջ կմատուցվի սուրբ պատարագ:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ

ՌՈՍՏՈՎԻՑ

Թեմի և եկեղեցական խորհրդի անդամները և անձամբ ես ի սրտե շնորհավորում ենք Ձեր անվանակոչությունը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, անսպառ ջանք և կորով Ձեր աշխատանքներում, բարօրություն և երջանկություն Հայրենիքին ու հարազատ եկեղեցուն, ինչպես նաև՝ խաղաղ համագործակցություն աշխարհի ժողովուրդներին:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Հյուսիսային Կովկասի թեմի

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Թեմական խորհուրդի և մեր հավատացյալ ժողովուրդի անունով կշնորհավորենք Ձեզ որդիական ամենաջերմ սիրով՝ Ձերդ Ս. Օծության բարեմաղթելով առողջություն, արևշատություն և գործոց հաջողություն՝ ի փառս մեր դարավոր Ս. եկեղեցվո և վերածնած Մայր Հայրենիքի:

ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ

Առաջնորդ Ռումանիահայ թեմի

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻՑ

Վեհափառ Տե՛ր,

Ձեր անվան տոնի առթիվ հաճեցեք ընդունել մեր որդիական հարգանքներն ու մաղթանքները: Տերը Ձեզ երկար և երջանիկ կյանք պարգևե:

Որդիական սիրով՝

ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայրապետական պատվիրակ

Հարավային Ամերիկահայոց

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Որդիական խոնարհությամբ կշնորհավորեմ Ձեր Վեհափառության անվանակոչության տոնը՝ բարեմաղթելով հաջառողջություն և արևշատություն: Կաղոթեմ, որ Հայ Եկեղեցին և Ձեր հոտը բախտ ունենան տոնելու Վեհիդ ծննդյան 100-ամյակը Ամենայն Հայոց Առաքելական Ս. Աթոռի վրա:

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ (ԿԱԼԻՖՈՐՆԻԱ)

Վեհիդ անվան տոնախմբության բարեբաստիկ առիթով կներկայացնեմ մեր և թեմիս պաշտոնական մարմիններու և համայն ժողովրդյան որդիական զգացումները: Աղոթող ենք Վեհիդ կենաց, արևշատության և առողջության համար: Կհայցենք Ձեր հայրական օրհնությունը մեր վրա:

ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Առաջնորդ Կալիֆորնիոյ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Թեմական խորհուրդը, հոգևորականությունը և անձամբ ես շնորհավորում եմք Ձերդ Վեհափառության անվանակոչությունը: Ցանկանում եմք Ձեզ առողջություն, երկարատև կյանք՝ ժողովրդի և Ս. Եկեղեցու բարօրության համար: Համբուրում եմք Ձերդ Վեհափառության Աջը:

ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Առաջնորդ Շիրակի թեմի

ԹԱՎՐԻԶԻՑ

Թեմական ժողովը, թեմական խորհուրդը և համայն ժողովուրդը խոնարհությամբ համբուրելով Ձեր Ս. Աջը, մեծ խանդավառությամբ շնորհավորում են Վեհիդ տոնը՝ մաղթելով Բարձրյալից երկար կյանք և բարեբաստիկ օրեր:

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԱԹԵՆՔԻՑ

Ձերդ Վեհափառության անվան տարեդարձի առթիվ, հանուն հունահայոց առաջնորդարանի և ժողովրդյան, կմատուցանեմ սրտագին շնորհավորություններ և բարեմաղթություններ Ձերդ Վեհափառության արևշատության համար:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Սրտի բերկրանքով շնորհավորում եմք Ձերդ Վեհափառության անվանակոչության տոնը: Մաղթում եմք արևշատություն և երջանիկ օրեր:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ձերդ Վեհափառության անվան տոնի առթիվ հոգաբարձությունը և քահանայական դասը ի սրտե շնորհավորում են Ձեզ՝ մաղթելով երկար կյանք և արևշատություն:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավորելով Ձեր անվանակոչությունը, ցանկանում եմք Ձեզ երկար կեցություն:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻՑ

Վեհափառ Տե՛ր,

Ձեր անվանակոչության առթիվ խնդրում ենք ընդունել առողջ և խաղաղ տարիների լավագույն մաղթանքներ:

Այս առթիվ մատուցվեց սուրբ պատարագ և կատարվեց հայրապետական մաղթանք:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՊԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Շնորհավորում եմ Վեհիդ սուրբ անվանակոչության տոնը և ցանկանում եմ կատարյալ առողջություն և երկար կյանք, անդորրություն, ամեն:

Համբուրիվ Ս. Աջույդ՝

ՊՆՈՐԴ ՔԱՀԱՆԱ

ՋԱԼՏԱՅԻՑ

Հավատացյալները, եկեղեցական խորհուրդը և անձամբ մեզ՝ շնորհավորում ենք Ձեր անվանակոչությունը, ցանկանում ենք Ձեզ երկարատև կյանք՝ ի բարօրություն մեր ժողովրդի, Հայրենիքի և Առաքելական Եկեղեցու:

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ,
ԵՐԵՑՓՈԽ ՁՈՒԲԱՐՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Թնմական խորհուրդը, հոգևորականությունը և համայնքը շնորհավորում են Ձեզ Վեհափառության անվանակոչությունը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարատև կյանք՝ մեր Եկեղեցու բարօրության համար:

ՁՈՐՁՈՓՅԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԹԲԻԼԻՍԻՑ

Ձեզ Վեհափառության անվանակոչության առթիվ եղում ենք մեր ջերմագին շնորհավորանքը, ցանկանալով Ձեզ Վեհափառության երկարակեցություն:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԿՐԱՍՆՈԴԱՐԻՑ

Կրասնոդարի եկեղեցական խորհրդի և հավատացյալների անունից շնորհավորում ենք Ձեր անվանակոչությունը, ցանկանում ենք Ձեզ երկարատև կյանք և առողջություն:

ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Շնորհավորում ենք Ձեր անվանակոչությունը: Ցանկանում ենք Ձեզ առողջություն և երկարատև կյանք՝ հայ հավատացյալների բարօրության համար:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԳԱՀՆ ՈՒ ԳԱՀԱԿԱԼԸ

Այս տարի էլ, ավանդական կարգով ու մեծահանդես շքով, սեպտեմբերի 27-ին, Մայր Արոռում և մեր բոլոր բեմերում, տոնվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի անվանակոչության տոնը:

Մայր Արոռի պատմական կամարների տակ, Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի անվան ու գործունեության հետ կապված յուրահանչյուր իրադարձություն ու ազգային-եկեղեցական տոն, անվերապահորեն վերածվում է համաժողովրդական սիրո, մեծարանքի և երախտագիտության մի հսկայական ու խանդավառ ցույցի՝ հանդեպ Հայրապետի բարձր անձնավորության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոն Ս. Էջմիածնի:

Ս. Էջմիածինն ու Վեհափառը՝ Դահն ու Դահակալը, հայ հավատացյալ ժողովրդի կրոնական ու ազգային գիտակցության մեջ և զգացմունքների առաջ՝ միաձուլվել ու կազմել են մի անսպառ աղբյուր հերշնչման, կրոնի, հավատի, հայրենասիրության ու եկեղեցասիրության:

Այդ գիտակցությունն ու զգացումը դարերով, Լուսավորչի անմար կանթեղի նման, վառ են եղել հավատացյալ հայ ժողովրդի հոգում: Այս զգացումով ու գիտակցությամբ ապրել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ու անցել դարերի արյունոտ ու փուշոտ ճանապարհը և հասել այսօրվա խաղաղ նավահանգիստն ու լուսավոր հանգրվանը:

Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետությունը հանդիսացել են մեր ազգային-եկեղեցական միասնության, մեր ժողովրդի հոգևոր-ազգային դաշինքի սրտառուչ խորհրդանշանները: Ս. Էջմիածնի Դահն ու գահակալները հանդիսացել են ազգային ինքնագիտակցության, ինքնուրույնության ու պահպանության հիմնական ազդակները: Ս. Էջմիածինը, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոն, «Հայի զգայուն սիրտն է եղել,— ինչպես գրում է Վեհափառ Հայրապետը,— որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով...: Հայոց Հայրապետությունը վեհ գաղափարների մի փունջ է, որ հյուսվել է հայոց մեծ հայրապետների ձեռքով»:

Այդ վեհ գաղափարների փնջի ամենավառ ծաղիկներն են եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը, որոնք անբառամ փայլով ու բարմությամբ գեղեցկացնում են մեր օրերի մեծագործ ու հայրենասեր Գեորգ Զ. Կաթողիկոսի բանկագին կյանքն ու գործունեությունը՝ իբրև լուսատու փարոս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, և որի իմաս-

տուն ու հայրախնամ ղեկավարության օրով օրըստօրե պայծառանում է ու ծաղկում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ ի փառս Քրիստոնեական սուրբ կրոնի և ի միխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Ս. Էջմիածինը, Հայոց Հայրապետական Աթոռը, ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը, արդարև, «աստվածային պարգև է մեզ համար, դարերի պատմությամբ սրբագործված և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կյանքում: Զլատել նրա բարոյական ուժն ու հեղինակությունը, սառնություն քարոզել նրա դեմ և ժողովրդին մոլորեցնել՝ երեխայական անմտություն է և ազգավնաս գործողություն»:

Այդպես է եղել հայ ժողովրդի հավատը Ս. Էջմիածնի և նրա Գահակալի հանդեպ: Մեր ժողովուրդը սիրում ու մեծարում է այժմ էլ Ս. Էջմիածինը և նրա արժանավոր Գահակալին, «ճշմարտապես և ոչ կարծեօ»: Հայ ժողովուրդը ելնելով իր պատմական կենսափորձից, հավատացել է դարերով և այժմ էլ հավատում է իր հոգու բովանդակ ուժով՝ Ս. Էջմիածնի ու Լուսավորչի Աջի զորության, ու այսօր, ավելի քան մի այլ ժամանակ, գիտակցությամբ, համոզմունքով, երախտագիտությամբ համախմբվում է իր Մայր Աթոռի և նրա արժանավոր Գահակալի՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի շուրջը և իր անպատում շնորհակալությունն է արտահայտում նրա անվանակոչության երջանիկ տոնի առթիվ:

Վեհափառ Հայրապետի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա մեր օրերի բարդ ու դժվար պայմաններում, մի կլխով բարձրացրեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հեղինակությունը, իր բարձր անձնավորության բարոյական ու հոգևոր հազվագյուտ բարեմասնություններով, անկաշառ հայրենասիրությամբ, ժողովրդանվեր գործունեությամբ, և նվաճեց իրեն և իր Աթոռի համար ո՛չ միայն ողջ հայության սերն ու խորը երախտագիտությունը, հայրենի հարազատ Պետության համակրանքն ու աջակցությունը, այլ նաև քրիստոնեական քույր եկեղեցիների, հատկապես արևելյան օրթոդոքս եկեղեցիների՝ այդ թվում Ռուսական Ուղղափառ եկեղեցու և ռուս հոգևորականության բարեկամությունն ու անխարդախ համակրանքը:

Բախտավորություն է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի համար, որ այսօր Լուսավորչի Աթոռի վրա բազմել է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետը, որի ճմուտ ղեկավարության տակ, բեղուն ու շնորհընկալ գործունեությամբ, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ո՛չ միայն գտնվում է իր նոգեոր կոչման ու ծառայության բարձրության վրա, այլ նաև իր արժանի ու պատվո տեղն է գրավում ընդհանուր քրիստոնեական եկեղեցիների շարքում, իբրև Արևելքի ամենահին և ամենաուղղափառ Քրիստոնեական եկեղեցին:

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի է դառնում այն բարձր և անկաշառ սերն ու հարգանքը, որ վայելում է Վեհափառ Հայրապետը: Ավելի քան վաթսուն տարիներ, հոգով ու սրբությամբ ծառայել է նա իր ժողովրդին, նրա արդար դատին, իր Հայրենիքին, իր Սուրբ եկեղեցուն, իր կոչման արժանավայել գիտակցությամբ:

Վեհափառը մեր եկեղեցական նորագույն պատմության այն բացառիկ ու երջանիկ դեմքերից մեկն է, որի կյանքն ու բազմապիսի գործունեությունը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակում տեղի ունեցած հարուստ ու պատմական իրադարձությունների հետ: Ավելի քան երեսուն տարիներ նա իր հզոր, ազատ Սովետական Հայաստանի հաղթաթղթի է: Վեհափառը, իր բարձր կոչման ու պարտականության գիտակցությամբ, իր անձը դարձրել է համակ օրհնություն, օծություն, շուք ու շնորհ:

Վեհափառի հայրապետական կոնդակները՝ մեր եկեղեցական մատենագրության այդ բանկարժեք մարգարիտները, իրենց քրիստոնեական շնչով, հայեցի մտայնությամբ ու հայկական գունագեղությամբ, իրենց բանաստեղծական շնչով, լեզվական բարձր մշակույթով, ձևի ու բովանդակության հարստությամբ ու կատարելությամբ, նոր էջ են բաց անում մեր նորագույն եկեղեցական մատենագրության մեջ: Ցուրաքանչյուր տողի և

բառի մեջ Վենափառը դրել է իր մեծ մարդասեր սիրտը, իր հոգու քաղցրությունը, հավատի կրակը, իր մտքի սրտագրավ պարզությունը, և յուրաքանչյուր տողի մեջ իրար են լրացնում հավատի մարդն ու գիտնականը, արվեստագետն ու տեսաբանը:

Դժվար է մեծ Հայրապետի հայրենասիրական ու եկեղեցաշեն գործունեությունը խտացրնել այս մի քանի տողերի մեջ: Հատորներ են պետք դրա համար: Մի օր այդ շնորհընկալ աշխատանքը գլուխ կբերվի, և որը կլինի հավիտենական հուշարձանը Վենափառի կյանքին ու գործունեության՝ երախտագետ հայ հավատացյալ ժողովրդի կողմից:

Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնարերը «էջմիածին» ամսագիրը, Վենափառի անվանակոչության այս տոնի առիթով, բուռցիկ ակնարկով կանգ է առնում միայն Վենափառի այն բացառիկ արժանիքների առաջ, որով նա դարձել է մեր օրերի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու լուսատու փարոսը, հավատի ջահը, հայրենասիրության խորհրդանշանը և խաղաղության աննկուն մարտիկը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.— Դեռոգ Զ.ի գահակալությունը Լուսավորչի Աթոռի վրա նոր ու խոստումնալից մի էջ բացեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նորագույն պատմության մեջ: Փաստերը խոսում են այն մասին, որ այսօր և՛ Մայր Հայրենիքում և՛ Սփյուռքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ապրում է մի նոր փառավոր շրջան: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր-ազգային մշակութային զարթոնքը, իր Հայրապետության առաջին իսկ օրերից, Վենափառի ուշադրության կենտրոնում է եղել: «Ի վիճակի գտնվել ծածկելու Հայաստանյայց Եկեղեցու ասպարեզում եղած բացը,— Հայտարարել է Վենափառը ազգային-եկեղեցական ժողովում արտասանած ճառում,— հայ ժողովրդի հոգևոր-կուլտուրական կարիքներն և նորա կրոնական դաստիարակության գործը բարձր մակարդակի վրա դնել, որն այնքան կարևոր է հայ ժողովրդի հոգևոր զարգացման, կուլտուրական բարձրացման և ազգային ինքնագիտակցության զարգացման համար»: Հարկ էր ոտքի կանգնեցնել Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, նոր շունչ ու կենդանություն տալ նրան, նոր ու խոստումնալից ուժերով համալրել նրա սպասավորությունը և այն դնել իր կոչման ու գիտակցության բարձրության վրա: Անհրաժեշտ էր կարճ ժամանակամիջոցում բուժել եկեղեցու վերքերը, պատրաստել շնորհալի եկեղեցականների մի սերունդ, որը պատվով կատարի իր պարտքը ժողովրդի, Հայրենիքի, եկեղեցու հանդեպ, նախնյաց ոգով և ավանդությամբ: Այդ նպատակի համար բացվեց էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որը Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի և Անթիլիասի Դպրեվանքի հետ պիտի բավարարեր եկեղեցու հոգևոր կարիքները: Ճեմարանը, իր բացման առաջին իսկ օրից, եղել է Վենափառի սրտի ամենամոտիկ հաստատությունը: Նա ուսանողությանը շրջապատել է հայրական հոգածությամբ և սիրով: Ճեմարանը տվել է իր անդրանիկ հունձը՝ 12 բարեշնորհ սարկավագներ, որոնցից մի մասը կատարելագործում է իր ուսումը Մոսկվայի աստվածաբանական ճեմարանում, մի խումբն էլ ասպիրանտական աշխատանքներ կատարում է Մայր Աթոռում՝ լծված նաև վանական-վարչական աշխատանքների: Այս տարի Ճեմարանն ընդունել է 21 նոր ժառանգավոր:

Վենափառ Հայրապետը, հայ հավատացյալ ժողովուրդը շատ մեծ հույսեր են կապում Ճեմարանի գոյության և նպատակների հետ, նոր հոգևորականության պատրաստության հետ: Վենափառը, Ազգը շատ մեծ ակնկալություններ ունեն էջմիածնի Հոգևոր Ճեմարանից. «Ամենայնի, որում շատ տուար, շատ խնդրեսցի ի նմանէ»: Այսօր ուրախությամբ պետք է արձանագրել, որ օրըստօրե համալրվում է Ս. էջմիածնի միաբանության թիվը երիտասարդ ու խոստումնալից նոր ուժերով, և ի տես նրանց՝ հոգով խայտում է Վենափառը:

II. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԸ.— Ամենայն Հայոց Հայրապետությունը և մեր եկեղեցական բեմերը կազմում են մի անքակտելի ամբողջություն, մի անբաժանելի միաս-

նություն: Ս. Էջմիածնից հեռու գտնվող մեր հայրենասեր բեմերը ապրում են և ստեղծագործում Ս. Էջմիածնի գաղափարով: Եթե կա մի ուժ, որ այսօր էլ, ինչպես և անցյալում, պահում ու պահպանում է մեր տարագիր ժողովրդին, դա Հայրենիքի գաղափարն է, և որի շեշտողն ու պահպանողը հանդիսացել է մեր Ազգային Եկեղեցին: «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հայության հոգեկան Հայրենիքն է» պանդխտության մեջ բափառող մեր ժողովրդի համար: Եվ իսկապես, ի՞նչը կարող էր վառ պահել նրանց սրտում հայ մշակույթը, հայրենի սրբությունները, ազգային ոգին, եթե ոչ Հայաստանյայց Եկեղեցին:

Ու հայրենասիրությունը մեր հայրապետների, այդ թվում և Գեորգ Զ. Կաթողիկոսի նկարագրի ամենաբնորոշ գծերից մեկն է: Հայրենասիրության զգացմունքը լցրել է մեր ժողովրդի պատմությունը: Հայրենասիրությունը կարմիր թելի նման անցնում է Վեհափառ Հայրապետի կյանքի ու գործունեության միջով: «Հայրենի՞ք, ինչ խո՞ր ազդեցություն ունես դու զգայուն սրտի վերա»,— գրում է նա: Սփյուռքի հայությունը սերտորեն կապվում է իր Հայրենիքին, իր Եկեղեցուն, Վեհափառի հայրենասիրական ոգով ու շնչով:

Վեհափառի հայրենասիրական կոնդակներով Սփյուռքի հայության խոսում է Հայրենիքի ձայնը, Էջմիածնի ձայնը, և որոնց մեջ կա մեր նախնյաց և՛ քաջությունը, և՛ հայրենասիրությունը: Այդ ձայնը ոգեշնչում, առաջնորդում է բոլորին: Վեհափառը ոսկեդեղն կամուրջն է Մայր Հայրենիքի և Սփյուռքի «մերկավ բաժանված» իր հարազատ զավակների միջև: Նրա գահակալության օրերին, ավելի քան երբեմ ամրապնդվեց կապը Մայր Աթոռի և նրա եկեղեցական բեմերի, Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև:

ՎԵՀԱՓԱՌԸ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ.— Պատահականություն չէ, որ այսօր մեր սիրելի Վեհափառը խաղաղության համար պայքարողների առաջին շարքերումն է: Վեհափառի խաղաղասիրությունը բնական ու տրամաբանական հետևանքն է նրա համոզմունքների, հավատի ու հայրենասիրության: Այսօր հայ ժողովուրդը՝ հերոսական պայքարի միջոցով, իր ձեռքն է վերցրել իր սեփական բախտը, իր երկրի ճակատագիրը տնօրինելու իր իրավունքը: Այսօր ավելի քան մի այլ ժամանակ մեր ժողովուրդը կարիքն ունի խաղաղության, որից զուրկ է մնացել հազարամյակներ շարունակ: Խաղաղության շարժումը այսօր ամբողջ աշխարհում վայելում է բոլոր աշխատասեր ու խաղաղասեր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ջերմ համակրանքը: Դրա ապացույցներից մեկը Կորեայում զինադադարի ստորագրումն է հանդիսանում, որը հաղթանակն է ո՛չ միայն հերոսական ու ազատասեր կորեական ժողովրդի, այլ խաղաղության բոլոր ուժերի:

Զինադադարի կնքումը իր հերթին կարող է հանդիսանալ մի հուսալի սկզբնավորություն միջազգային բոլոր բարդ ու անհետաձգելի հարցերի խաղաղ լուծման ճանապարհին: Պետք է վերջ դնել աշխարհում ուժի և ուժեղների քաղաքականության— «մի սուր կվերցնի՝ սրով էլ կընկնի»:

Այսօր ողջ մարդկությունը համոզված է, որ բարի կամքի առկայության և փոխադարձ հասկացողության պայմաններում կարելի է լուծել բոլոր հարցերը և աշխարհում ապահովել բոլորի համար երկարատև ու կայուն խաղաղություն, երբ երկրի վրա կիրագործվի երկնքի արքայությունը, երբ առյուծն ու գառը միասին կհարակեն...:

Բոլոր խաղաղասեր եկեղեցիների և ժողովուրդների հետ, խաղաղություն են հայցում և՛ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և՛ հայ ժողովուրդը՝ և՛ իրենց համար և՛ «վասն ամենայն աշխարհի»: Մեր ժողովուրդը, որ անցյալի իր ողջ պատմության մեջ մի օր անգամ խաղաղություն չի ունեցել, համոզված է, որ կարելի է աշխարհում իրականացնել Աստուծո արքայությունը՝ ժողովուրդների խաղաղ գոյակցությունը, հոգևոր համագործակցությունը: Այդ ոգին են ներշնչել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ու մեր սիրելի Վեհափառը՝ հայ ժողովրդին:

Բայց խաղաղությունը լոկ աղոթքով ու բարի ցանկություններով չի կարող գալ. «Թռունք յափշտակեսցեն զնա», աշխատանք

է պետք նվաճելու համար խաղաղությունը:

1952 թվականին Վեհափառի առաջարկով կայացավ Սովետական Միության բոլոր Քրիստոնեական եկեղեցիների և կրոնական այլ համայնքների Մոսկվայի խաղաղության կոնֆերենցիան, որտեղ դատապարտվեց պատերազմը որպես աստվածային օրենքների կոպիտ խախտում, որպես մարդկության ու Աստուծո դեմ կատարված ամենասարսափելի ոճիր:

«Կգա ժամանակ,— հայտարարել է Վեհափառը,— երբ պատերազմի միտքն ու ծրագիրը կմեռնեն ու կանեանան և մարդկությունը կազատվի նոցա մղձավանջից ու կհանգըստանա»:

Այսպես է մտածում ողջ մարդկությունը, այդ թվում և հայ ժողովուրդը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը բարգմանը հանդիսանալով և՛ Մայր Հայրենիքի և՛ Սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի սրտագին ցանկությունների, նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կարողիկոսի անվանակոչության տոնի առիթով մաղթում է նրան խաղաղ ու ստեղծագործ տարիների արևշատություն, որպեսզի միշտ պայծառ, միշտ նոր ու ճզոր հնչի Վեհափառի խոսքը Ս. Էջմիածնի կամարներից՝ իր սիրելյալ ժողովրդին:

«ԹԱԳԱՒՈՐ ԵՐԿՆԱՒՈՐ, ՁԵԿԵՂԵՑԻ ԲՈՒ ԱՆՇԱՐԺ ՊԱՀԵԱ՛»;

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

(Ճառ՝ խոսված խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի պլենումում, 1953 թվականի սեպտեմբերի 15-ին)։

Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ-ի, բազմադարյան Ս. Էջմիածնի միաբանության և հայ հավատացյալների կողմից ողջունելով խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի պլենումի խորհրդակցողներին և պատվիրյալներին, ցանկանում ենք նրան բեղմնավոր աշխատանք և իր ձեռնարկած մեծ գործին՝ լիակատար հաջողություն։

Հայոց Առաքելական Եկեղեցին, բնական է, չի կարող անտարբեր և անմասն մնալ սույն համաժողովրդական մարդասիրական վեհ նախաձեռնությունից։ Հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ պայքարել է խաղաղության մեծ գործի համար և նահատակվել է օտարների, տիրակալների ու վանդալների դեմ վարած պայքարում, որի հետևանքով ոչնչացվել են կուլտուրայի հոյակապ կոթողներ, ոչնչացել են հայ ազգի պարծանք համարվող արժեքավոր ձեռագրեր և կուլտուրական այլ արժեքներ, հետևաբար, լավ ըմբռնելով պատերազմի արհավիրքներն իրենց ողջ էությամբ, իր հոգևոր դասով միշտ կանգնած է եղել խաղաղության պաշտպանության դիրքերում։ Հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին ամբողջ երկրի առաջավոր մարդկության հետ միասին՝ այժմ ևս պայքարում են խաղաղության մեծ գործի հաջողության համար։ Հայ հոգևորականությունը ի պաշտոնե պարտավոր է խաղաղություն քարոզել թե՛ եկեղեցիներում և թե՛ եկեղեցիներից դուրս։ Նա իր ազդեցության և եկեղեցական արարողությունների մեջ միշտ դրվատել է խաղաղությունը։ Եկեղեցական այդ արարողություններից, որ մշակել են մեր Եկեղեցու հայրապետները, այնքան հայ ժողովրդի հետ միշտ ձգտել ու պայքարել են խաղաղության համար, նշենք որպես օրինակ՝ «Ամենասուրբ Երրորդություն, տո՛ւր աշխարհիս խաղաղություն», կամ թե, ամեն առավոտ և երեկոյան ժամերգության ժամանակ լսվող հետևյալ քարոզը՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչեսուք», այլև՝ «Աղաչեա... զի լուսոցին պատիրաղմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի, աղաչեմք»։

Հայոց Եկեղեցու սիրելյալ Հայրապետն, իր կոնդակներում, ի լուր ողջ աշխարհի, արտահայտել է իր վերաբերմունքը խաղաղությունը պաշտպանելու գործին։ Այդ կոնդակներից մեկում նա ասում է.

«Մենք այսօր իրավունք չունենք լռելու, երբ համայն մարդկության ապագա անվտանգությունը և խաղաղ կյանքի խոստումը ենթակա են վտանգի, և սեպական պատերազմից հոգնած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր թշվառությունների առաջ։

Ամենայն Հայոց Հայրապետի հանձնարարությամբ լայն քարոզչական աշխատանք

է ծավալվել եկեղեցիներում՝ նվիրված խաղաղության գաղափարին։ Ս. Էջմիածնի Տաճարում քարոզներ են խոսվել հետևյալ թեմաներով— «Խաղաղություն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ», «Փա՜ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» և այլն։ Սակայն այս քարոզները չեն սահմանափակվել Մայր Աթոռում, Երևանում, Թբիլիսիում, Բաքվում, այլ ավելի հեռուն, մեր մեծ Հայրենիքից դուրս, արտասահմանում։ Մենք ևս, որպես կաթողիկոսական պատվիրակ, ամենուրեք, ուր որ եղել ենք՝ Թեհրան, Իսպահան, Բեյրութ, Թավրիզ, Կալկաթա, Բոմբեյ, Մադրաս և այլուր, ամեն տեղ, կենտրոնական ու առաջնորդանիստ եկեղեցիներում, հոծ բազմության ներկայությամբ, կոչ ենք արել պաշտպանելու խաղաղությունը։

Հայ Եկեղեցին խաղաղության համար պայքարի ճակատում տվել է իր առաջին անփոխարինելի զոհը՝ նահատակը՝ Արևմտյան Եվրոպայի հայոց կաթողիկոսական պատվիրակ Սյուրմեյան Արտավազդ արքեպիսկոպոսին։

Վեհափառ Հայրապետը 1949 թվականից մինչև այսօր մասնակցել է Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումներին և իր ելույթներով ջերմորեն պաշտպանել է խաղաղության գործը։

Վեհափառ Հայրապետը, Մոսկվայի Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի 1951 թվականի պլենումում, առաջարկություն արեց հրավիրելու Սովետական Միության բոլոր եկեղեցիների և կրոնական համայնքների պետերի խորհրդակցություն, որն ընդունվեց միաձայն և հրավիրվեց 1952 թվականի մայիսի 9-ին Զագորսկ քաղաքում։ Այդ խորհրդակցության մասնակիցները մի կոչ արեցին համայն աշխարհի բոլոր դավանությանց եկեղեցիների պետերին՝ պաշտպանելու խաղաղության գործը։

Վեհափառ Հայրապետը, Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին և Համայն Վրաստանի Կաթողիկոս Կալիստրատը միացյալ դիմում ուղղեցին ամբողջ աշխարհի քրիստոնյաներին։

Հայ Եկեղեցին, իր սկզբնավորության օրից, 302 թվականից ցայժմ տենդագին պայքար է մղել խաղաղությունը հաստատուն հիմքերի վրա դնելու, որպիսի պայքարը պատիվ է բերում Հայ Եկեղեցուն և նրա Գահակալին։

Եվ քանի որ խաղաղությունը մոտ է եղել Հայ Եկեղեցուն և նրա արարողության ու քարոզչության անբաժանելի մասն է կազմում, Հայ Եկեղեցին տասնվեց երկար ու ձիգ դարերի ընթացքում գուրգուրել է Քրիստոնեական Եկեղեցու Ճիմնադրի ավանդած խաղաղության վեհ գաղափարը, ուստի և այսօր, է՛լ ավելի բուռն թափով, նա պաշտպանում է խաղաղության գործը, իր ձայնը միացնում է հարյուր միլիոնավորների ձայնին և խոստանում է կրկնակի եռանդով, իր քարոզչական լայն միջոցներով ոգևորել հավատացյալներին՝ վառ պահելու խաղաղության նվիրական գաղափարը, միաժամանակ պաշտպանելով միջազգային բոլոր վիճելի խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու տեսակետը։

Արդ, մենք մաղթում ենք Փրկչին, որ այցելի պատերազմի հրձիգների ձեռքից տառապող մարդկությանը և Իր խաղաղաբեր Աջը հովանի անի նրա դլխին, շնորհելով նրան մշտական խաղաղություն և անդորրություն, որի կիրառման համար Հայ Եկեղեցին միշտ իր ժողովրդի հետ է։

ՔԱՐՈԶ

ԴԻՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈՂԱՏՅԱՆ

ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ՝

«Եւ սիւնն հրեղէն Կաթողիկէ եկեղեցի Լ. որ ժողովք զամենայն ժողովս ի միաբանութիւն հաւատոց ի ներքոյ թևոցն իւրոց... Իսկ կամարքն, որ ի սեանց անտի ի միմեանս կոպէին՝ այսինքն Լ հաստատութիւն միաբանութեան Կաթողիկէ եկեղեցւոյ»:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Լ 379—381·

Երեկ Հայաստանյայց Ս. Եկեղեցին տոնախմբեց իր հավատքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի «ելն ի վիրապէ» տոնը. այսօր կատնենք Հայոց Եկեղեցիի հիմնարկության տոնը։ Երեկ հաղթանակն էր Լուսավորիչ հոր ջահակրած գաղափարին և քրիստոնեական հավատքին. այսօր այդ գաղափարին ու հավատքին հաստատման ու մշտնջենավորման տոնն է։

Տեսիլքի մը իրագործումն է էջմիածնի Կաթողիկեին հաստատությունը։ Ամեն հայ հավատացյալ գիտե այդ տեսիլքին ներշնչող պատմությունը. խորվիրապային տառապանքը դիմակայող և հայությունը հոգևոր վերածնության մը առաջնորդող խոստովանող առաքյալի մը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքն է ան։

Հայոց Եկեղեցին ուրեմն տեսիլքի մը ծնունդն է։ Հայուն համար երկնավոր պարգև մըն է իր Մայր Եկեղեցին, որովհետև Աստվածորդին ինք, լույսի կերպավորմամբ, իջավ Արարատյան դաշտին վրա ու հիմնեց դայն։ Լուսավորիչ կպատմե. «Եւ իմ նայեցեալ տեսի բացեալ զհաստատութիւն երկնից ... և լոյս հոսեալ վերուստ ի վայր մինչև յերկիր հասանէր»։ Եվ այդ լույսին հետ՝ «Զօրք անչափք լուսեղէնք երկնեանքն»։

Այսպես, էջմիածինը հայուն Հայրենիքին կեդրոնը՝ Արարատյան աշխարհին մեջ հիմնվեցավ. Արարատը եղած էր մեր որորանը և Հայրենիքը, հայուն կազմակերպության և զարգացման հանդիսավայրը, ուստի նույն Արարատը պետք էր, որ Ս. Էջմիածնով հանդիսանար հայուն հոգեկան վերածնության կեդրոնը, հայուն իսկական Հայրենիքը։ Եվ այդ կեդրոնեն ամբողջ Հայությունը պիտի ստանար իր լույսն ու առաջնորդությունը. ու հիրավի՞ այդպես ալ եղավ դարերու ընթացքին։ Հայը աշխարհի ո՞ր կողմն ալ գնաց, միշտ նայեցավ էջմիածնին իբրև իր լույսի և հույսի փարոսին, փրկության խարիսխին։ Էջմիածին և հայ ժողովուրդ, առընթերադրված իրարու, հոգեկան անքակտելի միություն մը կազմավորեցին։

Հատկանշական են Ագաթանգեղոսի սա՝ խոսքերը տեսիլքի պատմության վերաբերությամբ.

«Եւ սիւնն հրեղէն Կաթողիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովս ի միաբանութիւն հաւատոց ի ներքոյ թևոցն իւրոց։

1. Խոսված Բեյրութի ռադիոկայանեն, Ս. Էջմիածնի տոնին առիթով, 1958 հոկտեմբի 7-ին։

Եւ տեղին այն լիցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և Աթոռ Քահանայութեան։

Իսկ կամարքն, որ ի սեանց անտի ի միմեանս կապէին, այսինքն է հաստատութիւն միաբանութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ։

Եկեղեցին քրիստոնյա հավատացյալներուն ժողովն է, միությունը։ Անոր բոլոր անդամները կապված են իրարու սուրբ սիրով, հոգեռանդն հավատքով և փոխադարձ օգնության ոգիով։ Հայաստանյայց Եկեղեցին, իր առանձնահատուկ հորինվածքով և կերպավորմամբ, միությունն է բոլոր հայ հոգիներուն, որոնք մասնակից են աստվածային սիրո կյանքին, որոնք իրար կապված են նույն հավատքով և ավանդությամբ, նույն ծեսով և վարդապետությամբ, և որոնք հավատարիմ մնացած են հայության ոգիին։ Այդ միության «հրեղեն սյունը» «Կաթողիկէ Եկեղեցիոն է, աստվածահաստատ Ս. Էջմիածինը, որ իր թևերուն ներքև կհավաքե ամբողջ հայությունը, զի միաբանութիւն հաստատցի»։ Անոր կամարները կերկարաձգվին Արարատյան աշխարհեն անդին՝ շա՜տ հեռուները, հայ հոգիով ու հավատքով ապրող հայ մարդերը իրար կապելով ու ճշմարիտ հայ տաճարներ հորինելով։

Մոտ 17 երկար դարեր Ս. Էջմիածինը իր Հայրապետական Գահով հանդիսացավ հայության հոգևոր միության կեդրոնը, ազգային ամբողջականության, հարատևության և դոյատևման խորհրդանշանը։ Անոր ձայնը հեռվեն խրախուսեց մեզ, անկե ճառագայթող շողերը լուսավորեցին մեր հոգիները, ան եղավ դանձարանը հայուն մտքին ու հոգիին շնորհներուն, ու մեր փրկության ապավենը՝ մեր արյունոտ պատմության մեջ։

Եղան ժամանակներ անասելի աղետներով արկածավորված, երբ տառապեցավ Էջմիածինը, հեծեց, ամայացավ վայրագ թշնամիներն և բարբարոս հորդաներու։ Անոնք ամենքն ալ «հաղթական» վերադարձան։ Ո՞ւր են այդ հաղթողները... Սակայն կանգուն է հայության կաթողիկեն, քրիստոնեության անդրանիկ Տաճարը, որովհետև մարդիկ չէին դայն հաստատողը, այլ՝ Միածինը՝ Աստվածորդին։ Հայ ժողովուրդը սրտեռանդն կհավատա, թե ո՛վ որ Ս. Էջմիածնի դեմ բռունցք կրարձրացնե՝ կխորտակվի անպայման, և ո՛վ որ մոռնա Էջմիածինը՝ կձուլվի, կմեռնի՞ առհավետ։ Երբ ուրիշ վայրեր շինվեցան կաթողիկոսարաններ փառավոր տաճարներով, լուսավորչակրոն հայությունը՝ այսինքն ամբողջ հայ ազգը միշտ կապված մնաց Ս. Էջմիածնի անունին, անոր պատկերին ու գաղափարին հանդեպ շարունակ պահեց իր սերն ու պատկառանքը։ Ս. Էջմիածինը հայության հոգին է։ Այդ հոգին հավերժական է։ Ս. Էջմիածինը հայոց Մայր Կաթողիկեն է. այդ Կաթողիկեն հավերժական է։ Ու հայ ժողովուրդը կապված է այդ հավերժության։

Դժբախտաբար մեր մեջ պակաս չեն մարդեր, որոնք բուն հավերժության՝ Հայոց Մայր Եկեղեցիին՝ իրենց փրկության ապավենին կապվելու տեղ, իրենց ամբարտավանությամբ և անխոհեմությամբ կջանան հորինել աշխարհային փառքերու կեղծ՝ հետևվարար անցավոր հավերժություններ, որոնք հաճախ արդելք կհանդիսանան հայուն՝ իր իսկական նպատակի իրագործման։

Հայաստանյայց Մայր Եկեղեցին է հայ ժողովուրդի հոգեկան և բարոյական զորության ակնաղբյուրը։ Այդ նվիրական հաստատությունն է, որ դարերու տառապանքի յուվին մեջ, մեր ժողովուրդի գոյության սպառնացող վայրկյաններուն, կրցավ հայության ցիրուցանված մասերը իրար միացնել, հոգեկան ներքին միություն ստեղծելով անոնց մեջ, խմբեց զանազան տարրերը նույն գաղափարին շուրջ։ Հայաստանյայց Մայրենի Ս. Եկեղեցին էր, որ կրցավ կամրջել քաղաքական տարբեր տեսակետներով և մտայնություններով սնած և իրարմե պառակտված հատվածները։ Եվ այսօր աշխարհագրական հեռավորությամբ ցիրուցանված այն դժընդակ դրության մեջ, ուր կապրի ու կգործե հայ ժողովուրդը, Հայաստանյայց Եկեղեցին է, որ կրնա իրականացնել ազգային ինքնավարության, ինքնակացության, այսինքն ամբողջական միության սրբազան գործը։ Պետք չունինք, ի հաստատություն այս նկատառությանց, հեռուները դեգերելու. մեր պատմությունը և մեր առօրյա իրականությունը ցույց կուտան այդ փաստերը։

Մեր Եկեղեցիի հովանիին տակ միայն, մեր նախնիքներու հոգիին հետ ընդմիշտ հաղորդվելով, պիտի կարենանք ձուլումի, ազգային անհասկացողությանց ու զանազան փորձությանց դեմ դնել։ Մանավանդ մեր ժամանակն ու մեր միջավայրը լեցուն են մեր ազգային և կրոնական ինքնուրույնությունը եղծող վտանգավոր հրապույրներով։ Բարեգործության և դաստիարակության երևույթին ներքև քողածածուկ կրոնական մարդասիրությունը վարագուրված ծուղակներով, թե ինչպիսի՞ ջլատող և քանդիչ կացություն մը կստեղծե հայության մեջ՝ ծանոթ պետք է ըլլա ամենուն։

Սեր, պատկառանք, հնազանդություն և ծառայություն. այս վերաբերմունքը պետք է ունենա յուրաքանչյուր հայ իր Մայրենի Եկեղեցիին հանդեպ, Ս. Էջմիածնի և անոր աստվածարյալ Գահակալին հանդեպ։ Այս վերաբերմունքը ունենալու է ո՛չ միայն աշխարհական դասը իր զանազան հատվածական բաժանումներով, այլ մասնավորաբար հայ հոգևորականությունը։ Ան պետք է սիրե իր Մայրենի Ս. Եկեղեցին անասելի սիրով մը, նվիրվի անոր պայծառացման, ու եթե հարկը պահանջե, իր արյունն իսկ թափե անոր հավերժ պահպանման համար։ Բարձրաստիճան հոգևորականությունը մանավանդ պարտի հեռու մնալ փնթփնթակամ արարքներե, զգուշանալ որևե ձեռնարկե և կարգադրություններե, որոնք կրնան շեղում առաջ բերել մեր սրբազան հայրերու նվիրական օրենքներեն ու կանոններեն։

Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնը բոլորիս կրերե նվիրական պատգամ մը. ինչպես հավերժական Ս. Էջմիածնի սրբատաշ քարերը միացած են իրարու հաստատուն շաղախով ամուր և դիմացկուն, և զոր դարերու փոթորիկներն ու վայրագ ձեռքերը չեն կրցած խորտակել, մենք՝ Հայկազնյան զարմին հարազատներս, պետք է հոգեկան նման շաղախով կապվինք մեր Եկեղեցիին, մեր Ս. Էջմիածնին, մեր հավատքին, մեր Արարատին, մեր մշակույթին և հայրենի ավանդություններուն, որպեսզի ո՛չ մեկ զորություն կամ ուժ կարենա մեզ անոնցմե բաժնել։

Էջմիածի՛ն, սուրբ և փարելի՛ անուն, ձեռակե՛ռ Աստվածորդվույն, Դուն մեր լույսն ես, մեր փառքը, մեր ապավենը, մեր փրկությունը, մեր Սրբություն Սրբոցը. Քու տեսիլքիդ առջև կանգնած ենք ահա ու մեր հոգիին բովանդակ սիրովն ու երկյուղածությամբը կհայցենք Երկնավոր Հորմեն՝ «Միշտ անշարժ պահեա՝ զԱրոռ Հայկազնեայց»։



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՑՔԱՐԻ ԺԱԿԱՏՈՒՄ

ՖՐԵԴԵՐԻԿ ԺՈԼԻՈ-ԿՅՈՒՐԻԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊՐԱԳԱ, 1 օգոստոսի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային խորհրդի քարտուղարությունը մամուլում հրապարակելու համար հանձնել է Խաղաղության Համաշխարհային խորհրդի նախագահ Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրիի հայտարարությունը, որի մեջ ասվում է.

Կորեայում զինադադարի ստորագրումը երկրագնդի բոլոր ժողովուրդներն ընդունեցին բերկրանքով, որովհետև դա խաղաղության մեծ հաղթանակն է։ Կորեական ժողովրդի այդ հաղթանակը ձեռք է բերված մեծ զոհերի ու տառապանքների գնով։ Դա նաև հարյուր միլիոնավոր տղամարդկանց և կանանց հաղթանակն է, որոնք բոլոր երկրներում հարատև ուժով պահանջում էին այդ պատերազմի ավարտումը։ Զինադադարի ստորագրումը կրակը անհապաղ դադարեցնելու պահանջի արդյունքն է, այն պահանջի, որը ձևակերպվեց ժողովուրդների Վիեննայի կոնգրեսում։ Մեծ նշանակություն ունեցող այդ իրադարձությունը հաստատում է, որ ճիշտ ու ժամանակին էր Խաղաղության Համաշխարհային խորհրդի կոչը, որը պնդում է, թե բանակցությունները և համաձայնությունը հնարավոր են։

Զինադադարի ստորագրումը, որը ձեռք բերվեց՝ չնայած բազմաթիվ դժվարություններին, չնայած ամեն տեսակ օբստրուկցիաներին, ներկայումս ավելի ակներև է դարձնում, որ հնարավոր են բանակցություններն ու համաձայնությունները մյուս կոնֆլիկտների կամ վիճելի հարցերի խաղաղ կարգավորման համար։

Այդ առաջին արդյունքը, այսպիսով, իրենից ներկայացնում է հզոր ազդակ՝ բանակցությունների օգտին կամպանիա մղելու համար, որի սկիզբը դրել է Խաղաղության Համաշխարհային խորհրդի կոչը։ Կասկած չկա, որ հասարակական կարծիքի ճնշումը ներկայումս կդրսևորվի աճող ուժով, որպեսզի պահանջի կարգավորելու բոլոր մյուս պրոբլեմները, ինչպես, օրինակ, Վիետնամում պատերազմի ավարտումը։ Սակայն պետք է նշել նման կարգավորմանը ցույց տրվող համառ օպոզիցիան։ Ինչ վերաբերում է Կորեային, ապա հնարավոր է, որ կձեռնարկվեն նոր փորձեր՝ վիժեցնելու ձեռք բերված համաձայնությունը, կամ խանգարելու այնպիսի նոր համաձայնությունների կնքմանը, որոնք նպատակ կունենան ապահովել տրդարացի խաղաղությունը այդ շրջանում։

Հետևաբար, չափազանց կարևոր է, որպեսզի ամենուրեք շարունակվի այն գործունեությունը, որը ձգտում է արագացնել բանակցությունները և տապալել այն մեքենայությունները, որոնց նպատակն է հետաձգել բանակցությունները կամ խոչընդոտ հարուցել նրանց հաջող ավարտմանը։ Դրանումն է կայանում Խաղաղության Համաշխարհային խորհրդի կոչի հիման վրա մղվող կամպանիայի նշանակությունը։

Բանակցությունների օգտին այդ կամպանիան ներկայումս ծավալվել է երկրագնդի ղեկավար երկրներում և ունի բազմազան ձևեր։ Այդ կամպանիան հնարավորություն է տալիս անցկացնել ամենատարբեր միջոցառումներ, որոնք ելնում են ոչ միայն խաղաղության պաշտպանության ազգային շարժումներից, այլև այն կազմակերպություններից ու ասոցիացիաներից, որոնք արտահայտվում ու գործում են նույն ոգով։

Խաղաղության Համաշխարհային խորհրդի Բյուրոն, որը կգումարվի մոտ ժամանակներս, կուստանդնոպիրի ձեռք բերված առաջին արդյունքները։ Ես կարծում եմ, որ նա կանի

այնպիսի հետևություններ, որոնք թույլ կտան մեկ նպատակի՝ խաղաղության նպատակին հասնելու համար միավորել բոլոր նրանց, ովքեր այսօր գործում են հօգուտ բանակցությունների։ Այդ կամպանիայի նպատակն է ստեղծել միջազգային դրության լարվածության իսկական թուլացման պայմաններ։ Կուրեայում կնքված զինադադարը, ինչպես նաև բարձրագույն ոլորտներում մեծ տերությունների հանդիպման հավանականությունը, որ խոստովանում են որոշ կառավարություններ, հանդիսանում են այն տարրերը, որոնք ցույց են տալիս, թե այսօր այդ նպատակը մոտիկ է։

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 2 օգոստոսի 1953 թ.)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԸ

Օգոստոսի 31-ին Մոսկվայում, Միությունների Տան Հոկտեմբերյան դահլիճում կայացավ Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընդլայնված պլենումը, մասնակցությամբ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական, երկրամասային և մարզային կոմիտեների ներկայացուցիչների։ Պլենումին ներկա էին նաև հասարակական զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության ու կուլտուրայի գործիչներ, արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորներ, խաղաղության համար մղվող պայքարին սովետական ժողովրդի ակտիվ մասնակիցներ։

Պլենումը բացեց Ի. Էրենբուրգը, հայտնելով, որ նրա նպատակն է քննարկումը այն հարցի, թե խաղաղության սովետական մարտիկները ինչպես կարող են նպաստել խաղաղության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիայում ընդունված որոշումների իրականացմանը։

Պլենումի օրակարգն է՝ խաղաղության Համաշխարհային խորհրդի սեսիայի արդյունքները և ՍՍՌՄ-ի խաղաղության պաշտպանության կոմիտեների խնդիրները։

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահ Ն. Ս. Տիխոնովը, մանրամասն լուսաբանելով խաղաղության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիայի արդյունքները, որը նոր ուղիներ նշեց բոլոր միջազգային տարաձայնությունների խաղաղ կարգավորման համար մղվող պայքարում և նպաստեց խաղաղության կողմնակիցների ճակատի ընդլայնմանն ու ամրապնդմանը։

Զեկուցողը շեշտեց միջազգային վիճելի հարցերը ուժի փոխարեն բանակցությունների միջոցով լուծելու գիտակցության հետզհետե ավելի ուժեղ ամրապնդումը ժողովուրդների մեջ և մանրամասն ծանրացավ այդ ուղղությամբ խաղաղության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիայի ընդունած Դեկլարացիայի վրա։ Նա անդրադարձավ նաև սեսիայի ընդունած դիմումին, որով կոչ է արվում ժողովուրդներին՝ իրենց կառավարություններից պահանջել, որ նրանք բանակցությունների միջոցով համաձայնության գան։

Զեկուցողը բացատրեց, թե ինչպես լայնորեն և տարբեր ձևերով ծավալվում է պատանի երկրներում բանակցությունների օգտին մղվող համաշխարհային շարժումը։ Այդ շարժումը լայն արձագանք և պաշտպանություն է գտնում միջազգային զանազան դեմոկրատական կազմակերպություններում։

Ն. Ս. Տիխոնովն ընդգծում է խաղաղության կողմնակիցների շարժման ձեռք բերած որոշակի հաջողությունները, ինչպիսին Կուրեայում կնքված զինադադարն է, որը, սակայն, ամրապնդվելու համար կարիք ունի խաղաղության մարտիկների աչալուրջ հսկողությանը, որպեսզի չարակամ ուժեր նորից հրդեհ չարծարծեն։

Զեկուցողը ընդգծում է սովետական ժողովուրդների մեծ դերը խաղաղության պաշտպանության և ամրապնդման գործում և թվարկում Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականության ներքին և արտաքին բարերար արդյունքները։

Ն. Ս. Տիխոնովը հայտնում է, թե սովետական մարդիկ պատրաստ են բոլոր միջազգային հարցերը բանակցությունների միջոցով կարգավորելու օգտին պայքարն ընդլայնելու և այն ակտիվորեն պաշտպանելու։

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեն, հայտարարում է Ն. Ս. Տիխոնովը, համոզմունք է հայտնում, որ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական, մարզային և երկրամասային կոմիտեները իրենց ընդլայնված պլենումներում, տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կքննարկեն իրենց խնդիրները խաղաղության

Համաշխարհային Խորհրդի որոշումների լույսի տակ, որ այդ որոշումները կքննարկվեն աշխատավորների ժողովներում՝ յուրաքանչյուր ձեռնարկությունում, կոլտնտեսությունում, հիմնարկությունում, ուսումնական հաստատությունում։

Բոլոր երկրների ժողովուրդների հայացքները, վերջում ասում է զեկուցողը, ուղղված են Սովետական Միությանը՝ մեր խաղաղասեր տերությանը, որը անսասանորեն վարում է պատերազմը կանխելու և խաղաղությունը պահպանելու քաղաքականություն։ Սովետական ժողովուրդը չի է վստահությամբ իր ուժերի նկատմամբ։

Պատերազմի ուժերը պետք է նահանջեն։ Բո՛ղ ամբողջ աշխարհում հաղթանակի խաղաղ բանակցությունների ոգին։

Մաքերի փոխանակությունն ավարտվելուց հետո պլենումը միահամուռ կերպով հավանություն տվեց Ն. Ս. Տիխոնովի զեկուցման վերաբերյալ բանաձևին և որոշեց այս տարվա դեկտեմբերին հրավիրել խաղաղության կողմնակիցների հինգերորդ համամիութենական կոնֆերենցիան։

(Քաղված «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»ի 1953 թվականի սեպտեմբերի 1-ի ՏԱՍՍ-ի հաղորդագրությունից)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Վիեննա, 11 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոն իր սեսիայում ընդունեց հետևյալ բանաձևը.

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոն, որ հավաքվել է պատերազմական գործողությունները Կորեայում դադարեցնելուց հետո առաջին անգամ, ողջունում է խաղաղության գործի այդ հաղթանակը։

Բյուրոն քննարկեց Խաղաղության Համաշխարհային Խորհրդի կողմից 1953 թվականի հունիսի 20-ին սկսված կամպանիայի ընթացքը. Խորհուրդը ժողովուրդներին կոչ էր արել պահանջել իրենց կառավարություններից, որպեսզի նրանք ձեռնամուխ լինեն բանակցությունների մեջ մտնելու և համաձայնության գալու իրար հետ։ Այդ կոչի նկատմամբ հասարակական կարծիքի վերաբերմունքը ցույց է տալիս, որ Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը արտահայտել է մարդկության խոր իղձերը։ Այսօր պետական ոչ մի գործիչ չի համարձակվում այլևս բացեիրաց առարկել բանակցությունների դեմ։

Սակայն վերջին ժամանակների իրադարձությունները Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոյի վրա պարտականություն են դնում ժողովուրդներին զգոնության կոչել։ «Բանակցություններ» բառը չափազանց հաճախ է կիրառվում միջազգային վեճերի խաղաղ լուծման դեմ ուղղված միջոցառումները քողարկելու համար։ Առաջ քաշել նախնական պայմաններ և ցանկանալ վազքուռք պարտադրելու բանակցությունների ձևն ու բովանդակությունը՝ չի նշանակում բանակցություններ վարել։ Այն ձգտումը, որ Կորեայի վերաբերյալ բանակցությունների նախորդի սեպարատ պայմանագրի կնքումը Լի Սին Մանի հետ, որը հրաժարվել է զինադադարից, Հնդկաստանին թույլ չտալ մասնակցելու քաղաքական կոնֆերենցիային, Գերմանիայի վերաբերյալ որևէ բանակցություն բացվելուց առաջ պահանջել դերմանական միլիտարիզմի վերածնման համաձայնություն՝ դա նշանակում է ցանկանալ, որ համաձայնությունը անհնար դառնա։

Մենք ժողովուրդներին կոչ ենք անում թույլ չտալ, որ որևէ պատրվակով վերսկսվի պատերազմը Կորեայում և հասնել նրա դադարեցմանը Հնդկաչինում։ Ասիայում և Աֆրիկայում շատ ժողովուրդների անվախության և անվտանգության դեմ իրականացվող բռնի գործողությունները պետք է դադարեցվեն հօդուտ խաղաղության շահերի։

Ժողովուրդները չեն համաձայնի, որպեսզի Գերմանիայում վերածնվի պատերազմի օջախը, որը սպառնալիքի տակ կդներ Գերմանիայի բոլոր հարևանների, իրենց՝ գերմանական ժողովրդին և ամբողջ աշխարհի խաղաղությունը։

Ժողովուրդները ցանկանում են անկեղծ բանակցություններ, բոլոր բնագավառներում ամենքի համար ընդունելի որոշումների հիման վրա համաձայնության հասնելու անկեղծ ձգտում։

Նրանք պահանջում են պահպանել ՄԱԿ-ի Կանոնադրությունը։ Նրանք պահանջում են, որպեսզի Չինական Ժողովրդական Հանրապետությունը ունենա Միավորված Ազգերի Կազմակերպությունում, որի իրավունքը նա ունի։ Նրանք գտնում են, որ միջազգային կարևոր պրոբլեմների լուծումը և խաղաղության հաստատումը ձեռք բերվել չեն

կարող առանց Չինաստանի մասնակցության։ Այն սարսափելի վտանգը, որ մարդկության համար ներկայացնում է ջրածնային ռումբը, պահանջում է անհապաղ արդելել մասսայական ոչնչացման ամեն մի զենք։

Ռազմական ծախսերի անտանելի և վտանգավոր բեռը պետք է թեթևացվի զինաթափման վերաբերյալ միջազգային համաձայնության միջոցով։ Ժամանակն է հավասար սկզբունքներով վերականգնել առևտուրը բոլոր երկրների միջև՝ նրանց փոխադարձ շահավետության և բոլորի կենսապայմանների արագ բարելավման համար։ Ժամանակն է վերականգնել համագործակցությունը բոլոր երկրների միջև։ Անհրաժեշտ է մարդկության առաջ բաց անել նոր հեռանկարներ։

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուրոն վստահությամբ դիմում է ժողովուրդներին, որոնք կարողացան զինադադարի հասնել Կորեայում։ Նա նրանց կոչ է անում միավորվել և կոորդինացնել իրենց ջանքերը՝ ուժի քաղաքականությունը վիժեցնելու և կառավարությունների միջև համաձայնության հասնելու համար։

Վիեննա, 10 սեպտեմբերի 1953 թ.

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 16 սեպտեմբերի 1953 թ.)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԸ

Սեպտեմբերի 15-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված պլենումը հասարակական, սովետական, պրոֆմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Պլենումը քննության առավ Խաղաղության պաշտպանության Համաշխարհային Խորհրդի Բուդապեշտի սեսիայի և Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի ընդլայնված պլենումի բանաձևերը։

Բացելով նիստը, Հայաստանի Պրոֆեսիոնալ միությունների խորհրդի նախագահ ընկ. Կ. Ռուխիկյանը այդ հարցի մասին զեկուցման համար խոսքը տալիս է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, Խաղաղության պաշտպանության հայկական ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ ընկ. Վ. Համբարձումյանին։

— Վերջին շրջանում,— ասում է զեկուցողը,— միջազգային հարաբերությունների ընդգավառում երևացել են գոյություն ունեցող լարվածության մեղմացման որոշ նշաններ։ Սովետական կառավարության այն հայտարարությունը, թե այսօրվա միջազգային դրության ամեն մի վիճելի կամ չլուծված հարց կարող է լուծվել խաղաղ ճանապարհով, ոգեշնչում է աշխարհի բոլոր խաղաղասեր մարդկանց, որ ավելի ուժեղացնեն պայքարը նոր պատերազմի նախապատրաստման դեմ՝ խաղաղության գործի հաղթանակի համար։ Սովետական կառավարության այդպիսի դիրքը հարյուր միլիոնավոր մարդկանց առաջ բացահայտում է այն պարզ ճշմարտությունը, որ պատերազմը անխուսափելի չէ, որ պատերազմի ձգտում են միայն հանցավոր ռեակցիոն տարրերը կապիտալիստական երկրներում, որոնց համար պատերազմը բացում է նոր շահույթների հեռանկարներ։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն կանգ է առնում Խաղաղության պաշտպանության Համաշխարհային Խորհրդի սեսիայի, ինչպես նաև Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումի բանաձևերի վրա։ Սովետական ժողովուրդը միահամուռ կերպով հավանություն է տալիս այդ բանաձևերին և՛ լ ավելի ուժեղացնում է իր պայքարը խաղաղության գործի ամրապնդման համար ամբողջ աշխարհում։

Ամբողջ սովետական ժողովուրդը համամիտ է իր կառավարության այն տեսակետին, որ գոյություն չունեն այնպիսի վիճելի և չլուծված միջազգային հարցեր, որոնք հնարավոր չէ լուծել, կարգավորել խաղաղ ճանապարհով։ Սովետական Միությունում ամենուրեք տեղի են ունենում աշխատավորների բազմամարդ ժողովներ, որոնք միահամուռ կերպով հավանություն են տալիս Խաղաղության պաշտպանության Համաշխարհային Խորհրդի սեսիայի որոշումներին և Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումի բանաձևին։

Խաղաղության պաշտպանության Համաշխարհային Խորհրդի սեսիայի բանաձևը լայն արձագանք գտավ ողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկության շրջանում։ Գնալով ամրապնդվում է խաղաղության կողմնակիցների լագերը, ակտիվանում է պայքարը խաղաղության պաշտպանության համար։ Ֆրան-

սիայում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Բրազիլիայում, Ցապոնիայում, Չիլիում, Հնդկաստանում և այլ երկրներում։

Սակայն խաղաղության լագերի ակտիվացման հետ միասին ակտիվանում է միջազգային ռեակցիան՝ ամերիկա-անգլիական ագրեսորների գլխավորությամբ։ Այդ մասին են վկայում բունդեստագի վերջին ընտրությունները Արևմտյան Գերմանիայում, կորեական ժողովրդի ոխերիմ թշնամի, ամերիկյան իմպերիալիզմի հլու կամակատար Լի Սին Մանի ռազմատենդ ձգտումները։

Խաղաղության կողմնակիցները համախմբում են իրենց ուժերը հակահարված տալու միջազգային ռեակցիայի ոտնձգություններին, ուժեղացնելու պայքարը ամբողջ աշխարհում խաղաղության գործի ամրապնդման համար, միջազգային բոլոր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար։

— Մեր կոմիտեի խնդիրն է,— ասում է զեկուցողը,— յայն կամպանիա կազմակերպել ռեսպուբլիկայում հօգուտ այդ բանաձևերի, հօգուտ խաղաղության պաշտպանության։ Սովետական ամբողջ ժողովրդի հետ միասին հայ ժողովուրդը իր ձայնն է բարձրացնում պահանջելով բոլոր երկրների կառավարություններից խաղաղ ճանապարհով լուծել գոյություն ունեցող միջազգային հարցերն ու տարաձայնությունները։ Երկար դարերի ընթացքում մեր ժողովուրդը ենթարկվել է օտարերկրյա զավթիչների հարձակումներին, որոնք հսկայական վնասներ են հասցրել մեր երկրին։ Միայն սովետական կարգերի հաստատումը հնարավորություն տվեց հայ ժողովրդին անցնել խաղաղ շինարարական աշխատանքի, զարգացնելու և չտեսնված բարձունքների հասցնելու իր տնտեսությունը, կուլտուրան։ Ահա թե ինչու հայ ժողովուրդը, սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին, բարձր է գնահատում խաղաղությունը, իր ամբողջ էությամբ դեմ է պատերազմին։

Զեկուցումը վերջացած է։ Առաջինը խոսք է վերցնում դրող Դ. Դեմիրճյանը։

— Խաղաղության գաղափարը անսահման ուժեղ է և մարդկանց սրտերին՝ հարազատ։ Ահա թե ինչու այդ գաղափարը նվաճում է նորանոր կողմնակիցներ ամբողջ աշխարհում։ Աճում, ամրապնդվում և հզորանում է խաղաղության կողմնակիցների լագերը՝ Սովետական Միության գլխավորությամբ։ Սովետական ժողովուրդը, այդ թվում և հայ ժողովուրդը, խաղաղության պաշտպանությունը տեսնում է իր շինարար, ստեղծագործական աշխատանքի մեջ։ Նա ամբողջովին միանում է միջազգային հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու պահանջին։

Ամբիոնի մոտ է Երևանի Կիրովի անվան գործարանի առաջավոր բանվոր Ա. Ղարիբյանը։

— Մեր գործարանի աշխատողները,— ասում է նա,— ամբողջ սրտով պաշտպանում և հավանություն են տալիս հարազատ Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությանը, որովհետև խաղաղությունն ամրապնդում է մեր երկրի հզորությունը։ Համակված խաղաղության պաշտպանության ձգտումներով, մեր գործարանի կոլեկտիվը աշխատում է անձնվիրաբար և ընթացիկ տարվա անցած ութ ամսվա բոլոր արտադրական առաջադրանքները կատարել է պատվով։

Խոսք է վերցնում ՍՍՌՄ Բժշկական ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանը։

— Չկան այնպիսի հարցեր,— ասում է նա,— որ կարելի չլինի լուծել խաղաղ ճանապարհով, չկան այնպիսի հարցեր, որոնց լուծման ժամանակ բռնի ուժը գերազանցի իրավունքին։ Բարի կամքի տեր բոլոր մարդիկ չեն ցանկանում մարդկության կուտակած կուլտուրական արժեքների ոչնչացումը, մասսայական կոտորածներ։ Մեզ՝ գիտության աշխատողներիս համար առանձնապես ցավալի է այն, որ համաշխարհային ցնցումների կազմակերպիչները գիտության մեծ նվաճումներն օգտագործում են ոչ թե մարդկության երջանկության ու բարօրության համար, այլ ռազմական կործանարար նպատակների համար։ Կապիտալիստական երկրներում գիտության մեծագույն հայտնագործությունները պատերազմի հրձիգների ձեռքում դառնում են մարդկության համար իսկական դժբախտություն։

— Ի հակադրություն նոր պատերազմի հրձիգների,— շարունակում է ընկ. Հովհաննիսյանը,— աճում և ամրապնդվում է խաղաղության կողմնակիցների լագերը։ Մարդկության պատմությունն անցյալում երբեք չի տեսել կոլեկտիվ համերաշխության այնպիսի հզոր արտահայտություն, ինչպիսին է խաղաղության կողմնակիցների շարժումն ամբողջ աշխարհում։ Այդ լագերը կհաղթի պատերազմի հրձիգներին և կնվաճի խաղաղությունը։ Հավանություն տալով խաղաղության պաշտպանության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիայի և խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պլենումի բանաձևերին, մեր ռեսպուբլիկայի աշխատավորները եռանդուն պայքար կծավալեն հօգուտ խաղաղության պաշտպանության։

խոսքը տրվում է Արտաշատի շրջանի Ն. Դվին գյուղի «Շինարար» կոլտնտեսության օգակավարուհի, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Վիկտորիա Մարգարյանին։

— Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը,— ասում է նա,— ջերմորեն հավանություն է տալիս խաղաղության պաշտպանության Համաշխարհային խորհրդի Բուդապեշտի սեսիայի և խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումի բանաձևերին։ Հայաստանի կոլտնտեսականները ոչ մի ջանք չեն խնայի պայքարելու կայուն և տևական խաղաղության համար։

Մեր պարտիան և Սովետական կառավարությունը ստեղծել են բոլոր պայմանները ապահովելու սովետական ժողովրդի խաղաղ ստեղծագործ աշխատանքը։ Այդ մասին են մի անգամ ևս վկայում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի վերջին պլենումի որոշումները սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին և ՍՍՌՄ Գերագույն Սովետի հինգերորդ սեսիայի ընդունած օրենքը գյուղատնտեսական հարկի մասին։ Այդ երկու փաստաթղթերը կրկին ու կրկին ապացուցում են Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությունը։ Ամբողջ աշխարհի աշխատավոր ժողովուրդների համար պարզ է Սովետական կառավարության այդ քաղաքականությունը, որի նպատակն է ամեն կերպ բավարարել ժողովրդի անընդհատ աճող նյութական ու կուլտուրական պահանջմունքները։ Այդ քաղաքականությունը հանդիսանում է մեր պետության խաղաղ ձգտումների լավագույն վկայությունը և արժանանում է բոլոր սովետական մարդկանց ջերմ հավանությանը։

Ամերիկա-անգլիական ագրեսորներին չի հաջողվի աշխարհի ժողովուրդներին քաշել արյունալի նոր սպանդի մեջ։ Խաղաղության ուժերը՝ Սովետական Միության գլխավորությամբ կհաղթանակեն և կապահովեն տևական խաղաղությունը ամբողջ աշխարհում։

Նշույթ է ունենում Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի կոմսոմոլի կոմիտեի քարտուղար Ռոզա Սուլուտյանը։ Նա ասում է.

— Սովետական երիտասարդությունը դեմ է պատերազմին, նա ամբողջովին միանում է խաղաղության պաշտպանության Համաշխարհային խորհրդի սեսիայի և խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումի բանաձևերին։

Խաղաղության պաշտպանության Համաշխարհային խորհրդի սեսիայի և խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումի բանաձևերի օգտին ջերմ ելույթներ ունեցան տեղական արդյունաբերության բանվորների պրոֆմիության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ ընկ. Ց. Խուդոյանը, ուսուցիչ Ա. Մնացականյանը։

Խաղաղության պաշտպանության Սովետական և Ռեսպուբլիկական կոմիտեների անդամ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.-ի հանձնարարությամբ հիշյալ բանաձևերի պաշտպանության օգտին ճառով հանդես եկավ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

Կանանց անունից ելույթ է ունենում բանաստեղծուհի Մարո Մարգարյանը։

—Աշխարհի բոլոր մայրերը,— ասում է նա,— իրենց կյանքը չեն խնայի խաղաղության համար։ իրենց երեխաների երջանկության համար։

Մ. Մարգարյանը խոսքն ավարտում է խաղաղությանը նվիրված իր նոր բանաստեղծության արտասանությամբ։

Այնուհետև պլենումը ընդունում է բանաձև, որն ընթերցում է բանաստեղծ Ն. Զարյանը։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 16-ին, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ. Այդ օրը, և դրանից դեռ մի քանի օր առաջ, շրջակա գյուղերից և քաղաքներից Ս. Էջմիածին ուխտի էր եկել հավատացյալների մեծ բազմություն։

Օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Գեորգ վարդապետ Վաթյանը։

Սուրբ պատարագից հետո գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը զգեստավորված, «Հրաշափառ Աստուածածնի» շարականի խրոխտ հնչյունների տակ, բարձրանում է ավագ սեղանի բեմը և ապա Սրբազանի հանդիսաղորությամբ սկսվում է խաղողօրհնության հանդիսավոր արարողությունը։

Ամանդապահ հայ ժողովուրդը դարերով պահել է խաղողօրհնության այս գեղեցիկ սովորությունը, որը գալիս է հին հեթանոսական շրջանից, սակայն այն մերվել է, միացել քրիստոնեական տոնին և նոր գույն, նոր իրանգ ստացել։

Սուրբ պատարագը և սրբազան արարողությունները վաղուց են վերջացել Տաճարում, իսկ դրսում դեռ լսվում են հայկական գեղեցիկ պարերգների եղանակները. ժողովուրդը սրտանց ուրախանում, հրճվում է հանդիսավոր օրվա տոնակատարության կապակցությամբ։ Ժողովրդական ուրախությունները շարունակվում են մինչև ուշ երեկո։

***

Օգոստոսի 17-ին, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի հաջորդ օրը, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ ի հիշատակ մեռելոց։ Օրվա պատարագիչն էր բարձրապատիվ Կոստանդին արեղա Թառլանյանը։ Պատարագից հետո տեղի ունեցավ հոգեհանդիստ, ուր հիշատակվեցին համօրեն ննջեցյալները։

***

Օգոստոսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց խաղաղության Համաշխարհային խորհրդի անդամ, նորվեգական պատվիրակ Ռագնար Ֆորբեկը։

Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի ուղեկցությամբ հարգելի պատվիրը այցելեց Մայր Տաճար, ուր մանրակրկիտ բացատրություններ տվեց Սրբազանը։ Այնուհետև հյուրը եղավ Տաճարին կից եկեղեցական հնադիտական թանգարանում, ուր նրան ցույց տրվեցին եկեղեցական թանկագին հնադարյան արժեքավոր սպասներ, իրեր և զգեստներ։

Վերջում թանկագին հյուրը եղավ Վեհարանում, ուր ծանոթացավ Մաղկյա դահլիճում եղած հայկական մանրանկարչության գեղեցիկ նմուշների հետ, ինչպես և դիտեց հնադարյան հայկական մագաղաթյա ձեռագրերի մանրանկարչության գեղեցիկ նմուշները։

Նույն օրը Երեկոյան Հարգելի Հյուրը եղավ Երևանի Ս. Սարգիս մայր եկեղեցում՝ ներկա գտնվելով Երեկոյան ժամերգությանը։ Էջմիածնի միաբանությունից նրան ուղեկցում էին բարձրաստիճան Գեորգ վարդապետ Վաթյանը և բարեկրոն Տ. Նիկոլ ավագ քահանա Թավեյանը։ Երեկոյան ժամերգությունը մեծ տպավորություն թողեց հարգելի պաստորի վրա։

Պաստոր Ռագնար Ֆորբեկկը մեկնելուց առաջ բարեմաղթեց հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն բարօրություն և հարատևություն և իր շնորհակալությունները հայտնեց այն լավագույն ընդունելության համար, որ նա գտավ Ս. Էջմիածնում Մայր Աթոռի միաբանության կողմից։

***

Սեպտեմբերի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց հնդկական երիտասարդական միության պատգամավորությունը։ Վանքում հյուրերին շքեղ ընդունելություն ցուցադրվեց։ Պատվիրակության անդամները հետաքրքրվեցին հնագարյան Տաճարի պատմությամբ, ճարտարապետական կառուցվածքով, մանրանկարչությամբ և այլն, եղան Տաճարի հնագիտական թանգարանում։

Վերջում հյուրերը եղան Վեհարանում, ուր նրանց ընդունեց գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։ Սրբազան հայրը մտերիմ զրույց ունեցավ պատգամավորության անդամների հետ։

Հյուրերը իրենց շնորհակալությունները հայտնեցին միաբանության կողմից իրենց ցույց տրված ընդունելության և իրենց ստացած լավագույն տպավորությունների համար։ Երեկոյան հյուրերը մեկնեցին Երևան։

***

Սեպտեմբերի 13-ին, խաչվերացի տոնի օրը, Էջմիածնի վանքի բակը լցվել էր ուխտավորների խուռն բազմությամբ։ Ավագ սեղանի վրա մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Օրվա պատարագիչն էր Գեորգ վարդապետ Վաթյանը։ Երեկոյան դրսում, միաբանության մասնակցությամբ, տեղի ունեցավ խաչվերացի թափորը։ Հանդիսադիրն է գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։ Հանդիսավոր թափորի առջևից գնում են լապտերակիրները, բուրվառակիրները և քշոցակիրները։ Երկու ավագ քահանաներ սկուտեղի վրա բերում են Ս. Խաչափայտի մասունքը՝ զարդարված երիններանգ ծաղիկներով, ապա գալիս են հանդիսադիր եպիսկոպոսը և մյուսները։

Տյառնագրության ընթացքում ժողովրդի վրա շաղ տրվեց ծաղիկ և վարդաջուր։ Գեղեցիկ և անուշ հանդիսադրությունը լավագույն տպավորություններ ու հույզեր առաջացրեց հավատացյալների սրտերում։ Միայն ուշ երեկոյան դատարկվեց վանքի բակը հավատացյալների բազմությունից։

Մյուս օրը Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց մեռելոց հիշատակին և պատարագից հետո տեղի ունեցան հոգեհանգստյան սրբազան արարողություններ՝ ըստ համարքն նշեցելոց։

***

Սեպտեմբերի 15-ին կանոնավորապես սկսվեցին Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասերը։ Նոր ընդունված 21 ուսանողների համար ստեղծված են պատշաճ հարմարություններ՝ ճաշելու, քնելու, սովորելու և այլն։

***

Սեպտեմբերի 19-ին Երևան ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո միաբանության անդամ Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։ Երևանի օդանավակայանում սրբազան հյուրին դիմավորելու էին գնացել Էջմիածնի միաբաններից։ Թանկագին հյուրին բարի գալուստի խոսքերով դիմավորեց միաբաններից բարձրաստիճան հայր Գեորգ Վաթյանը։ Սրբազան հայրը պատասխան ողջույնի խոսքեր ասելուց հետո, իջավ ինքնաթիռից և համբուրեց հայրենի հարազատ հողը։

Նույն օրն ևեթ գերաշնորհ սրբազան հայրը եղավ Ս. Էջմիածնում և Ս. Իշման սեղանի առջև ծնկաչոք աղոթելուց հետո, ծանոթացավ Մայր Աթոռի միաբանության հետ։ Վեհարանում նրան դիմավորեց Մայր Աթոռի ավագագույն միաբաններից գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը։

***

Սեպտեմբերի 20-ին, կիրակի օրը, Մայր Տաճարում հանդիսավորապես սուրբ պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսը։ Սրբազանը պատարագի ընթացքում քարոզեց՝ հաղորդելով հայրենի երկրի ժողովրդին՝ սփյուռքահայության կարոտակեզ ու բաղձանքներով լի ողջույնի սիրակարոտ խոսքերը։

***

Սեպտեմբերի 24-ին, Կիսլովոդսկի բուժավայրերում հանգստանալուց հետո, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց ազգիս Վեհափառ Հայրապետը։ Վեհափառը իր գալստյան հաջորդ օրը ընդունեց Մայր Աթոռ հյուր եկած գերաշնորհ Դերենիկ եպիսկոպոսին։

***

Սեպտեմբերի 26-ին, շաբաթ օր, տոն է «Սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Ադոկտոսի և Ռոմանոսի երգեցողին»։ Այդ օրը միաժամանակ նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Սրբազնագոյն Հայրապետի անվանակոչության օրն է։ Բոլոր կողմերից, դեռ մի օր առաջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին էր ժամանել ուխտավորների բազմությունը։ Նրանց մի մասը տեղավորվել էր վանքի սենյակներում, իսկ մյուս մասը վրաններ էր խփել դրսում։ Դեռ վաղ առավոտվանից մորթվել էին մատաղները և սկսել սովորական ուրախությունը։ Ժողովրդական երգի և պարի եղանակները թնդացնում էին օդը։

Այդ օրը պատարագիչն էր գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը։ Տաճարում շարժվելու հնարավորություն չկար։ Ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագից հետո միաբանությունը և ժողովրդի հոծ բազմությունը շրջապատել են Ս. Իշման սեղանը։ Գերաշնորհ Դերենիկ սրբազանը, գավազանը և խաչը ձեռքին, քարոզեց հավուր պատշաճի՝ ընտրելով մեծ Սաղմոսերգուի հետևյալ խոսքերը. «Ուխտս դիք և կատարեցէք»։ Նա իր քարոզում վեր հանեց և բացատրեց այն մեծ ու խոշոր ազդեցությունը, որ ունեն սփյուռքահայության վրա Ս. Էջմիածինը և նրա արժանավոր Գահակալ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը։ «Հայրենիք և Եկեղեցի,— ասաց սրբազանը,— ասոնք միշտ ալ եղած են և են Սփյուռքի մեր հայ եղբայրներուն համար մեծագույն սրբություն սրբոցները, անոնցմով ներշնչված է և ստեղծագործած դարերե ի վեր հայ ժողովրդի ամեն մեկ բեկորը, ուր որ ալ ան գտնվեր է։ Հայրենիքին և Եկեղեցիին հավատարիմ ըլլալու այդ սրբազան ուխտն է, որ դարերով ապրեցուցած է մեր ժողովուրդը և անոր մեջեն ծնած Շնորհալիներն ու եռամեծ ուրիշ վարդապետներն են, որ անոր առաջնորդած են ճշմարտության և արդարության ճանապարհով»։

Այնուհետև սրբազանը դրվատեց և բնութագրեց այն խոշոր ու մեծ գործունեությունը, որ կատարել է ու կատարում է ազգիս Վեհափառ Հայրապետ Գեորգ Զ.։ Սրբազանը կենդանի օրինակներով, հուզմունքով պատմեց՝ թե ինչպես օտարության մեջ գտնվող, օտարի երկնքի տակ դեգերող հայրենակարոտ բազմաթիվ հայեր, իմանալով, որ ինքը գնում է Մայր Հայրենիք, Ս. Էջմիածին, իմացել են իրենց փոխարեն աղոթել Ս. Էջմիածնի դարավոր կամարների տակ, Ս. Իշման սեղանի առջև, որպեսզի Աստված է՛լ ավելի երկար կյանք տա և արևշատություն պարգևե Հայոց Հայրապետին՝ Գեորգ Զ.-ին։

Հուզումնալից էր այն պահը, երբ Վեհափառը, սրբազանի ոգևորիչ քարոզից հետո, համբուրեց նրա ճակատը։

Քարոզից հետո տեղի ունեցավ հայրապետական մաղթանք։ Բոլորը երգեցին «Էջ Միածին ի Հօրէ» շարականը։ Ղողանջեցին զանգակները, բազմությունը ցնծաց, ուրախությունը հորդեց զանգերի ղողանջով։ Այսօր Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնն է։

Սուրբ պատարագից հետո միաբանությունը և բազմաթիվ ուրիշ հյուրեր հավաքվեցին Վեհարանի Մաղկյա դահլիճում՝ շնորհավորելու սիրելի Վեհի տոնը։

Ճաշի սեղանի վրա խմեցին Վեհափառ Հայրապետի և Էջմիածնի հարատևության կենացը։ «Էջ Միածին ի Հօրէ» ոգեցնող շարականի ուրախալի հնչյունները թնդացրին դահլիճի նկարազարդ կամարները։ Այնուհետև խմեցին Մայր Հայրենիքի է՛լ ավելի ծաղկման ու բարօրության համար։ Երգեցին «Տէ՛ր, կեցո՛ն»։ Խոսեց գերաշնորհ Դերենիկ եպիսկոպոսը Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռների բարեկամական մոտիկ հարաբերությունների է՛լ ավելի սերտացման և համագործակցման մասին։ Վերջում լավագույն տրամադրություններով ցրվեցին։

***

Սեպտեմբերի 27-ին, Վարագա Ս. Խաչի տոնի օրը, հավատացյալների մեծ բազմության ներկայությամբ Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Գեորգ վարդապետը։ Սուրբ պատարագի ընթացքում ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը, իր Ս. Էջմիածնում մնալու ժամանակամիջոցում, ճեմարանավարտ սարկավագների հետ անցնելու է աստվածաբանության դասընթաց։



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ, ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ՊԱՍՏՈՐ ՌԱԳՆԱՐ ՖՈՐԲԵԿԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օգոստոսի 19-ին և 20-ին Հայաստանում որպես հյուր գտնվում էր խաղաղության շարժման նորվեգական ակնավոր գործիչ, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ պաստոր Ռագնար Ֆորբեկկը, որը Սովետական Միություն է ժամանել Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի հրավերով։

Հայաստանում գտնվելու ժամանակամիջոցում նորվեգական պաստորը դիտեց ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանի տեսարժան վայրերը, ծանոթացավ քաղաքի ճարտարապետությանը և նրա բազմաթիվ նորակառույցներին։ Նա այցելեց Պատմական թանգարանի արդյունաբերական ցուցահանդեսը, ինչպես նաև Պետական պատկերասրահի դահլիճները և Երևանի այլ կուլտուրական հիմնարկություններ։

Պաստոր Ռագնար Ֆորբեկկը Էջմիածնում հանդիպում ունեցավ հայ հոգևորականության ներկայացուցիչների հետ, այցելեց Մայր տաճարը, ինչպես նաև Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում լսեց քարոզ՝ նվիրված խաղաղության համար մղվող պայքարին։

Մեկնելու նախօրյակին պաստոր Ռագնար Ֆորբեկկը հանդիպում ունեցավ Խաղաղության պաշտպանության Հայկական կոմիտեի անդամների հետ։

Մեկնելով Երևանից, Ռագնար Ֆորբեկկը իր շնորհակալությունը հայտնեց այն սիրալիր ընդունելության համար, որ իրեն ցույց էն տվել բոլոր նրանք, ում նա հանդիպել է Հայաստանում, և խնդրեց Հայկական հեռագրական գործակալության միջոցով հրապարակել իր տպավորությունները։

***

Իմ կյանքում ամենախոշոր իրադարձություններից մեկը հանդիսացավ այն հրջանիկ առիթը, որն ինձ օգնեց այցելելու գեղեցիկ Հայաստանը։

Այն սիրալիրությունը և հյուրընկալությունը, որ այստեղ ցույց տրվեց ինձ, իմ սիրտը համակեցին խոր երախտագիտության զգացմունքով։

Ես տեսա հինավուրց և միևնույն ժամանակ հիանալի, երիտասարդ Երևան քաղաքը։ Ես առիթ ունեցա նաև դիտել երկու ֆիլմ Հայաստանի վեհատեսիլ բնության մասին, ժողովրդի ձեռքերով կատարված հիանալի գործերի մասին։

Ինձ ցույց տվեցին նաև աշխարհի հնագույն գրադարանի՝ Մատենադարանի նշանավոր հին ձեռագրերը։ Ես շատ հիանալի բաներ տեսա Հայաստանում գտնվելու ժամանակ, բայց իմ բոլոր տպավորությունները, ցավոք սրտի, հնարավոր չէ հաղորդել այս փոքրիկ հոդվածում։

Ինձ համար, որպես նորվեգական պաստորի, հատկապես մեծ հետաքրքրություն ներկայացրեց ազգային հին սրբատեղի՝ Էջմիածնի Մայր Տաճարի այցելությունը, որտեղ ես և ինձ ուղեկցող անձինք չափազանց բարեկա-

մական ընդունելություն գտանք գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի կողմից։ Ինձ մեծ գոհունակություն պատճառեց այն պատարագը, որ մատուցեց հոգեշնորհ Գեորգ վարդապետ Վաթյանը։

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ, նորվեգական պատվիրակ Իագնար Ֆորբեկը, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի և հոգեշնորհ Տ. Գեորգ վարդապետ Վաթյանի հետ էջմիածնում, Վենարանի մուտքի առաջ։

Ես, իհարկե, կցանկանայի ավելի շատ խոսել այն հիանալի ժամանակի մասին, որ ես անցկացրի Երևանում։ Բայց ես կսահմանափակվեմ միայն նրանով, որ կհայտնեմ իմ լավագույն ցանկությունները և Աստծուն կաղոթեմ հայ ժողովրդի բարօրության համար։

Բոլորս աշխատենք խաղաղության գործի համար։ Ներկայումս ապագայի նկատմամբ կա միայն երկու ալտերնատիվ՝ կամ խաղաղություն, կամ էլ մեր բոլորիս կործանումը։ 603 միլիոն մարդ իրենց ստորագրությունները պահանջեցին խաղաղության Պակտ կնքել հինգ մեծ տերությունների միջև և ես հավատում եմ ու հուսով եմ, որ խաղաղության կողմնակիցների համաշխարհային շարժումը այնքան հզոր է, որ ոչ մի կառավարություն չի համարձակվի սկսել նոր պատերազմ։

Կեցցե՛ խաղաղությունը։

Կեցցե՛ հին և միևնույն ժամանակ ուժեղ չի հայ ժողովուրդը։

Կեցցե՛ իմ Հայրենիքը՝ Նորվեգիան։

Մենք բոլորս կպայքարենք հանուն խաղաղության։

Պատվիրակ ԻԱԳՆԱՐ ՖՈՐԲԵԿԿ
Խաղաղության Համաշխարհային
Խորհրդի անդամ

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 23 օգոստոսի 1953 թ.)

ԿԱՆԱԴԱ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴԱՅՍՈՆ ԿԱՐՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սովետական Հայաստան մի քանի օրով հյուր էր եկել Կանադա-սովետական բարեկամության ընկերության նախագահ Դայսոն Կարտերը իր կնոջ հետ, որ Արտասահմանի հետ կուլտուրական կապի համամիութենական ընկերության հրավերով ժամանել է Սովետական Միություն։

Երևանից մեկնելուց առաջ, պարոն Դայսոնը խնդրեց Հայկական հեռագրական գործակալության միջոցով հրապարակել իր տպավորությունները։

***

Ձեր արտասովոր երկրի մասին իմ կարծիքը կարելի էր ամփոփել այսպես.

Կանադա-սովետական բարեկամության ընկերության նախագահ Դայսոն Կարտերը իր տիկնոջ հետ մի պահ Զվարթնոցում

Հայաստանում եղած ժամանակ նրանք դիտեցին ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը, եղան քաղաքի կուլտուրական հիմնարկներում և արդյունաբերական ձեռնարկություններում։

Պարոն Դայսոն Կարտերը կնոջ հետ միասին մեկնեց Էջմիածին, եղավ Զվարթնոցում։

Հյուրերը ուղևորվեցին նաև Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի Օրջոնիկիձեի անվան կոլտնտեսությունը, որտեղ ժանոթացան կոլտնտեսային գյուղացիության կյանքին։

դուք՝ սովետահայերդ պահպանել եք աշխարհի ամենահնագույն կուլտուրաներից մեկը, բայց կուլտուրայի զարգացման ասպարեզում ձեր ձեռք բերած հիանալի նվաճումները նսեմացնում են այդ հինավուրց ժառանգությունը։ Դուք կարող եք վայելել Արարատ լեռան անթառամ գեղեցկությունը, բայց դուք միաժամանակ օգտագործում եք Սևանա լիճը, կիրառելով հիդրոէլեկտրակոնության առավել առաջավոր տեխնիկան։

Այս պահին, երբ ես գրում եմ շտապ կերպով, իմ տպավորությունները թերի կլինեն։ Դա բնական է, որովհետև ձեր ռեսպուբլիկան արագան է հարուստ իր պատմությամբ

ու նվաճումներով, որ ձեր մասին պետք է ամբողջական հատորներ գրել, որպեսզի աշխարհն իմանա նրա մասին։ Սակայն, մակերեսային լինելու ռիսկով, ես պետք է ձեզ ասեմ, որ Սովետական Հայաստանը պետք է նկարագրել՝ ձեր անցյալը, ներկան ու ապագան ընդգրկող էպիկական բանաստեղծության նոր լույսով։

Աշխարհում ոչ մի տեղ չի կարելի տեսնել մարդու նկատմամբ Մաքսիմ Գորկու հավատի այնպիսի հաստատում, ինչպես տեսնում ենք սովետական երկրում այսօր։ Ինչպիսի՞ հիացմունք կապրեր Մաքսիմ Գորկին, եթե նա տեսներ հզոր տուրբինների միջով դեպի Երևանի զբոսայգիները, դեպի ձեր մշտաժպիտ երեխաների լողավազանները և դեպի բամբակի ու ցորենի դաշտերը, խաղողի այգիներն ու արոտավայրերը հոսող՝ Սևանի ջրերը։

«Մարդը,— ասել է Գորկին,— դա բարձր է հնչում։ Ինչպիսի՞ հպարտությամբ կհամակվեր Գորկին, եթե նա տեսներ հայ բանվորներին, կոլտնտեսականներին և ինտելիգենցիային, որ տառացիորեն կանգնած են մարդկային պրոգրեսի սահմանների վրա որպես լուսաշող մի փարոս, որ լույս է տալիս բոլոր ճնշված ժողովուրդներին, հրաշտից տուժող բոլոր երկրներին, բազմաթիվ ուրիշ երկրների ամբողջ անգրագետ երիտասարդությանը, բոլոր սովահար և դժբախտ երեխաներին։ Սովետական Հայաստա՞ն... Ինչպիսի՞ պանծալի երկիր։

Գիտե՞ք արդյոք դուք, որ իմ երկրում՝ Կանադայում, երբ ես փոքր երեխա էի, գյուղ ուներ «Սովահար հայի նման» առածը։ Դա 1920 թվականին էր։ Հիշելով այդ առածը վերջին մի քանի օրվա ընթացքում, ես ժպտացի հարյուրավոր անգամ, ապրեցի և ձեզ հետ միասին ժպտացի, հայե՛ր, ձեր գործարաններում, ձեր բերքառատ դաշտերում, ձեր հոյակապ Երևան քաղաքի հրապարակներում։

Ի՞նչ ունեիք դուք, երբ Սովետական իշխանություն հաստատեցիք։ Կավաշեն խրճիթներ և փլատակներ։ Եթե ես հայ լինեի, իմ երեխաներին երբեք թույլ չէի տա մոռանալու անցյալը։ Ես, անշուշտ, նկատի չունեմ երեք հազարամյա անցյալ հնությունը։ Դուք Սևանի ջրերը հասցրել եք մինչև անապատ։ Դուք իրականություն եք դարձրել հին գրքերի անպտուղ խոստումները՝ «Անապատը կծաղկի, ինչպես վարդը։ Անապատ այլևս չկա։ Կա ծաղկուն Սովետական Հայաստան։

Ձեր աշխատանքով, գիտությամբ և սոցիալիզմով 30 տարվա ընթացքում ավելին եք արել, քան ամբողջ երեք հազար տարվա ընթացքում։ Եվ, ինչ որ ամենանշանակալիցն է այսօր Հայաստանում, դա այն է, որ ամբողջ պատմությունը, սկսած քաղաքակրթության արշալույսից, կարելի է տեսնել միևնույն վայրում։ Սեփական աչքերով ես տեսա հինավուրց քրիստոնեական ճկեղեցու խնամքով պահպանվող ավերակների վրայով անցնող բարձրավոլտ էլեկտրահաղորդման դծեր և զառամյալ հարգարժան մի ծերունու, որը նույն ժամանակվա իր նախորդների նման նստել էր էշի վրա՝ ճանապարհ զիջելով դղրդացող վիթխարի էքսկավատորին, ինչպես նաև տեսա հիանալի փողոցներ՝ կոլտնտեսականների քարաշեն նոր տներով եզերված, նախասովետական ժամանակվա ավերված խրճիթների կողքին։

Հայաստանի մասին ամբողջ աշխարհը պետք է իմանա։ Ես սիրեցի ձեր հիասքանչ երկիրը։ Ի պատասխան ձեր անսահման հյուրընկալության և սիրալիր ընդունելության՝ ես խոսք եմ տալիս գործի դնել բոլոր ջանքերը իմ ժողովրդին պատմելու ձեր պանծալի երկրի մասին։

Ցանկանում եմ, որպեսզի ձեր երկրի ծաղկումը լինի նույնքան անսահման, որքան ձեր արևի ճառագումը։

Ցանկանում եմ, որ հայերն ու կանադացիները, կառուցելով խաղաղ ապագա, է՛լ ավելի մոտիկ բարեկամներ դառնան։

ԴԱՍՏՈՆ ԿԱՐՏԵՐ

Կանադա-սովետական բարեկամության ընկերության նախագահ

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 1 սեպտեմբերի 1953 թ.)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 8-ից մինչև 10-ը Սովետական Հայաստանում հյուր եղավ անգլիական ճարտարապետների դելեգացիան։

Անգլիական ճարտարապետները դիտեցին ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը, եղան մի շարք կուլտուրական հիմնարկներում, այցելեցին Մատենադարան, լսեցին Դեյիրի «Լակմե» օպերան։ Հյուրերը առանձին հետաքրքրությամբ դիտեցին Երևանի ճարտարապետական կառուցվածքները, ինչպես նաև քաղաքի բազմաթիվ նորակառույցները։

Անգլիական ճարտարապետները մի քանի ուղևորություններ կատարեցին Հայաստանում, եղան Էջմիածնում։

Երևանից մեկնելուց առաջ դելեգացիայի քարտուղար պարոն Պեննը Հայկական հուսադրական գործակալության թղթակցին հաղորդեց Սովետական Հայաստանում իրենց ստացած տպավորությունները։

— Մենք Սովետական Միության ենք ժամանել,— հայտարարեց պարոն Պեննը,— ՍՍՌՄ Սովետական ճարտարապետների միության հրավերով։ Երևան գալուց առաջ մենք արդեն եղել էինք Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում. այնպես որ արդեն հնարավորություն էինք ունեցել ծանոթանալու այն մեծ շինարարությանը, որ կատարվում է մեր երկրում։

Մեր ուղևորության նպատակն էր ծանոթանալ Սովետական Միության քաղաքների ճարտարապետությանը, քաղաքաշինարարության ձևերին ու մեթոդներին, որոնց մասին, պետք է խոստովանել, մենք շատ քիչ դիտեինք։

Պարոն Պեննը նշեց, որ դելեգացիայի անդամները, բացի դրանից զննվում էին անգլիական և սովետական ճարտարապետների ստեղծագործական մերձեցման ցանկությամբ, որը, անշուշտ, կծառայի անգլիական և սովետական ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդմանը։

Դելեգացիան ուշի-ուշով և մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ Սովետական Հայաստանի մայրաքաղաքին՝ Երևանին։

— Ինձ թվում է,— նշեց պարոն Պեննը,— որ ես սխալված չեմ լինի, եթե դելեգացիայի անդամների անունից մեծ գոհունակություն հայտնեմ այն ամենի առթիվ, ինչ մենք այս-

Անգլիական ճարտարապետների պատվիրակությունը Երևանի Պետական օպերայի առջև

տեղ տեսանք այնքան կարճ ժամանակում։ Բայց նույնիսկ այդ կարճատև ծանոթացումը հնարավորություն տվեց սիրել Երևանը՝ այդ գեղեցիկ, ծաղկող քաղաքը։ Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանի ստեղծագործական կյանքը մեզ պատկերացում է տալիս ամբողջ Սովետական Հայաստանի և նրա հաջողությունների մասին։

Դելեգացիայի անդամները բարձր գնահատական տվեցին քաղաքի ճարտարապետական շատ կառուցվածքների։ Նրանց վրա մեծ տպավորություն թողեց շինարարական հիանալի քարը՝ տուֆը, որով կերտված են քաղաքի բազմաթիվ շենքեր։

Անգլիական ճարտարապետները առանձնապես նշեցին օպերային թատրոնի շենքի ճարտարապետական բարձր արժանիքները, որը, չնայած հղացման պարզությանը, այլի է ընկնում ճարտարապետական ձևերի բազմազանությամբ և ներդաշնակությամբ։

Հյուրերի ուշադրությունը իր վրա դարձրեց նաև ծածկած շուկան։

— Հարմար ու գեղեցիկ ծածկած շուկա ստեղծելու պրոբլեմով զբաղվել են նաև անգլիական ճարտարապետները, բայց համեմատության մեջ դնելով այն ամենը, ինչ արել ենք մենք,— ասաց նա,— ձեր քաղաքի կենտրոնում կառուցված հոյակապ շուկայի հետ, մենք համոզվեցինք, որ հայ ճարտարապետները այդ պրոբլեմը լուծել են ավելի հաջող, ավելի գեղեցիկ կերպով, քան մենք։

Պարոն Պենները խոսեց նաև այն հսկայական տպավորության մասին, որ իր և իր կոլեգիաների վրա թողել է հայ փորագրողների վարպետությունը, որոնք շենքերը դարդարել են իրենց գեղեցկությամբ և նրբությամբ հիացմունք պատճառող պարզաքանդակներով։

Քաղաքը դիտելիս անգլիական ճարտարապետները մտան որոշ խանութներ։ Նրանց շատ դուր եկան արծաթյա նրբակերտ իրերը՝ դավաթները, բաժակները, սափորները և այլն, որոնք պատրաստվել են հայ ոսկերիչների ճարտար ձեռքերով։ Դելեգացիայի անդամներից մի քանիսը գրանցից ձեռք բերեցին որպես հիշատակի առարկաներ, որ նրանց կհիշեցնեն Սովետական Հայաստանում անցկացրած օրերը։

Անգլիական ճարտարապետները եղան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում, որտեղ լսեցին Դելիբի «Լակմե» օպերան։ Նրանց վրա ուժեղ տպավորություն թողեց թատրոնի աստանդավոր արտիստուհի Գոհար Գասպարյանը Լակմեի դերում։

Դելեգացիայի անդամները, ինչպես պատմեց պարոն Պենները, մեծ հետաքրքրությամբ դիտեցին հայկական հին ճարտարապետության հուշարձանները՝ 7-րդ դարին պատկանող Զվարթնոց տաճարը, ինչպես նաև Գառնիի և Գեղարդի հուշարձանները։

Վերջում պարոն Պենները հայտարարեց, որ ՍՍՌՄ և մասնավորապես Սովետական Հայաստան կատարած այցելությունը, սովետական մարդկանց կյանքին ու գործերին ծանոթանալը դելեգացիայի անդամներին օգնեցին ճիշտ կարծիք կազմելու սովետական երկրի մասին, իսկ դա, անշուշտ, կծառայի բարեկամության ամրապնդմանը երկու ժողովուրդների միջև, ամբողջ աշխարհի խաղաղության համար մղվող պայքարի գործին։

(ՀՀԴ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 12 սեպտեմբերի 1953 թ.)

ՀՆԴԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստան հյուր էր եկել հնդկական երիտասարդության դելեգացիան։

Դելեգացիան եկել էր Սովետական Միություն Բուխարեստից, որտեղ մասնակցել էր Երիտասարդության և ուսանողների հանուն խաղաղության ու բարեկամության համաշխարհային չորրորդ ֆեստիվալին։ Երևանում հյուրերը դիտեցին քաղաքի տեսարժան վայրերը, եղան բարձրագույն ուսումնական հաստատություններում, Կրուպսկայայի անվան դպրոցում, Պիոներների պալատում, Մանկական երկաթուղում, կաշեգործարանում, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում դելեգացիայի անդամները լսեցին «Ալմաստ» օպերան։ Նրանք մեկնեցին Արտաշատի շրջանի «Շինարար» կոլտնտեսությունը, որտեղ դիտեցին բամբակի պլանտացիաները, անասնաբուծական ֆերմաները և արտելի այլ տնտեսություններ, եղան Արզնի կուրորտում։

Երևանից մեկնելուց առաջ հնդկական երիտասարդական դելեգացիայի անդամները հետևյալ հայտարարությունն արեցին մամուլի համար.

— Երիտասարդության և ուսանողների Բուխարեստի համաշխարհային 4-րդ ֆեստիվալի փակումից հետո,— ասաց դելեգացիայի ղեկավար Փանջվանին,— մենք սատարանք Սովետական երիտասարդության հակաֆաշիստական կոմիտեի հրավերը՝ այցելել Սովետական Միություն։ Հիշատակ մենք շատ ուրախացանք այդ հրավերի համար։ Այցելել Սովետների մեծ երկիրը, սեփական աչքերով տեսնել սովետական մարդկանց հսկայական նվաճումները, բարեկամական կապեր հաստատել ՍՍՌՄ երիտասարդության հետ՝ դա Հնդկաստանի յուրաքանչյուր պատանու, յուրաքանչյուր աղջկա երազանքն է։ Եվ ահա մեզ՝ դելեգացիայի անդամներիս վիճակվեց այդ բախտը։ Մենք գտնվում ենք ՍՍՌՄ-ում։ Այն ամենը, ինչ մենք տեսանք ձեր գեղեցիկ երկրում, այնքան հոյակապ էր, այնքան վիթխարի, որ անհնարագրելի տպավորություն թողեց մեզ

վրա։ Հայաստանում անցկացրած մի քանի օրը ընդմիշտ կմնա մեր դելեգացիայի յուրաքանչյուր անդամի հիշողության մեջ։ Այստեղ մենք հանդիպեցինք իսկական բարեկամների, խաղաղության գործի բոցաշունչ մարտիկների, երջանիկ կյանքի կերտողների։ Այն սրտաբացությունը, որով մեզ դիմավորեց հայ երիտասարդությունը, մինչև հոգու խորքը մեզ հուզեց։ Մեզ ցույց տվեցին Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունները, որտեղ պատանիներն ու աղջիկները մայրենի լեզվով ուսումնասիրում են գիտությունները։ Մի գործարան, որը ավելի շատ նման է հսկայական այգու, քան ձեռնարկության, կոլտնտեսային անծայրածիր դաշտեր, զանազան մանկական հիմնարկներ, որտեղ երջանիկ երեխաները սովորում են և հանգստանում։ Ամենուրեք մարդկանց աչքերում մենք տեսանք երջանկության, բերկրանքի արտահայտություն և մենք համոզվեցինք, որ մարդիկ, որոնք զբաղված են խաղաղ ստեղծարար աշխատանքով, մարդիկ, որոնց աչքերը շողշողում են այնպիսի երջանկությամբ, կարող են երազել միայն մի բանի՝ խաղաղության մասին։

Երբ մենք վերադառնանք հայրենիք՝ Հնդկաստան, մեզ կհարցնեն, թե ինչ ենք տեսել ՍՍՌՄ-ում։ Եվ մենք խոստանում ենք, որ հնդկական երիտասարդությանը կպատմենք միայն ճշմարտությունը, այդ բանում մենք հավաստիացնում ենք սովետական երիտասարդությանը։ Սովետական ժողովրդի երջանիկ կյանքի մասին մեր պատմածը կլինի այն լուսամուտը, որի միջով Հնդկաստանի երիտասարդությունը կտեսնի և կիմանա ճշմարտությունը ՍՍՌՄ-ի մասին։

Հնդկական երիտասարդական պատվիրակությունը Էջմիածնում, գերաշնորհ Տ. Վռամ արքեպիսկոպոս Կոստանյանի, հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Վաթյանի և հոգեշնորհ հայր Կոստանդին Թաղլանյանի հետ։

Դելեգացիայի անդամ Սարլա Գուպտան ասաց.

— Սովետական Միությունում ես տեսա իմ հայրենակցուհիների իրականացած երազանքը՝ ազատ ու երջանիկ սովետական կանանց։ Կինը ՍՍՌՄ-ում տղամարդու հետ հավասար իրավունքներ է վայելում։ Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ես տեսա շատ աղջիկների, որոնք պատրաստվում են դառնալու ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների մասնագետներ։

Կրասպսկայայի անվան դպրոցում ես բարեկամացա երկու հիանալի աղջիկների հետ։

Նրանցից մեկի անունն է Ամիդա, մյուսինը՝ Ռիտա։ Ես երկար ժամանակ հիանում էի նրանց բերկրալի դեմքերով։ Հիշողությանս մեջ այդպես կենսախինդ, բերկրալի, ուրախ կմնան սովետական երեխաները։ Երջանիկ մանկության այդ կերպարը իմ սրտում ես կտանեմ Հնդկաստան և Հնդկաստանի կանանց կպատմեմ, որ աշխարհում կա մի երկիր, որտեղ նրանց երազանքը արդեն դարձել է իրականություն։

Իր տպավորությունները հաղորդեց նաև դելեգացիայի անդամ Գանգայլ Կատրադան։ Նա հայտարարեց.

— Մեր դելեգացիայի թվում կան տարբեր պրոֆեսիաների մարդիկ՝ ժուռնալիստներ, գրողներ, արտիստներ, սպորտսմեններ։ Բայց մենք ամենքս մի ընդհանուր տպավորություն ստացանք Սովետական Հայաստան կատարած այցելությունից։ Հայաստանում, ինչպես և ամբողջ Սովետական Միությունում, անսահմանափակ հնարավորություններ են ստեղծված երիտասարդության ուսման ու ստեղծարար աճի համար։ Եվ այդ հնարավորությունները օգտագործվում են բեղմնավոր կերպով։ Մենք ծանոթացանք Հայաստանի տաղանդավոր գրողների, երիտասարդ երաժիշտների, սպորտսմենների հետ։ Մեզ ամենքիս դյուրեց հայ ճարտարապետների աշխատանքների անկուզական գեղեցկությունը, Երևանի շենքերի հրաշալի օրնամենտները, հայկական հրաշալի երգերը։ Եվ մենք ամբողջ սրտով սիրեցինք տաղանդավոր հայ ժողովրդին։ Սովետական մարդկանց հաջողությունները, խաղաղ շինարարության ասպարեզում նրանց նվաճումները ուրախություն են պատճառում ՍՍՌՄ սահմաններից շատ հեռու գտնվող բոլոր ազնիվ մարդկանց։ Ի դեմս Սովետական Միության նրանք տեսնում են այն շողշողուն փարոսը, որը կանչում ու հրապուրում է երջանիկ կյանքի, որը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է կատուցել այդ երջանիկ կյանքը։

(ՀՀԳ)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 17 սեպտեմբերի 1953 թ.)

«ՖՐԱՆՍԻԱ-ՍՍՌՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 15-ից մինչև 20-ը Հայաստանում հյուր էր «Ֆրանսիա-ՍՍՌՄ» ընկերության դելեգացիան, որ Սովետական Միություն է ժամանել Արտասահմանի հետ կուլտուրական կապի համամիութենական ընկերության հրավերով։

Դելեգացիայի անդամները դիտեցին Երևանի և Էջմիածին քաղաքի տեսարժան վայրերը, այցելեցին Սևանի հիդրոէլեկտրակայանը, մեկնեցին Արտաշատի շրջանի կոլտնտեսությունները և Արզնի կուրորտը։ Ռեսպուբլիկայի մայրաքաղաքում դելեգացիան ծանոթացավ կաշվի գործարանի և պինու կոմբինատի բանվորների կյանքի ու աշխատանքի պայմաններին, բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների աշխատանքին։ Դելեգացիայի անդամները եղան արդյունաբերական ցուցահանդեսում, Պետական պատկերասրահում, Մատենադարանում։ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում ֆրանսիացի հյուրերը լսեցին «Անուշ» և «Սեվիլյան սափրիչ» օպերաները։ Հյուրերը ներկա գտնվեցին նաև Պետական ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում կայացած համերգին, դիտեցին «Սովետական Հայաստան» գունավոր դոկումենտալ ֆիլմը։

Հայաստանից մեկնելուց առաջ դելեգացիայի անդամները իրենց տպավորությունները հաղորդեցին ՀՀԳ-ի թղթակցին։

Դելեգացիայի ղեկավար պրոֆեսոր պարոն Ժան Պերյուսը հայտարարեց.

— Երևանում մեզ առանձնապես մեծ զարմանք պատճառեց շինարարական աշխատանքների վիթխարի թափը։ Հատկանշական է, որ այստեղ պահպանվել են ճարտարապետական իսկական ինքնատիպության գծեր, ազգային վառ կոլորիտ։

— Ես կցանկանայի ավելացնել,— ասաց դելեգացիայի անդամ պարոն Ժան-Իվ Նիզեն,— որ այստեղ՝ Երևանում, մենք մեփական աչքով համոզվեցինք, թե պատմական կարճ ժամանակամիջոցում ինչպես ապշեցուցիչ կերպով փոխվել է Հայաստանը՝ ցարական Ռուսաստանի այդ նախկին կիսագաղութը։ Ես ծնվել եմ Թունիսում, այնտեղ ապրել եմ շատ տարիներ։ Տխուր տպավորություն են թողնում Թունիսի հետնախորշերը, կիսախարխուլ հյուղերը, ծուռտմուռ փողոցները։ Երևանում տեղ-տեղ դեռևս մնացած, բայց շուտով քանդվելու ենթակա հին թաղամասերի մնացորդները ցույց են տալիս, թե որքան խղճուկ ու աղքատ տեսք է ունեցել այս քաղաքը անցյալում։ Իսկ այժմ Երևանը նոր, գեղեցիկ մայրաքաղաք է՝ հիանալի հատակագծով, լայն փողոցներով, ընդարձակ հրապարակներով, սաղարթախիտ դրոսայգիներով։

— Դելեգացիան ծանոթացավ Հայաստանի արդյունաբերական որոշ ձեռնարկություններ-

րի,— շարունակեց պարոն Պերյուսը։— Հյուրերի վրա մեծ տպավորություն թողեց Սևանի հիդրոէլեկտրակայանը։— Մենք համոզվեցինք, թե ինչպիսի սերտ, հիրավի եղբայրական բարեկամության կապերով է շաղկապված հայ ժողովուրդը սովետական եղբոր բոլոր ժողովուրդների և ամենից առաջ ռուս ժողովրդի հետ։ Այսպիսի առաջնակարգ սարքավորումով հագեցված էլեկտրակայան հայ ժողովուրդը կարող էր կառուցել միայն սովետական Միության եղբայրական ժողովուրդների ստեղծագործական սերտ համագործակցությամբ և անշահախնդիր օգնությամբ։ Ժողովուրդների այդ վեհ ու ազնիվ բարեկամության վառ վկայությունն է հանդիսանում արդյունաբերական ցուցահանդեսը։ Ռուս ընկերները այստեղ են բերել առաջին հաստոցները։ Հայաստանի աշխատավորները սովորել են ոչ միայն լավ օգտագործել դրանք, այլև հենց իրենք այժմ թողարկում են առաջնակարգ մեքենաներ և ուղարկում երկրի բոլոր քաղաքները։

Կաշվի գործարանում դելեգացիայի ուշադրությունը իր վրա դարձրեց բանվորների նկատմամբ ցուցաբերվող մեծ հոգատարությունը։ Ջեռնարկության տերիտորիան լավ կանաչապատված է։ Արտադրական ցեխերը հիանալի կերպով օդափոխվում են։ Այստեղ մարդ համարյա չի զգում մշակվող կաշվի այն հատուկ անդուրեկան հոտը, որ հատուկ է նման ձեռնարկություններին։

Մեկ ապշեցրեց ժողովրդական կրթության թափը ձեր ռեսպուբլիկայում։ Հիանալի է, որ հայ պատանիները և աղջիկները կարող են բոլոր մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ստանալ իրենց մայրենի լեզվով։

Ֆրանսիական պատվիրակությունը էջմիածնի Վեհարանի դահլիճում, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի հետ։

Դելեգացիան այցելեց մի շարք կուլտուրական հիմնարկներ։ Մենք հսկայական հետաքրքրությամբ ծանոթացանք Մատենադարանում հավաքված անգնահատելի ձեռագրերին։ Հին ձեռագրերի նկատմամբ Հայաստանի կառավարության կողմից ցուցաբերվող հոգատարությունը վկայում է այն մասին, թե ժողովուրդը որքան խնամքով է վերաբերվում իր ազգային կուլտուրայի ժառանգությանը։

Օպերային թատրոնում Հայկական պետական ֆիլհարմոնիայի արտիստների տված համերգում մենք տեսանք հայ ժողովրդի վառ ու ինքնատիպ արվեստը։

Դելեգացիայի կաթոլիկ անդամների վրա մեծ տպավորություն թողեց արքեպիսկոպոս Կոստանյանի հետ ունեցած զրույցը, որը

Ֆրանսիայի հավատացյալներին օրհնեց պայքարելու հանուն խաղաղության։

— Մի ամբողջ օր,— ասաց դելեգացիայի անդամ երկաթուղային պարոն Մարիուս Կարայենը,— մենք անցկացրեցինք Արտաշատի շրջանի Սուալինի անվան և Փարիզի Կոմունայի անվան կոլտնտեսություններում։ Ես դրառումներով լցրի մի ամբողջ բլոկնոտ, որպեսզի հայրենիք վերադառնալուց հետո հնարավորություն ունենամ իմ բարեկամներին պատմելու հայ գյուղացիների հաջողությունների մասին։ Ապշեցուցիչ է հայ գյուղի կուլտուրական աճը։ Օրինակ, Փարիզի Կոմունայի անվան կոլտնտեսությունում կա դրադարան, որը ունի 6.000-ից ավելի գիրք։ Այդ դրադարանի մշտական ընթերցողներ են 850 կոլտնտեսականներ, մինչդեռ այստեղ կա ընդամենը 2.700 բնակիչ։ Գյուղական միջնակարգ դպրոցում սովորում է 500 երեխա։ Գյուղացիական կյանքի այսպիսի բարձր մակարդակ հնարավոր չէր պատկերացնել անցյալում։

— Ամենուրեք,— զրույցի վերջում հայտարարեց պարոն Պերյուսը,— դելեգացիայի անդամները արժանացան բացառիկ սրտագին ընդունելության։ Մենք Սովետական Հայաստանից մեկնում ենք անմոռանալի տպավորություններով լի։

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 22 սեպտեմբերի 1953 թ.)

ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հինգ օր Հայաստանում հյուր էր Շվեյցարիայի կանանց դելեգացիան։ Հյուրերը ՍՍՌՄ են ժամանել Սովետական կանանց հակաֆաշիստական կոմիտեի հրավերով։ Դելեգացիայի կազմում կան մտավոր ու ֆիզիկական աշխատանքի ամենատարբեր պրոֆեսիաների ներկայացուցիչներ, տնային տնտեսուհիներ։ Նրանք եկել են Շվեյցարիայի զանազան քաղաքներից և գյուղական վայրերից։

Սեպտեմբերի 21-ին, Մոսկվա վերադառնալուց առաջ, դելեգացիայի մասնակիցները ՀՀԳ-ի թղթակցին հաղորդեցին Հայկական ՍՍՌ-ում իրենց ստացած տպավորությունները։

— Մենք,— ասաց դելեգացիայի ղեկավար, շվեյցարական կանանց «Հանուն խաղաղության և պրոգրեսի» ֆեդերացիայի դլխավոր բարտուղար տիկին Շարլոտտա Մյուրեն,— Սովետական Հայաստան եկանք մեծ հետաքրքրությամբ։ Հայ կանանց սիրալիր հրավերը շատ ուրախացրեց մեզ բոլորիս։ Դելեգացիայի մասնակիցներին հետաքրքրում էր իմանալ, թե Սովետական իշխանության տարիներին ինչ է կատարված երկրում, որը, ինչպես մենք գիտենք, անցյալում աղքատ և քայքայված երկիր էր։ Մեր ստացած տպավորությունները վիթխարի են։ Մենք զանում ենք, որ հայ ժողովրդի նվաճումները մեծ են։ Մեզ զարմացրեց, մասնավորապես, հայ կանանց դրությունը, նրանց լայն իրավունքները, լիակատար իրավահավասարությունը տղամարդկանց հետ, ցանկացած գործում իրենց ընդունակությունները ի հայտ բերելու ասպարեզում նրանց համար որևէ սահմանափակման բացակայությունը։ Սովետական Հայաստանում կանայք կարող են դրավել և իրոք դրավում են ամենապատասխանատու պետական պոստեր, նրանց համար մատչելի է ուղած թափի ու նշանակության աշխատանքը։ Դա իսկապես արժանի է հիացմունքի։

Զրույցին մասնակցած դելեգացիայի անդամները պատմեցին այն վառ տպավորությունների մասին, որ ստացել են Սովետական Հայաստանում եղած ժամանակ, բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի հետ իրենց ունեցած հանդիպումների ժամանակ։

— Մեզ բոլորիս ապշեցրեց հայ ժողովրդի կուլտուրական բարձր մակարդակը,— հայտարարեց բելգիացի տնային տնտեսուհի տիկին Գոֆրը։— Սովետական հասարակության զանազան խավերի մարդիկ մեզ հետ խոսում էին մեր մայրենի լեզվով։ Մենք տեսանք կոլտնտեսականներ, որոնք աղատ կերպով քաղվածքներ են բերում արևմտաեվրոպական դրականության կլասիկների ստեղծագործություններից։ Ամենուրեք զգացվում է դեպի կուլտուրան ու գիտելիքները ունեցած ձգտումը։ Մեզ վիճակվեց լինել գյուղական մի դպրոցում։ Մենք ներկա եղանք այն դասին, երբ երեխաներին դասավանդվում էր դարվինիզմը։ Խիստ զարմանալի է, որ նույնիսկ գյուղական դպրոցում դասավանդումը կատարվում է այդպիսի ծավալուն և բազմակող ծրագրով։ Մենք ուշադրություն դարձրինք նաև այն բանին, թե ինչպես էր կահավորված դպրոցի ֆիզիկայի կաբինետը։ Այդպիսի սարքավորում, գործիքներ ու ապարատներ կարելի է տեսնել միայն լավ գիմնազիայում։

— Սովետական Հայաստանի բնակչության կյանքի շատ պատկերներ անջնջելի տպավորություն թողեցին մեր հիշողության մեջ,— ասում է ցյուրիխցի ժուռնալիստուհի տիկին Ֆուրերը։— Ես երբեք չեմ մոռանա երեխաների դեմքերը։ Կենսուրա՞խ, առո՞ղջ, երջանի՞կ դեմքեր։ Մենք չենք մոռանա երեխաների ծիծաղն ու ուրախությունը Երևանի մանկական երկաթուղում։ Որքան ուժ, առողջություն, երջանկություն մենք տեսանք այնտեղ։ Բայց չէ որ արտասահմանում Սովետական Միության թշնամիների կողմից տարածվող շարամիտ դրպարտանքի մեջ քիչ տեղ չի տրվում ՍՍՌՄ երեխաների իբր վատ վիճակին։ Մենք այժմ ոնփական աչքով համոզվեցինք, թե ինչ արժեք ունի այդ զրպարտությունը։

— Ինձ վրա,— ասում է Բիենների կոնսերվատորիայի դասախոս տիկին Իսլերը,— ուժեղ տպավորություն թողեց, մանավանդ, երաժշտության դասը դյուղական երաժշտական դպրոցում, որին ներկա եղանք մենք Էջմիածնի շրջանի Միկոյանի անվան կոլտնտեսությունը այցելած ժամանակ։ Մի աշակերտուհի, շարքային կոլտնտեսուհու աղջիկ, իր հասակի համար արտասովոր շնորհքով և տեխնիկական բարձր մակարդակով կատարում էր բարդ ստեղծագործություններ։ Ահա թե ինչպես են աճում տաղանդները։

Բեռնցի բժշկական բույր տիկին Գրյուտերը և Լա Շո-դե-Ֆոնցի թոշակառու տիկին Պետրյոմանը պատմեցին դելեգացիայի Արցախի սանատորիան կատարած այցելության մասին։

— Այստեղ ամեն ինչ արված է հանդիսացող աշխատավորների համար,— ասաց տիկին Գրյուտերը։— Դժվար է չհիանալ այդ սանատորիայի կահավորմամբ ու սարքավորմամբ։

Կին դրող տիկին Ֆաուրը, որ բնակվում է Բազելի շրջանի Սիսախում, նշում է, թե Սովետական Հայաստանում ինչպիսի հոգածությամբ է պահպանվում ֆաշիզմի դեմ, աղատության դործի համար մղված պայքարում զոհված ռազմիկների հիշատակը։ Հայաստանում ստեղծված աղբյուր-հուշարձանները խորապես հուզում են սրտերը։

— Մենք տեսանք,— ասում է նա,— որ խաղաղության ձգտող հայ ժողովուրդը երջանիկ է և վստահությամբ է նայում իր ապագային։ Ցուր չէ, որ այստեղ սիրում են ծառեր տնկել, որոնք կպտղաբերեն։ Ձեր երկիրը կդառնա մի մեծ ծաղկող այդի, ֆսկ

Նվեյցարական կանանց պատվիրակությունը Երևանում, Լենինի հրապարակում, Արարատ տրեստի վարչության շենքի առաջ։

կյանքն այստեղ վառ ու հիասքանչ կլինի բոլոր մարդկանց համար։

Հայաստանում եղած ժամանակ շվեյցարական կանանց դելեգացիայի մասնակիցները մոտիկից ծանոթացան քաղաքի ու գյուղի աշխատավորների կենցաղին։

Ծքնեի ժամացույցի գործարանի բանվորուհի տիկին Շերերը պատմում է.

— Մենք այցելեցինք կաշվի և կարբիտի գործարանների բանվորների ու բանվորուհիների բնակարանները։ Կարելի է ասել մի բան. ամենուրեք հարմարավետություն, մաքրություն, շքեղ կահույք, շատ գորգեր։ Եվ, որ գլխավորն է, այդպիսի բնակարանի համար կենվորը վճարում է իր աշխատավարձի հինգ տոկոսից ոչ ավելին։ Մեզ, Եվրոպայի բնակիչներիս համար, որտեղ բնակարանային վարձը կազմում է յուրաքանչյուր աշխատավորի ծախսերի հսկայական մասը, այդ ամենը պարզապես զարմանալի է թվում։ Ցանկանում եմ նշել Երևանի բանվորների սրտագին հյուրընկալությունը։ Մենք եղանք տներից մեկում այն պահին, երբ այնտեղ հյուրեր կային։ Մեր ամբողջ դելեգացիային՝ 11 մարդու, հրավիրեցին սեղանի շուրջը։ Մեզ դիմավորեցին որպես մոտ բարեկամների։ Սեղանի վերև նստած էր հայրը՝ տան տերը, արդեն հասակն առած մի մարդ, և նա մեզ պատմեց, որ համարյա իր ամբողջ կյանքում անգրագետ է եղել, իսկ իր երեխաների մեծ մասը բարձրագույն կրթություն ունի։ Այսպիսի հանդիպումները մոռանալ չես կարող։

— Մենք եղանք նաև կոլտնտեսականների բնակարաններում,— ավելացնում է Լոկառնոյի ժամացույցի գործարանի բանվորուհի Անտոնիին։— Մեզ շատ դուր եկավ գյուղացիների բնակարանների բարեկարգ վիճակը, մաքրությունը։ Էջմիածնի շրջանի Միկոյանի անվան կոլտնտեսությունում, մեղվապահի բնակարանում, ինչպես նաև ուրիշ կոլտնտեսականների տներում մենք լսեցինք ռուս մեծ ժողովրդի հասցեին ուղղված խորին շնորհակալության խոսքեր՝ Սովետական Հայաստանի աշխատավորներին նրա ցույց տված օգնության համար։ Երախտագիտության այդպիսի զգացմունքը Սովետական Միության ժողովուրդների մեծ բարեկամության վկայությունն է։

Լոզանի գրադարանավարուհի տիկին Կլերը պատմեց այն տպավորությունների մասին, որ դելեգացիայի անդամների վրա թողել է հայ ժողովրդի արվեստը։

— Այն, ինչ մենք տեսանք, իսկական հայտնություն էր մեր բոլորի համար,— ասաց նա։— Ամենից ուրախալին այն է, որ երաժշտության, ճարտարապետության մեջ և արվեստի մյուս ժանրերում պահպանված է ազգային հիանալի ինքնատիպությունը։ Հայկական ճարտարապետությունը անմոռանալի տպավորություն է թողնում։ Մեզ շատ դուր եկավ նաև հայ կոմպոզիտորների հրաժշտական ստեղծագործությունների հաներգը, ըստ որում պետք է նշել նաև հայ երաժիշտների կատարողական բարձր մակարդակը։

— «Խաղաղություն բարը,— ասում է ժընեցի տնային տնտեսուհի տիկին Բյուրին,— Սովետական Հայաստանում լայնորեն գործածվող բառերից մեկն է։ Հայաստանի աշխատավորները խաղաղություն են ցանկանում և պայքարում են հանուն խաղաղության։ Զուր չէ, որ պիոներները գրում են այսպիսի լոզունգներ. «Մենք խաղաղություն ենք ցանկանում, որովհետև ցանկանում ենք սովորել»։

Զրույցի վերջում դելեգացիայի մասնակիցները հայտարարեցին.

— Տուն վերադառնալուց հետո մենք շվեյցարացիներին խանդավառությամբ կպատմենք աշխատասեր հայ ժողովրդի երջանիկ կյանքի մասին։ Մենք հույս ունենք, որ մեր ժողովուրդները եղբայրներ կլինեն խաղաղության համար մղվող համատեղ պայքարում։ Մենք խորին շնորհակալություն ենք հայտնում Սովետական Հայաստանի աշխատավորներին՝ նրանց սրտագին հյուրընկալության, սրտաբացության համար, և ընդմիշտ կհիշենք ձեր երջանիկ ռեսպուբլիկայում անցկացրած օրերը։

***

Սեպտեմբերի 22-ին Շվեյցարիայի կանանց դելեգացիայի մասնակիցները ինքնաթիռով Երևանից մեկնեցին Մոսկվա։

(229)

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 24 սեպտեմբերի, 1953 թ.)

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱԼԻՆԵՆ

Երևանի մեջ 1937 թվականին տեղի ունեցան արվեստի առաջին ողիմպիական մրցումները։ Այդ օրերուն ես առիթն ունեցա մոտեն ճանչնալու Թալինի ու շրջակա գյուղերու հայ և քուրդ (եզիդի) արվեստագետները և տեսնելու անոնց ինքնարուխ արվեստի բազմապիսի շնորհքները, լեռնային ազատ շունչով տոգորված երգն ու պարը, հովվական մեղեդիները, հսկա թմբուկներու ահեղագոռ զարկերը, կշռութավոր խաղերը, մշեցիներու և սասունցիներու ավանդական հայկական ժողովրդական պարերը, քրդուհիներու ազատ ու ճկուն պարերը իրենց տոհմային խայտաբղետ տարազներուն մեջ։ Այս բոլորը անմոռանալիորեն տպավորվեցան հոգվույս մեջ։

1896 և 1915 թվականներու կոտորածներեն փրկված հայ ժողովուրդի մեկ մասը՝ Թալինի շրջակա գյուղերը հաստատված գաղթականներ էին, մեծ մասամբ մշեցի և սասունցի։ Այդ օրերուն ես բախտ ունեցա անոնցմե մեկ քանին նկարել գեղջկական տարազներով և կատարողական ձևերու մեջ։ Ողիմպիականը վերջանալե հետո, անոնք հրավիրեցին դիս, որ իրենց գյուղը տեսնեմ և վայելեմ իրենց հովոցներն ու յայլաղները, կաթն ու մածունը, սերն ու կարագը, մեղրն ու լեռնային բանջարները, մանավանդ Թալինի 42 սառնորակ աղբյուրներու շուրը և լեռնային մաքուր օդը։

Վերջին 16 տարիներու ընթացքին, ամեն դարնան, երբ քուրդ մտավորական ընկերներս Թալին կերթային, ինձ կհրավիրեին իրենց ընկերանալու։ Շատ կփոփոխեի, բայց այդ փոփոխը չէր իրականանար։ Վերջին անգամ ես այնտեղ գացի գյուղատնտես բարեկամուհիս՝ Մարո Պապյանի հետ։ Մայիսի 6-ին, առտուն կանուխ, Թալինցի երկու ընկերներու հետ, ինքնաշարժով ճամբա ելանք դեպի Թալին։

Չորս ու կես ժամ ասֆալտապատ ուղիներով՝ ծաղկալից դաշտերեն, գյուղերն ու լեռներն անցանք։ Օտար երկրի Հայրենիք վերադարձած կարոտյալի մը պես կլափեի ուշ ու ձախ փռված տեսարանները։ Հայրենիքիս այդ լեռնային մասերը բոլորովին այլ հրապույրով մը զիս գրավեցին։ Լեռներու փեշերուն փառած գեղեցկատեսիլ գյուղեր, իրենց շուրջը կոլտնտեսային խնամված հողեր, դաշտային անհուն տարածություններ, հոյակապ հուշարձաններ, խաչքարեր, ջրվեժներ, նորակառույց կամուրջներ և Ալագյազի գագաթները բարձրացող ճամբաներ...։

Մեզի ընկերացող ճարտարապետ Ազիզ Խաչատուրյանը, որ Սասունցի մըն էր, փոքր տարիքեն Թալինի մեջ մեծցած և Երևան ուսած, մեզի ծանոթացուց ճամբուն վրա գտնված հետաքրքրական և պատմական բոլոր վայրերը, գյուղ թե հուշարձան։ Մեր ուղեգիծը հետևյալն էր. Երևան—Հաղթանակի կամուրջ—Կոնյակի նորակերտ գործարան— Նոր-Կիլիկիա— Գարնջրի նոր գործարան— Էջմիածին—Աշտարակ (իր անվանի ձոր և կամուրջը)— Ագարակ գյուղ (պարտեզներով շրջապատված սիրուն տու-

ներ, դաշտեր, սերկևիլի ծաղկած և բուրումնավետ այգիներ)։— Գոշ գյուղ։ Այստեղ Աշոտ Երկաթի սիրած կնոջ գերեզմանը կա, վրան՝ տուֆ քարի վրա բացառիկ նրբությամբ քանդակված խաչքարով, որ կկարծվի Մխիթար Գոշի ձեռակերտը ըլլալ (Հայաստանի պատմական հուշարձաններու պահպանության կոմիտեն բացատրական տախտակ մը զետեղած էր)։ Քիչ հեռուն գիտեցինք ժայռոտ լեռներու ստորոտը, հոյակապ տեսքով, կարմիր տուֆ քարի երանգներով Բալինի անվանի տաճարը, շինված Գագիկ Արծրունի թագավորի օրով։ (1951 թվականին նոր պեղումներու միջոցով թագավորական պալատներ գտնվեցան այս տաճարին շուրջը)։ Հասանք Բազմաբերդ (անցյալին Ալջաղալա գյուղը)։ Չորս կողմը բարձրաբերձ բլուրներ և ցանքատարածություններ։ Այս գյուղին մոտ զետեղված էին երկաթյա հսկա խողովակներ, որոնք Այազյաղի լանջերեն հոսող 42 ջուրերը կամբերեն և կբաժնեն շրջակա գյուղերուն (այս աշխատանքը կատարած է մեր ուղեկից Ազիզ Խաչատուրյանը)։ Այդ սառնորակ, բյուրեղի պես հստակ և անմահական ջուրեն խմեցինք։ Բազմաբերդի բարձունքեն դիտված համայնապատկերը չքնաղ էր. զմբրխտավառ կանաչություններ տարածված էր ամեն կողմ, և այդ կանաչին մեջ՝ տասնյակներով գյուղեր։ Պատկերավոր է Շամիրամ գյուղը իր նորակերտ տուֆ քարե բարձրացած քանի մը շինություններով, որոնցմե մեկը գյուղի դպրոցն է իր հարակից շենքերով, ակումբով և մարզադաշտով։ Ահա մեր աչքին տակ պարզվող Կոքաման գյուղը, որուն շուրջը, բարձրադիր բլուրներուն վրա՝ սպիտակ մեծ ու փոքր ժայռերը արևի ճառագայթներուն տակ, պլպլացող հսկա լույսերու տպավորությունը կուտային։ Կաքաման կանաչագեղ գյուղի դաշտավայրին մեջ տեսանք նորակերտ դպրոցը՝ իր սպիտակ ժայռերու քարիլուր շինված։ Ինձ կզարմացներ այն, որ մեր անցած բոլոր գյուղերը ունեին իրենց ինքնուրույն կյանքը և ավանդություններ։ Որքա՞ն տպավորիչ են մեր ճամբուն վրա հանդիպած այս շեն ու չքնաղ գյուղերը։ Կիրակնօրյա հուսկեռ։ Գյուղացիներն ամեն տարիքի մարդիկ, մաքուր ու կոկիկ հագված, ինկեր են այգիներու ու դաշտերու մեջ պրոմենելու։ Որքա՞ն հաճելի է, երբ մեր ինքնաշարժը ամեն նոր հուշարձանի առջև կանգնած պահին, համատարած լեռնային լուությունը հանկարծ կխզվի մոտակա գյուղեն լսվող ժողովրդական երգի մը հնչյունները, և կամ բրուրի մը վրայեն մեզ հասնող խաշնարած հովիվին սրինգին նվագը։ Լեռնային այս զմայլելի բնության մեջ ջինջ կապույտ երկնակամարը, անոր մեջ մխրճված լեռներ, զագաթեն մինչև փեշերը ձյունասպիտակ։ Զմրխտակեղ վառ կանաչը փռվեր է ամեն կողմ, դաշտերը լեցուն են գունեղագույն ծաղիկներով, քարաժայռերը գահանան երանգներ ունին հանքային բաղադրություններու համաձայն։ Գյուղական կոլխոզներու հողերը սահմանագծված են խոշոր քարերով։ Ամեն գյուղ ունի իր յոթնամյա կամ միջնակարգ նորակերտ տուֆ քարե դպրոցը իր հարակից խաղադաշտով և ակումբով։ Բազմաբերդեն երբ սկսանք բարձրանալ սարն ի վեր դեպի Վերին Բազմաբերդ, տեսանք Սառնաշեն գյուղի նորակերտ միջնակարգ դպրոցի լայնանիստ շենքը և ակումբը։ Այս գյուղը լեռնային հիանալի տեսարան ունի։ Իր սառորտեն կանցնին փրփրացող դեսակներ։ Մեր ճամբորդությունը վերջացավ Վերին Բազմաբերդի յոթնամյա դպրոցին առջև, կառուցված մեկ ուղեկցող Ազիզ Խաչատուրյանի նախագծով։ Այդ շենքը այցելելի վերջ առաջնորդվեցանք մոտակա տուն մը, որ Խաչատուրյանի ծնողքին կպատկաներ։ Նահապետական բազմանդամ ընտանիքը՝ հայր, մայր, հինգ եղբայր, հարսներ, թոռներ, աղջկաներ և դրացիներ մեզ դիմավորեցին, մեկ խոսքով փոքր բանակ մը, կազմված՝ մեծ մասամբ ասասունցիներեն, որոնք աճեր ու բազմացեր էին իրենց հարազատ այս լեռներուն մեջ։

Ավելորդ է ըսել, թե ի՞նչ մեծ ախորժակով մասնակցեցանք ասասունցի ընտանիքի նահապետական ճոխ սեղանին։ Տան մայրիկը, ծերունի, բայց առույգ թանկագին, իր ծննդավայր Սասունի մեջ հայտնի գեղեցկուհի մը եղած է։ Այստեղ կարժե հիշատակել ասասունցի նահապետական տան մեծին ու փոքրին առանձնահատուկ շնորհքները, մանավանդ արվեստի մեջ. երգ ու պար,

երաժշտություն, բանաստեղծություն, նկարչություն միացեր են այդ գյուղական երդիկին տակ։ Հայկական ժողովրդական արվեստի այս ամբողջական երդիկը, որ սովետական երջանիկ ընտանիքի պայծառ դեմքն ունի, կպատկերե սասունցիներու հաղարավոր ընտանիքներ, որոնք անցյալի կոտորածներեն մազապուրծ փրկվածներ ըլլալով, տասնյակ տարիներե ի վեր հաստատված հայրենի հողին վրա և վերաշինած իրենց երդիկները, ազատ ու երջանիկ կապրին Սովետական Հայրենիքի մեջ։ Սասունցի խաչատուրյաններու տան մեջ, իրենց ընտանիքի անդամներեն զատ, որոնց մեծ մասը մասնագետներ են, բոլորն ալ Երևան ուսած՝ գյուղատնտես, ճարտարապետ, ճանչցա նաև մշեցիներ և սասունցիներ, որոնք նույնպես ավարտելով Երևանի բարձրագույն մասնագիտական դպրոցները, Վերին Բազմաբերդի և շրջակա գյուղերու միացյալ կոլտնտեսության մեջ ծառայողներ էին։

***

Վերջալույսին հրաժեշտ առինք խաչատուրյան ընտանիքեն։ Գյուղի կտուրներուն վրա կանգնած հարևաններ, որ իրենց կիրակնորյա սեղանները փռած էին, մեզի ողջերթ կմաղթեին։ Վերջին անգամ կրկին դիտեցի 75 տուն ունեցող այս փոքրիկ գյուղը, որուն բնակիչները մեծահոգի, աշխատասեր հայրենասերներ են և այսօր կապրին ապահով և երջանիկ կյանքով։ Բազմաբերդի գյուղացիության մեծ մասը կզբաղի հողագործությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ։ Երբ մեր ուղեկցի՝ Ազիզ խաչատուրյանի և իր եղբոր՝ Խաչիկի հետ ինքնաշարժ նստանք, արդեն Ալագյազի ցուրտը պատեց մեզ և մենք իմացանք, որ Ալագյազ լեռան գագաթեն միայն 7 կիլոմետր հեռավորության վրա էինք։ Թալինեն մինչև Երևան ցուրտը քիչ-քիչ մեզմացավ։ Ասֆալտապատ ճամբան ամբողջ երկայնքին կշողար լուսնի լույսով։ Կես գիշերը անցած էր, երբ այս հիանալի և անմոռանալի ճամբորդությենեն հասանք Երևան, մեր սիրելի Հայրենիքի այնքա՜ն քաղցր, հրաշակերտ մայրաքաղաքը, որուն գլխավոր փողոցներուն վրա, հաղարավոր ժողովուրդ թատրոններեն, կինոներեն և գրոսավայրերեն ուրախ և երջանիկ կվերադառնար տուն և էլեկտրական լույսերով ողողված տրոլեյբուսներ, տրամվայներ, ավտոբուսներ և տակսիներ օր-ցերեկի պես եռուզեռի մեջ էին դեռ։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. ՆՐԵՄՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ

(14-րդ դար)

1. 12—14-ՐԴ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ

Մոնղոլական գերիշխանության ժամանակաշրջանը՝ 12—14-րդ դարերը, հանդիսանում է հայոց պատմության ամենահուպիչ ու մռայլ մի շրջանը։

Մոնղոլները, իրենց արշավանքների ժամանակ, հայ ժողովրդին ո՛չ միայն տնտեսական ծանր շահագործման են ենթարկում, այլև մեկը մյուսի եռևից հրկիզում են Հայաստանի գյուղերը, ավերում են ավանները, քանդում են վաճառաշահ, ծաղկուն ու շեն քաղաքները՝ Անին, Կարսը, Դվինը, Կարինը և այլ վայրեր, իսկ բնակիչներին գերեվարում են կամ կոտորում։ Այդ ծանր, կործանիչ ու դաժան քաղաքականության հետևանքով քայքայվում է Հայաստանի տնտեսական կյանքը և բնակչության նյութական վիճակը։ Հայ ժողովրդից շատերն այն աստիճան աղքատանում են, որ չեն կարողանում պահանջված ծանր հարկը վճարել, և անօրենները պարտքի փոխարեն առնում են նրանց հարազատ զավակներին։ Այդ մասին թանկագին մի վավերագիր է 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու հետևյալ վկայությունը.

«...Եւ յամենեցունց պահանջեալ խստադոյն հարկս, աւելի քան զկար մարդոյն, և սկսան չքաւորիլ, և նեղէին անհնարին կոտանօք և չարչարանօք և գեյոցօք. և որ թագէր՝ ըմբռնեալ սպանանէին, և որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն...»[1]։

Սա 1254 թվականին Հայաստան ուղարկված հարկահավաք Արղունի հարկահանության պատկերն է։

Ահա՛ մի այլ ցայտուն և պերճախոս նկար։ Դա այլադգիների անիրավությունները և հայ ժողովրդի 1295 թվականի թշվառությունները պատկերող արժեքավոր մի փաստաթուղթ է, որ մեզ ավանդ է թողել 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի սկզբներին ապրող տաղանդավոր բանաստեղծ Ցրիկը։ Իր հռչակավոր «Գանձատոմ»ի մեջ նա դատն կսկիծով դրել է.

«Այլ կամք ի ձեռս անօրինի,
Որք կու վարեն անդին դերի.
Ո՞րքան քակեն եկեղեցի,
... Քանի՞ կանայս առնեն այրի,
Եւ ո՞րքան որդ քրիստոնէի.
Ո՞րքան արիւն հեղան յիրկրի,
Քանի՞ առնեն բան խոտելի։
Ո՞րքան ուանջեն զմեղ յաշխարհի
Եւ կեղեքեն զկանս մեր յայտնի»։

Մոնղոլ բռնակալների հարկային ծանր լուծի, կեղեքումների և ժողովրդի զրկանքների մասին փաստական տեղեկություններ արձանագրել են նաև դեպքերին ականատես այլ գրիչներ։ Այդ անսահմանից թանկագին

1. «Կիրակոսի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909 թ., էջ 348—349։

մի աղբյուր է Դանիել Աղթամարեցու 1307 թվականին Աղթամարում գրած հիշատակարանը, ուր կարդում ենք այսպիսի տողեր.

«Եւ արդ, ես՝ ունայնս և զատարկս ի գործոց բարեաց, ներփանաք և փցունս ի գրչաց Դանիէլ սուտանուն կրաւնաւոր, եղկնագիծ դրոշմեցի զսա իմով մեղսամած մատամբս ըստ իմում տկարութեանս, ի դառն և ի տարտարոս ժամանակիս, յորում դարձաւ աղգն Իսմայէլի անչափ, մինչև դարձուցին յիւրեանց սնոտի յոյսն զամենայն աղգն նեռոզաց... Եւ նեղեն զամենայն քրիստոնեայք դառնալ ի պատիր յոյսն իւրեանց, զոմն նեղեն, տանջեն, զոմն սպանանեն, զոմանց զինչսն յափշտակեն... այլ և եդին ի վերայ ամենայն քրիստոնէիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի վերայ ուսուց թիկանցն կապաս սեաս, զի որք տեսցեն զնոսա՝ ճանաչեսցեն եթէ քրիստոնեայք են և հայհոյեսցեն. և ամենեքին ջանան, զի մի՛ երևեսցի քրիստոնէութիւն ի վերայ երկրիս»[2]։

Ինքնանկար Սարգիս Պիծակի
(Հայկ. ՍՍՌ Պետական մասնադարան, № 2627 ձեռագրից)

Որ հայ ժողովրդի իսկական ճշգրիտ պատմությունը գրելու համար ձեռագրերի հիշատակարաններն անգնահատելի աղբյուրներ են, դա անժխտելի է։ Դրանցից մեծ արժեք է ներկայացնում Սարկավագ գրչի 1310 թվականին, Հովհաննավանքում, վրացի իշխանուհի Մամախաթունի համար գրած ավետարանի հիշատակարանը, ուր կան ցայտուն տվյալներ հայ ժողովրդի դառն կացության, բնաջնջման, ծայր աստիճան թշվառության, նույնիսկ որդիների վաճառման մասին։ Ահա՝ մի փոքրիկ նկար.

«... Բայց զաղէտ և զողբ տարակուսանացս ո՞ զինչ պատմեսցէ, զի ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեալ լինին ուստերք և դստերք աշխարհս մեր, և բազում զեկք և վանորայք աւեր և անհանգիստ. և քահանայք տարաշիարհիկ լինին. և այս ամենայն վասն մեղաց մերոց»։

Հայ ժողովրդի անսահման թշվառության և պավակների վաճառման մասին պերճախոս վկայություն է նաև Սարգիս գրչի 1314 թվականին գրած «Գործք Առաքելոցի հիշատարականը, ուր արձանագրված են այսպիսի հուզիչ տողեր.

«...Բայց և գրութիւնս սորա եղև ի թագաւորութեանս Հայոց Աւշրնի և ի զանութեանն աղգին Իսմայէլացոց Խարպանդային, ի նեպ և ի դառն ժամանակիս, որ անգաւ աղգս Հայոց ընդ լծով հարկի, և չկայ յոյս ապրելոյ և ոչ տեղի ապաստանի. և էր աշխարհ յամենայն ի տառապանք և ի հարկապահանջութիւն և ի սպառ նուազեալ էր աղգս Հայոց։ Եւ ի քաղաքիս յայսմիկ ի Թէոդոսիոպոլիս քակեցին եկեղեցիք բազում, և ոմանք, թողեալ զհաւատս որ ի Քրիստոս, և զնացեալ զհետ անօրինաց Իսմայէլացոց աղգի, և այլք, վաճառեցին զտղայս իւրեանց, և ինքեանք փախուցեալք յայլ և այլ տեղիս, և ոչ ուրեք դասանիւր տեղի ապաւինի. և այլ բազում վիշտս և տառապանս, որ կայր ի վերայ աշխարհի վասն մեղաց մերոց»։

Մի հանգամանք պարզ է, որ թաթարական տիրապետությունը, Եգիպտոսի սուլթանական արշավանքները և ներքին կրոնական անմիտ երկպառակությունները Հայաստանի բնակչության քաղաքական ու տնտեսական կյանքին և հայ մշակույթին ծանր կերպով հարվածում են։ Սակայն, փաստ է և այն, որ օտար հարձակումներն ու գերիշխանությունը հայ ժողովրդի ստեղծագործող ոգին չեն կարողանում մեռցնել։

2. «Հոլովումն բնությունեան Կիւրղիս», Երևան։

2. ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏԿԵՐԸ 12—14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Հակառակ ստեղծված ծանր պայմաններին, 12—14-րդ դարերում Հայաստանում մշակութային կյանքը ոչ միայն կանգ չի առնում, այլև նոր երանգ է ստանում։ Այդ գեղեցիկ երևույթի համար պարտական ենք դարաշրջանի մի շարք լուսամիտ, դիտակից և լավագույն մշակներին, որոնցից ոմանք գործի ներշնչողը, ոմանք էլ հայ մշակույթի ոգեվիրաները են հանդիսանում։ Ահա այդ պայծառ գեմքերից Լևոն Բ. թագավորը, որ Կիլիկիայում մի շարք բարենորոգումներ է մտցնում։ Նույն պատմաշրջանում բացվում են նաև նորանոր դպրոցներ, որոնցից հրաշակվում են Ակների, Սկևռայի, Սսի, Դրապարիի և այլ ուսումնարանները, իսկ Հայաստանում առանձնապես մեծ համբավ են վայելում Սանահնի, Տաթևի, Հաղբատի, Նարեկի և այլ դպրոցները, որոնք հայ գրականության, արվեստի և հասարակական մտքի զարգացման փայլուն կենտրոններ են հանդիսանում։ Այդ լուսավոր տաճարներում սովորում են հայ մշակույթի վաստակավոր գեմքերից շատերը, որոնք իրենց ստեղծագործություններով զարկ են տալիս ժամանակի ոչ միայն պատմագրությանը, այլև իրավաբանական, դիտական, գեղարվեստական գրականությանը և հատկապես տաղերգությանը, որ միջնադարյան հայկական բանաստեղծության մեջ ուրույն տեղ է գրավում։

12—14-րդ դարերում առանձին փայլ են ստանում նաև ժողովրդական բանահյուսության էջերը, որոնց մեջ ուրույն տեղ են գրավում պանդխտական տաղերը, աշխատանքային երգերը, առածները և հեքիաթները։

Հիշատակության արժանի են նաև նույն դարաշրջանի պատմագիրները, որոնց շարքում փայլում են՝ Կիրակոս Գանձակեցի, Վարդան Բարձրաբերդցի, Ստեփանոս Օրբելյան, Մաղաքիա արևղա, որոնք նկարել են սելջուկների ու մոնղոլների ավերածությունների պատկերը և բողոքել Հայաստանը տնտեսական անկման հասցնող նրանց դաժան քաղաքականության դեմ։ Ահա թե ինչո՞ւ հայ և Անդրկովկասի ժողովուրդների, ինչպես նաև Մերձավոր Արևելքի 12—14-րդ դարերի քաղաքական ու տնտեսական պատմության համար հայ պատմագրերի ստեղծագործությունները խոշոր արժեք ունեն։ Իլ չենք նշում 12-րդ դարի պատմագրուհի Մատթեոս Ուռհայեցու ժամանակակից իրատեսական ոճով ու շատ պարզ, հասարակ լեզվով գրած հիասքրքիր ժամանակագրությունը, որ նա խոր ասելությունով արտահայտվում է հույների կրոնական հալածանքների ու մահմեդական բռնակալների դեմ, միաժամանակ առանձին ուշադրությամբ պատմում սելջուկների քաջագործությունները։

Հայ պատմիչների հետ հանդես են գալիս նաև հռչակավոր տաղերգուներ։ 12-րդ դարի հայ գրականության ամենափայլուն մշակներից արձանագրենք նախ Ներսես Շնորհալու հմայիչ անունը (1102—1172 թ. թ.), իր ժամանակի հանճարեղ բանաստեղծը, որ հայտնի է ո՛չ միայն իր բազմաթիվ շարականներով,— «Նորոգ հրաշ պսակաւոր» (Վարդանանց Ներբողեանը), «Աստուծոյ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Նորաստեղծեալ»,— այլև ժողովրդական լեզվով ու ոճով գրած 120 հանելուկներով ու առակներով։ Առանձնապես ընդգծենք նաև նրա «Ողբ Եղեսիոյ» գեղարվեստական արժեքավոր պոեման[3], որ իր ժամանակի գրականության մեջ մի նոր շարժում է առաջ բերում։

Այնուհետև, 13-րդ դարում, փայլում են երկու նշանավոր նոր բանաստեղծներ— Ֆրիկը և Կոստանդին Երզնկացին, որոնք օգտվելով ժողովրդական բանահյուսության գանձերից, երգում են ոչ միայն աշխարհաբար՝ միջին հայերենով, այլև հայ բանաստեղծական գրականության նվիրում են դիտարվեստական լավագույն էջեր։ Նրանցից Ֆրիկն իր լիրիկական ոտանավորներով ոչ միայն արձանագրում է կյանքում տիրապետող անարդարությունները, այլև քաղաքում է ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական անհավասարության դեմ։ Ահա՛ և Երզնկացին, հայ բանաստեղծական արվեստի խոշոր վարպետներից մեկը, որի ոտանավորները փայլում են իրենց գունագեղ լեզվով ու պատկերավորությամբ։ Բնության և սիրո տաղանդավոր այս տաղերգուն յուրահատուկ ոճով երգում է իրական կյանքն ու աշխարհը, միաժամանակ պատկերում է կնոջ գեղեցկությունը։ Նա գրում է աշխարհիկ մարգկանց համար «քաղցրահամ բաներ»։ Նա առաջինն է հանդիսանում, որ սիրը է դնում սիրային լիրիկային, աշխարհիկ սիրո մոտիվը մտցնում է հայ քնարերգության մեջ։ Դրա համար նա իր ժամանակի իրավարամիտ հոգևորականների կողմից հալածվում է։

---

3. Դա Հալեպի Զանկի ամիրայի արշավանքի պատմությունն է։ Կիլիկիայի սահմանների մոտ գտնվող ծաղկած Եդեսիա քաղաքը, 1144 թվականին, հանկարծակի պաշարվում է Զանկի ամիրայի զորքերից, որոնք անգութ կոտորածի են ենթարկում քաղաքի բնակիչներին։

Հրապարակի վրա երևում են նաև նշանավոր առակախոսներ, որոնցից 13-րդ դարում իշխում է Վարդան Այգեկցին, որի առակներում տեսնում ենք ժողովրդի իմաստությունը և ժողովրդական բանահյուսության բարձր արվեստը։ Առհասարակ, նա մեկն է իր դարաշրջանի այն պայծառ, լուսավոր գեղեցիկներից, որ իր հարիսնած առակներով, անեկդոտներով և մանր, պարզ վիպական պատմվածքներով իր ժամանակի հասարակական տրամադրությունների արտահայտիչն է հանդիսանում և ծաղրի ենթարկում ֆեոդալներին ու տգետ հոգևորականներին։

Դարաշրջանի մի այլ ուշագրավ երևույթն իրավաբանական դրականության նվաճումն է, որի լավագույն դրոշակակիրը հանդիսանում է մի հայ գիտնական։ Դա 12-րդ դարի հռչակավոր օրինագետ և իրավաբան Մխիթար Գոշն է (Գանձակեցի), պատմական խոշոր արժեք ներկայացնող «Դատաստանագիրք» աշխատության հմուտ հեղինակը, որ մեծարժեք և անմահ Եզոպոսից հետո հայ առաջին առակագիրն է, միաժամանակ իր մշակած 190 առակներով դեղար-

Ավետարանի խորան

(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 5780 ձեռագրից)

վեստական արձակի հիմնադիրը։ Նրա շատ սեղմ ու հղկված ոճով գրած առակները դրավիչ են նաև իրենց երգիծաբանական երանգավորումով։

Հիշատակենք նաև 13-րդ դարի կեսերին կազմված Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրք»-ը, որ գործադրվել է Կիլիկիայում։

Պատմաշրջանի գրականության մեջ ուրույն տեղ են գրավում նաև բժշկական դիտության էջերը։ Դեռ 12-րդ դարում հանդես են գալիս մի քանի նշանավոր բժիշկներ, որոնց մեջ համբավ ու հռչակ է վայելում ժողովրդից սիրված և իմաստուն մի բժիշկ։ Դա Մխիթար Հերացին է, որ ոչ միայն ռամկորեն, պարզ, հասկանալի լեզվով հորինում է «Ջերմանց մխիթարութիւն» խորագրով բժշկական գիրքը, այլև զբաղվում է փիլիսոփայությամբ և աստղաբաշխությամբ։

Միխիթարական դպրոցը է ներկայացնում նաև հայկական ճարտարապետությունը, որ առանձին դարկ է ստանում։ Կառուցվում են հայկական ոճով նոր հուշարձաններ, որոնց մեջ կենտրոնական տեղ են գրավում Գոշավանքը, Հաղարծինը, Սանահնի և Հաղբատի վանքերը, Գեղարդի վիմափոր, նաև Մաղկաձորի եկեղեցիները և այլ կոթողներ, որոնք իրենց արվեստով ճարտարապետական խոշոր արժեք են ներկայացնում։

Դա այն դարաշրջանն է, երբ առանձին փայլ է ստանում և ուշագրավ նվաճումներ անում նաև քանդակագործական արվեստը։ Իրենց նրբությամբ հայտնի են Գոշի խաչքարերի քանդակները և Սյունյաց բարելեփները։

Բնորոշ է, որ դարաշրջանի երաժշտական արվեստը ևս նոր երանգ է ստանում։ Այդ հանգամանքը հաստատում են 13-րդ դարի մատենագիր Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ արձանագրված տողերը, որոնք ընդգծում են, թե երաժշտական խաղերը փոքր Ասիայից կամ Հունաստանից առաջին անգամ Հայաստան բերող Խաչատուր վարդապետ Տարոնեցին 12-րդ դարում ձայնագրում, խազավորում է շարականներից «Տերհուրդ խորհնոյ» և հոգևոր այլ տաղեր։ Իր «երաժշտական արվեստով նա իր ժամանակակիցների շրջանում շուտով մեծ հռչակ է ստանում։ Նրա անունն այսօր կապված է հայկական հին խազերի շահեկան և հետաքրքիր ձայնագրության վերջնական կազմակերպման հետ։

Միջնադարյան հոգևոր երաժշտության պատմության էջերն արձանագրելիս նշենք իր ժամանակին հռչակված մի երաժշտագետի պայծառ դեմքը ևս։ Դա 12-րդ դարի փայլուն արվեստագետ, հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին է, որ հայ դրականության պատմության մեջ հայտնի է, ինչպես գրել ենք, որպես խոշորագույն բանաստեղծ։ Նրա ստեղծագործություններից հիշենք նաև «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ» և ուրիշներ։ Արժեքավոր են նաև նրա «Վասն ուրախութեան մարդկան» հյուսած 120 հանգավոր հանելուկները, գրված ժողովրդի խոսած բարբառով։ Սակայն, Շնորհալու ստեղծագործական արժեքը բարձրացնում են նաև նրա հորինած շարականները, տաղերն ու դանձերը, որոնցից ոմանք կրում են արարական երաժշտության խոր ազդեցություն։ Նա է ձայնագրել «Առաւօտ լուսոյ», «Նայեաց սիրով», «Աշխարհ ամենայնս» և այլ եկեղեցական երգերը։

Գծենք 13-րդ դարի մի այլ նշանավոր երաժշտագետի նկարը։ Դա երգահան Հուսեփն է։ Գրչագիր Հովհաննեսն իր 1241 թվականին գրած տաղարանի հիշատակարանում թախանձում է հիշել «երևելի երաժշտագէտ» Հուսեփին, որ ապրել է Կիլիկիայում, Հեթումի թագավորության շրջանում։ Նա լավ ծանոթ լինելով եկեղեցական երաժշտության, խոշոր աշխատանք է կատարում, ստեղծագործելով «լիավորապես զուտ հայկական ոճով և իր ինքնուրույն արվեստով դարկ է տալիս հոգևոր երաժշտությանը։ Սակայն, նա զբաղվում է ոչ միայն հայկական հղանակների հայնագրությամբ, այլև օգտագործում է պարսկական և ասորական հղանակների ձայները, մի երևույթ, որը բացառիկ արժեք է ներկայացնում հայ միջնադարյան երաժշտության զարգացման հարցերը լուսաբանելու և, որ էականն է, պարսկական, ասորական և հայկական երաժշտության փոխհարաբերությունները մեկնաբանելու տեսակետից։

13-րդ դարում, Ակների պատմական վանքի կամարների ներքո, հայ երաժշտության դարկ է տալիս մի այլ լավագույն երաժիշտ։ Դա Մանվելն է, որ իր ժամանակի երաժշտական արվեստի վաստակավոր մշակների շարքում ունի իր համեստ էջը։ Նա է, որ Արքայական Պողոս կրոնավորի դրչով գրված «Էֆրեմի Սիրոսի ներբողեանց հոմարենից թարգմանված ճառի ձեռագրերը, իր ուսերի վրա դրած, բերում է «յիրկնանքման սուրբ և աստուածարնակ անապատն ի յԱկներն»։ Ահա՛ հիշատակարանի վկայությունը.

«... Ցիշեսջիք ազգությունք գաստուածապատուեալ հայրն զՍտեփանոս, զառաջնորդ սուրբ ուխտիս Ականց անապատիս. և զծնաւղսն իւր և զիմաստուն երաժիշտ զՄանուէլ, որ ուսաւ իւրով բերաւղ եղև ճառիս ի վանսս»

13-րդ դարի վերջին և 14-րդ դարի առաջին շրջանում, Դրազարկի պատմական վանքում փայլում է մի նոր երաժիշտ։ Դա Թորոս վանականն է, որ օժտված լինելով երաժշտական ընդունակությամբ, նպաստում է իր ժամանակի երաժշտության զարգացմանը։

12—14-րդ դարաշրջանների հայկական դեղարվեստի պատմության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նաև գեղագրության և մանրանկարչության արվեստները, որոնց զարգացումն ու վերելքը տեսնում ենք ձեռագրերի զարդանկարչության մեջ։ Ուշագրավ է այն, որ մանրանկարչության արվեստը 12—14 դարերում ծաղկում է ոչ միայն Արևելյան Հայաստանի նշանավոր կենտրոններում, որոնց շարքում ուրույն տեղ են գրավում Տաթևը, Գլաձորը, Հաղբատը, Նորավանքը, Թագնայրը, Տարոնը և Աղթամարը, այլև բարձր կատարելության է հասնում Արևմտյան Հայաստանի կամ Կիլիկիայի գեղարվեստական կենտրոններում՝ մայրաքաղաք Սսում, Կարմիր վանքում, Զորոյ վանքում, Փոս անապատում, Գալու անապատում, Սկևռայում, Հռոմկլայում, Դրազարկում և նրա հետ կապված Գոների և Ակների դպրոցներում։ Ահա այդ լուսավոր կենտրոններում հայ գրչության արվեստը, գեղագրությունը, նկարչությունը, մասնավորապես մանրանկարչությունը զարգանում են և լայն ծավալ ստանում, երևույթներ, որոնց մասին տաղանդավոր արվեստագետ Գարեգին Հովսեփյան Վեհափառն իր «Կոստանդին Ա. կաթողիկոս» խորագրով հոդվածում գրել է.

«ԺԳ. դարի երկրորդ քառորդից հետո գրչության և մանրանկարչության արվեստները իրենց բարձրագույն զարգացման շրջանն են ապրում։ Ոչ միայն Հռոմկլայի դպրոցը, կաթողիկոսի անմիջական հովանավորության տակ, տալիս է իր գեղեցկագույն գործերը, այլև Դրազարկի, նորա հետ կապված Գոների և Ակների դպրոցները։ Ոչ միայն կաթողիկոսը, այլև Հեթում Ա. և նորա եղբայրները՝ Սմբատ

Հովհաննես ավետարանիչ

(Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի № 5780 ձեռագրից)

Գունդստաբլ և մանավանդ Հովհաննես արքահեղբայր, Վասակ Ճանճռ տեր, Լևոն Գ. և Թագուհին Կեռան, Հեթում Բ..., հանդիսանում են արվեստի հովանավորներ և մեկենասներ։ Նրանց օրով մեր գեղագրական և մանրանկարչական արվեստներն իրենց ոսկեդարն են ապրում»[1]։

Ահա Կիլիկիայի գեղարվեստական դպրոցներում իր ժամանակին մեծ համբավ ու հռչակ են վայելում մի խումբ հմուտ, վարպետ ու ձևակերպված նկարիչներ, որոնց շարքում պատվավոր տեղ են գրավում բարձր տաղանդով օժտված խոշոր արվեստագետներ՝ Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Թորոս Տարոնեցի, Գրիգոր Նրեց, Իգնատիոս, Հակոբ դպիր և ուրիշներ, որոնց վրձինի ստեղծագործությունները, իրենց նրբությամբ և արվեստի ինքնուրույնությամբ, մեծ արժեք են ներկայացնում։

1. «Հայաստանեայց եկեղեցի», 1942 թ., № 1։

(Շարունակելի)

Ս. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Երևելյան Հայաստանի ազատագրությունը պարսկա-թուրքական տիրապետությունից, որ սկսվեց 19-րդ դարի սկզբից, վերջացավ 1828 թվականի փետրվարի 10-ին, երբ կնքվեց Թյուրքմենչայի պայմանագիրը։ Մոտ քառորդ դար տևող պայքարի այդ լարված շրջանում բացառիկ սխրագործություններ գործեցին հայ ժողովրդի անվեհեր զավակները։

Ռուսական զորաբանակի հրամանատարությունը, իր ժամանակին, նշել է հայկական զորամասերի, հայ առանձին անհատների ցույց տված բացառիկ քաջագործությունները ինչպես պարսից, այնպես և թուրք զորքերի դեմ վարված ճակատամարտերում։ Ռուսական հրամանատարության այդ կարծիքը խտացված ձևով արտահայտել է Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինը իր 1827 թվականի մայիսի 24-ին գրած կոչում. «Անցյալ տարվանից պարսկական զորքերի մեր սահմանը ներխուժելու պահից, հայերը աչքի են ընկել իրենց անվեհերությամբ ընդդեմ թշնամիների, անսասան կայունությամբ՝ վերահաս աղետների մեջ»[1]։

Հանրահայտ են Խալատուր Աբովյանի խոսքերը հայերի ցույց տված օգնությանը ռուսական զորաբանակին. «Ինչ որ պարսից կովի ժամանակին հայերն արին,— գրում է նա,— թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտանեն»[2]։

Պատմական այս ժամանակաշրջանից մեզ հայտնի են ժողովրդական մի շարք հերոսների անուններ՝ Վանի Աբրահամով, Հավոր Հարությունյան, Իվան Ալանյան, Ռոստոմ Լաշինով և ուրիշները։ Մենք ուզում ենք համառոտակի կանգ առնել այդ շարքի աչքի ընկնող դեմքերից մեկի՝ Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի գործունեության վրա։

Այս հանրահայտ ու ժողովրդասեր եպիսկոպոսը ծնվել է 18-րդ դարի վախճանական թվականներին Շամշադինի Հախում գյուղում։ (Այս գյուղից ոչ շատ հեռու գտնվում է 11-րդ դարի վերջերին կառուցված Վարագա Ս. Նշանի հռչակավոր վանքը)։ Հախում գյուղը 19-րդ դարի սկզբից համարավ ստացավ շնորհիվ այն դանի, որ նա ծննդավայրն է հանգիստացել Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի, որի անունով և կոչվել է «Վարդապետի գյուղ»։

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը, հետևելով մեր հայրենասեր հոգևորականների օրինակին, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ասպարեզ է իջնում 19-րդ դարի սկզբներում։ Ժամանակավորապես մի կողմ թողնելով իր վեղարն ու սքեմը, նա հագնում է գյուղացու շուխան, դնում է վափախը և նվիրվում հայ ժողովրդի ազատագրության գործին։

Կարճ ժամանակամիջոցում Մանուչարյանին հաջողվում է իր շուրջը համախմբել Շամշադինի և Ղազախի հայերից մոտ 500 կտրիճ երիտասարդներ, որոնք իրենց պատրաստակամությունն են հայտնում իրենց կյանքը զոհելու Հայրենիքի ազատության սրբազան գործի համար։

Լինելով իր ժողովրդի հարազատ զավակը, Մանուչարյանը չի հանդուրժում պարսկական խանների ու սարդարների վայրագությունները, նրանց կատարած անպատմելի բռնությունները հայ ժողովրդի և հարևան մյուս ժողովուրդների նկատմամբ։ Նա մինչև հո-

1. Տե՛ս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1951 թ., № 11, էջ 17։

2. Ե. Աբովյան, Ընտիր երկեր, Երևան, 1939 թ., մաս I, էջ 143։

գու խորքը խոցվում է՝ տեսնելով օտարի կողմից անարգվող հայ շինականը, տեսնելով ամենուր թագավորող վիշտն ու կարիքը։ Եվ շատ անգամ վտանգելով իր կյանքը, աշխատում է պաշտպանել իր հայրենակիցների գույքն ու պատիվը։

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը, իր հայկական հեծելազնդով, առաջին անգամ կռվի մեջ է նետվում 1803 թվականին. նա մասնակցում է իշխան Ցիցիանովի Գանձակի ռազմական արշավին, ինչպես և Երևանի արշավանքին։ Հայրենասեր եպիսկոպոսը ռազմական իր խիզախ գործողություններով օգնում է ռուսական զորատարար բանակին՝ թիկունքից հարվածում թշնամուն և մեծ կորուստ է պատճառում նրան։

Չնայած իր գնդի փոքրաթիվ լինելուն, Գրիգոր եպիսկոպոսը դիմում է համարձակ գործողություններին։ «Պարսից հեծելազորի հետ կռիվ սկսողը և հակատահար լինողը,— գրում է Ա. Երիցյանը,— միշտ Գրիգոր արքին էր լինում յուր փորձներով։ Սարսափելի էր դառնում այս հեզ և համեստ հոգևորականը պատերազմի դաշտում, թուրը հանած միջոցին»[3]։

Իշխան Ցիցիանովը, բարձր գնահատելով հայրենասեր եպիսկոպոսի գլխավորած գնդի արշավանքների ժամանակ ցույց տված քաջագործությունները, սրբազանին պարգևատրում է Ս. Գեորգի չորրորդ աստիճանի զինվորական խաչով և նշանակում է 300 ռուբլի մշտական թոշակ։

Հայրենասեր եպիսկոպոսը գործուն մասնակցություն է ունենում 1808 թվականին Գուդովիչի Երևանյան արշավանքին։ Հայկական 500 հոգիանոց իր հեծելազնդի գլուխն անցած, նա ցույց է տալիս բացառիկ քաջագործություն։ «Այդ գնդի (այսինքն՝ Մանուչարյանի ղեկավարած գնդի — Ս. Ս.) կամավորները,— ինչպես վկայում է նորագույն ուսումնասիրողներից մեկը,— այդ արշավանքի (այսինքն՝ Գուդովիչի Երևանյան արշավանքի — Ս. Ս.) ժամանակ աչքի ընկան իրենց բացառիկ խիզախությամբ և կայունությամբ»[4]։

Գրիգոր եպիսկոպոսը ռուսական զորքերի առաջխաղացումը կասեցնող պարսկական մի խոշոր զորամասի հետ ունեցած կռվի ժամանակ, Հին-Նախիջևանի մոտ, ծանր վիրավորվում է և հաղիվ ազատվում մահից։ 1808 թվականի ռուսական բանակի այս արշավանքի ընթացքում Գրիգոր եպիսկոպոսը, իր ցույց տված քաջագործությունների համար, կոմս Գուդովիչի միջնորդությամբ, պարգևատրվում է Վլադիմիրի և Աննայի շքանշաններով և պետության կողմից առաջ սահմանված 300 ռուբլի կենսաթոշակը բարձրացվում է 600-ի և երկարացվում ցմահ։

Այս համեստ հոգևորականը իր օրինակով ոգևորում էր պարսկա-թուրքական տիրապետությունը թոթափելու համար ոտքի կանգնած հայ ժողովրդի բազմաթիվ զավակների, որոնք կազմակերպված պարտիզանական չոկատների մեջ կռվում էին թշնամու դեմ։ Այդ ժամանակ օտարի լուծը դեն նետելու համար ոտքի էին կանգնել հոգևորականն ու աշխարհականը, շինականն ու արհեստավորը, գյուղացին և քաղաքացին, մի խոսքով ամբողջ հայ ժողովուրդը։ Եվ ռուս ազատարար սրի հետ գործող հայ ազատասերների զենքի շաչյունի մեջ լսվում էր Հայ եկեղեցու մեծ գործչի, ազնիվ հայրենասեր Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի խրոխտ ձայնը, նրա թրի ահեղ շռինդը։ Նրա անունը, կարճ ժամանակամիջոցում, տարածվում է ամենուրեք։ Թշնամին նրան ճանաչելիս է եղել «Գեղի քեշիշ» («Գիժ քահանա») անունով և սարսափել նրա հեծելազորից[5]։

Գուդովիչի արշավանքից հետո, Գրիգոր եպիսկոպոսը իր չոկատով որոշ տարիներ, ժամանակավորապես, հանգիստ է առնում մինչև 1826 թվականը՝ ռուս-պարսկական նոր պատերազմը, երբ նա հարկադրված է լինում նորից փոխել իր շորերը և նորից վերցնել սուրն ու հրացանը։

1826—1827 թվականների գործողությունների ընթացքում Գրիգոր եպիսկոպոսի չոկատի առաջին քաջագործությունները մենք տեսնում ենք Հաղբատ—Թիֆլիս ճանապարհին՝ Եփրեմ կաթողիկոսին Թիֆլիս տեղափոխելու ժամանակ։

Եփրեմ կաթողիկոսը, ինչպես հայտնի է, դեռևս 1821 թվականից գտնվում էր Հաղբատի հռչակավոր վանքում։ 1826 թվականին, երբ պարսիկները հարձակման են անցնում և ծավալվում են ռազմական գործողություններն ու պարսկական զորքերը մոտենում են Հաղբատին, լուրջ վտանգ է սկսում սպառնալ Հայոց Հայրապետի կյանքին։ Հարկավոր էր անմիջապես փրկել նրան։ Բայց ո՞վ կարող էր հանձն առնել այդպիսի պատասխանատու հանձնարարու-

3. Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք, Թիֆլիս, 1894 թ., հատոր Ա, էջ 344։

4. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1951 թ., № 11, էջ 15։

5. Ե. Ք. Գեղամյան, Պատմական քաղվածքներ, պրակ II, մասն I, Բաքու, 1909 թ., էջ 183։

թյուն։ Ներսես Աշտարակեցի եպիսկոպոսը, որը կազմակերպում էր կաթողիկոսի տեղափոխությունը Հաղբատից Թիֆլիս, շատ մոտիկից ճանաչելով Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանին և վստահելով նրա նվիրվածությանն ու արիությանը, այդ ծանր գործը հանձնարարում է նրան։

Հայրենասեր եպիսկոպոսը զգալով գործի պատասխանատվությունը, իր հետ վերցնում է 40 հատ հայ երիտասարդ քաջերի և ճանապարհվում է Հաղբատ։

Հեշտ չէր Ծերունի կաթողիկոսին անվտանգ տեղ հասցնել, քանի որ պարսիկները փակել էին բոլոր ճանապարհները. բայց այս բոլոր արգելքները ի՞նչ նշանակություն կարող էին ունենալ մի համարձակ և հերոս մարդու համար։

Վերցնելով Ծերունի կաթողիկոսին, Գրիգոր եպիսկոպոսը իր 40 կարիճների հետ Հաղբատից ճանապարհվում է դեպի Թիֆլիս։ Նրանց ճանապարհը, Բորչալուի դաշտում, Խրամ գետի մոտ, կտրում է շուրջ 300 հոգուց բաղկացած լավ զինված պարսկական մի հեծելազունդ։ Տեղի է ունենում մարտը, որը տևում է մոտավորապես կես ժամ։ Ծերունի հայրապետի կյանքը փրկելու համար Գրիգոր եպիսկոպոսը դիմում է բացառիկ խիզախության—նա հարձակվում է թշնամու վրա և ճեղքում թշնամու ամրոցում պատնեշը։ Հարձակման ժամանակ նա իր քաջերից կորցնում է 9 հոգու, ընկնում է հեծած ձին, բայց նա աջ ու ձախ հարվածելով թշնամուն, կարողանում է նիրեմ կաթողիկոսին անվնաս դուրս բերել պաշարումից։ Պարսիկները սարսափած քաջարի եպիսկոպոսի այդ խիզախությունից, այլևս չեն համարձակվում հետապնդել նրան[6]։

Կովկասի կառավարչապետ Երմոլովը, մոտից ծանոթ լինելով Մանուչարյանի խմբի քաջագործություններին հետ, 1826 թվականին, Կովկասի ռուսական զորաբանակի համար ստեղծված ոչ աննշան նպաստավոր իրադրության պայմաններում, ցանկանում է օգտվել Մանուչարյանի հեծելազնդի ծառայությունից—նա հանձնարարում է Գրիգոր եպիսկոպոսին իր հեծելազնդով անցնել Շամշադին՝ զսպելու այնտեղ պարսիկ հրոսակախմբերի վայրագությունները և կանխելու կատարվող գերեվարությունը։

«Դելի քեշիշ»ը նորից գործի է անցնում. նրան հաջողվում է կարճ ժամանակամիջոցում խաղաղություն ստեղծել Շամշադինում և քշված գնրիներին վերադարձնել, սրից անչափ դոհ է մնում Կովկասի ռուսական զորահրամանատարությունը։

Երմոլովը Հասան-Սուում գտնված ժամանակ, ցանկանալով վարձահատույց լինել, խնդրում է Գրիգոր եպիսկոպոսից դրավոր հայտնել, թե «ինչո՞վ ինքը կարող է այդ ծառայությունների համար վարձահատույց լինել»։ Սրբազանը շատ համեստ կերպով պատասխանում է, թե ինքն անձամբ «ոչնչի կարոտ չէ, բայց անարդարություն է համարում այն, որ թյուրք «աղալար» և «բեկ» կոչված աղնվականները Շամշադինում վաղուց ի վեր տիրացել են հայոց գյուղերին և ծանր հարկ վերցնելով կեղեքում են հայոց ազգաբնակչությանը», ուստի և խնդրում է արգելել այդ հարկահանումը[7]։ Երմոլովը լսելով այդ քաջ հոգևորականի համեստ խնդրանքը, ընդառաջում է նրան և Շամշադինի հայերին ազատելով ադնվականների իրավասությունից, արքունական գյուղացու իրավունքով է օժտում։

Մեզ է հասել Երմոլովի այդ դրության մի պատճենը, որն ուղարկված է եղել Ներսես Աշտարակեցուն։ Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել այդ վավերագրի հայերեն թարգմանությունը.

«Գեորգինի հայր Գրիգոր, հայոց արքեպիսկոպոս.

Ողորմած տե՛ր.

Հիմնվելով Վրաստանի հայոց առաջնորդի վկայության վրա Ձերդ Սրբազնության ծառայության գերազանց ջանքի ու նրա համար պիտանիության մշտական պատրաստակամությանդ վերաբերյալ, ես Ձեզ հրավիրել էի ուղևորվել Շամշադինի շրջանը, ուր տեղի բնակիչները հուզմունքի մեջ էին, որովհետև պարսիկները մեր դեմ վնասակար ներշնչումներ էին կատարել... դիտենալով, որ Ձերդ Սրբազնությունը վայելում է ժողովրդի ընդհանուր հարգանքն ու վստահությունը, ես Ձեզ խնդրել էի հանդարտեցնել բնակիչներին, որպեսզի նրանք իրենց պարզամտությամբ չհետևեն այլոց տվստազանցությանը։ Ի մեծ հաճույություն իմ, Դուք լիովին արդարացրիք Ձեր հովվապետի քարի կարծիքը Ձեզ ընտրելու մասին։ Ձեր անձը ենթարկելով վտանգի, Դուք Ձեր փոքրաթիվ մարդկանցով խառնակիչներին թույլ չտվեցիք արտասահման քշելու հայ ընտանիքներին, և չդլացաք Ձեր օգնու-

6. Ա. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք, հատոր Ա., էջ 247։

7. Նույն տեղում։

թյունը ղլխավոր պրիստավ իշխան Թարխանովին։ Զորքի մի շոկասով Հասան-Սու ժամանելով, ինքս անձամբ հավաստիացա Ձեր գովելի սխրագործությանը, ուստի և անպայման պարտք եմ համարում կառավարության անունից շնորհակալություն հայտնել, և տոգորված եմ հաճելի հավատով, որ Դուք այսուհետև ևս չեք դլանալու պատրաստ լինել Թագավոր Կայսեր ծառայելու համար...

Ձեր հանձնարարած երկու հայ տանուտերներին՝ Մանուչարովին և Օհանեսովին գովասանագրեր տվեցի, նրանց հավատացնելով, որ իրենց ջանքերի համար նրանք իշխանության ուշադրությունից իր ժամանակին դուրս չեն մնա։ Ինչ վերաբերում է նաև թաթարական այլ շրջաններին, բոլոր հայերին ընդհանուր անկախություն տալուն, ապա ես չեմ դադարի հետագայում ևս կարգադրություն անել և ձեռնարկել տեղեկացնել այդ առթիվ ամենքին։

Առ Ձեզ տածածս գերագանց հարգանքով ու անձնվիրությամբ, պատիվ ունիմ Ձերդ Սրբազնությանը ողորմած Թագավորի ամենահնազանդ ծառա՝

ԱԼԵՔՍԵՅ ԵՐՄՈԼՈՎ

№ 410

1828 թ. հոկտեմբերի 1-ին

Ճիշտ է։

Հարությունավագ Բահանա Ալամդարյան

Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանի գործունեությունը պատկերացնելու տեսակետից ուշագրավ է մի այլ վավերագիր, որը մեջ է բերել Երիցյանը՝ իր «Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայքը աշխատության մեջ։— Այդ նիստեմ կաթողիկոսի միջնորդությունն է կոմս Պասկևիչին, որը բերում ենք ստորև.

«Ողորմած Տեր, Կոմս Իվան Ֆեդորովիչ։ Երբ պարսից զորքերը արշավեցին Վրաստան..., Վրաստանի կուսակալ գեներալ Երմոլովը խնդրեց մեզ մեր սիրելի Գրիգոր արքեպիսկոպոսին ուղարկենք Շամշադինի դավառը, որ թե՛ այնտեղի ու թե՛ դրացի երկրների ապստամբ թյուրքերին խաղաղացնեն։ Որքան ինձ բավականաչափ հայտնի է և ինչպես երևում է գեներալ Երմոլովի տված վկայականից, նա, յուր խրատներով, իսկ պետք եղած ժամանակն յուրյան աջակից եղող հայերի ձեռքովն էլ զենք գործ դնելով, կարողացավ վերահաստատել խաղաղությունը և հետ քշել թշնամյաց հրոսակները, որոնք ձգտում էին թալանել դյուղերը և բնակչաց գերի վարել։ Ահա այդպիսի վտանգի ժամանակներում նա վերադարձրեց պարսից սահմաններից մոտ հազար տուն թյուրք, որոնք ապստամբ աղալարների թելադրությամբ գնում էին թշնամյաց երկրում բնակվելու։ Նա պահպանում էր ճանապարհը, ամենուրեք պահնորդներ ունենալով։ Պետք եղած դեպքերում, ինչպես օրինակ Ասրիկ գետակի վրա իջած բանակին, մատակարարում էր բոլոր ուտելիքը թե՛ եղբարց և թե՛ յուրյան անձնվեր եղած մյուս հայերի տներից։ Նա հավատարիմ անձանց ձեռքով հաղորդում էր տերությանը պետք եղած տեղեկությունները։ Եվ այն միջոցին, երբ սահմանի վրա տակավին չկային բավականաչափ ռուսաց զորքեր, նա յուր անձնվեր հայերով կապեց ճանապարհը և չթողեց վերադառնալ պարսից Զոհրաբ խանին, որ զորքերով ու ապստամբ աղալարներով մտել էր Շամշադինի Ամիրլախ դյուղը։ Սորանով ռուսաց փոքրիկ բանակին միջոց տվեց նա՝ բոլորովին ջարդելու պարսիկներին և ապստամբներին։ Այս հաղթության միջոցին, բացի բազմաթիվ սպանվածները, գերի բռնվեցան նաև նշանավոր ապստամբները։ Բացի այդ, նա յուր շամշադինցի հայերով մեծապես օգնեց վրացի կամավոր զորացը՝ ջարդել Ասրիկ գետի մոտ պարսից Մահմադ Զաման խանին և Շամշադինի ապստամբ աղալարներին։ Երբոր Գրիգոր արքեպիսկոպոսը վերադառնում էր այդ հաղթությունից, նա վրա հասավ, բռնեց և ներկայացրեց գեներալ իշխան Մատաթովին չորս նշանավոր լրտեսների, որոնք գտնվում էին Ղազախի և Բորչալուի գավառակներում խռովարար ֆերմաններ տարածելու։ Նույնպես, ամենավտանգալից ժամանակներում, երբ հավատարիմ մարդ չէր ունենում մոտը, նա, յուր կյանքը չխնայելով, կարևոր զրույցները անձամբ էր տանում բանակից և հասցնում Թիֆլիս գեներալ Երմոլովին։ Վերջապես նա ազատեց իմ կյանքը անհավատ պարսիկների ձեռքից, որոնք ձգտում էին վիրջ տալ իմ կենաց։ Նա էր, որ վտանգալի ժամանակում Հաղբատի վանքից բերեց ինձ Թիֆլիս։

Այս արքեպիսկոպոսը ամենայն իրավամբ և ըստ, ճշմարիտ որ, օրինակելի ծառայությանց արժանի է Օգոստափառ Արքայի առանձին ուշադրության։ Վասնզի, ներկայացնելով ընդ սմին գեներալ Երմոլովի յուրյան տված վկայականը կա-

տարած քաշուքյանց մասին, պարոյ եմ համարում խնդրել Ձերդ Պայծառափայլությունից միջնորդել Ձեր կողմից Թագավոր Կայսեր առաջ, որ այդպիսի փվեյի ծառայության փոխարեն արժանապես պարգևատրվի հիշյալ արքեպիսկոպոսը։

Ձերդ Պայծառափայլության
խոնարհ ծառա և աղոթարար,
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԵՓՐԵՄ

4 հուլիսի 1826 թվին»։

1827 թվականի հոկտեմբերի 1-ին, երբ ռուսական ազատարար բանակները դրավեցին Պարսկաստանի վերջին հենակետը՝ Երևանի «անառիկ» բերդը և երբ Արևելյան Հայաստանը վերջնականապես կցվեց Ռուսաստանին, Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը հրաժեշտ տվեց դինվորական կյանքին՝ հանեց զենքերն ու գյուղացու շուխան, հագավ նորից վանականի սև վերարկուն և քաշվեց մի անմարդաբնակ վանք՝ ճգնելու։

Բայց նրա հոգին նորից չէր կարողանում տանել անարդարությունները. երբ լսում էր, որ այս կամ այն հրոսակախումբը հայ գյուղերից կողոպուտ կամ գերեվարություն է կատարել, նորից բորբոքվում էր նրա քաջարի սիրտը, ձի էր նստում, հասնում ավազակների հետևից, խլում նրանց վերցրած ավարը, վերադարձնում տերերին և հանդիստ սրտով վերադառնում իր ճգնարանը։

Մի դժբախտ օր բոլորի կողմից սիրված ու հարգված եպիսկոպոսը իր մահկանացուն է կնքում ճգնարանի մեջ։ Իր համադյուղացիները նրան թաղում են հայրենի գյուղի եկեղեցու մեջ։ Հանգուցյալ պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանն այդ մասին գրում է. «նախկին Հախում գյուղի կենտրոնում կառուցված է փայտածածկ հողե կտուրով գյուղական եկեղեցին։ Դրա ներսում գտնվում է Գրիգոր Մանուչարյանի գերեզմանը»[9]։

Այսպիսով, Հայ եկեղեցու այս անձնվեր ու հայրենասեր պաշտոնյան, սնված իր նախահայրերի՝ Ս. Գրիգորի, Ս. Մաշտոցի, Ս. Սահակի և այլ ժողովրդասեր ու ժողովրդանվեր հոգևորականների սրբազան ավանդներով, հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող օրերում հանդես է բերում բացառիկ նվիրվածություն, սեր և եռանդ դեպի հայ ժողովուրդն ու նրա սիրելի դարձած Հայրենիքը։ Նա կատարում է իր սրբազան պարտքը ժողովրդի և Հայրենիքի հանդեպ, պայքարում է անարդարության, չարիքի և բռնության դեմ՝ հանուն իր ժողովրդի ազատության և անկախության։

8) Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայը, հատոր Ա, էջ 248—250։

9. Տեր-Ավետիսյան, Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյան (տե՛ս «էջմիածին» ամսագիր, 1945 թ., հունվար—փետրվար, էջ 39։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

(Գիտական աշխատակից
Երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսի)

ԶԵԿՈՒՅՑ
ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի վախճանումեն ետք, Կիլիկիո Կաթողիկոսության միաբանության պատկաւելի Տնօրեն ժողովը, իր նոյեմբերի 24-ի (1952) դումարման մէջ, երանաշնորհ Հայրապետի գիտական-գրական արխիվին քննության համար, կազմեց հատուկ քննիչ մարմին մը, բաղկացած հետևյալ անդամներե. դեր աշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս, Դպրեվանքի վերատեսուչ, պարոն Բյուզանդ Երիցյան, Դպրեվանքի ուսումնապետ, և պարոն Սիմոն Սիմոնյան, գիտական աշխատակից երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի։

Նկատի ունենալով երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի աշխատությունների գիտական մեծ արժեքը հայ մշակույթի և բանասիրության համար— բոլորովին նոր նյութերու վերբերում, անհայտ շրջանների, դեմքերու և նյութերու հետազոտում, ձեռագրական անհամար հիշատակարանների հավաքում, հայ արվեստների՝ հատկապես հայ մանրանկարչության և դիրքության համար իր անփոխարինելի հավաքումները (հիշատակարաններ, լուսանկարներ, նմանահանյալ նկարումներ), հետազոտությունները ու նկատողությունները, ինչպես նաև պատրաստած մատենագրական բնագիրները և հավաքած բազմաթիվ վիմագրական արձանագրությունները,— հարկ էր ամենայն խրոնմտությամբ և համբերությամբ քննության ենթարկել երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի գիտական արխիվը, մասնավորաբար մեծ ուշադրություն դարձնելով անոր մեջ գտնվող անտիպ նյութերուն վրա։

Արդ, երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի մահվան առաջին տարելիցին առթիվ, պարտք կհամարինք հանուն քննիչ մարմինի, այստեղ ներկայացնելու նախ կատարված աշխատանքը, և ապա՝ երանաշնորհ Հայրապետի անտիպ նյութերուն ընդհանուր ցուցակը։

Քննիչ մարմինը կատարեց հետևյալ աշխատանքները.

1. Նախ առանձնացուց երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի գիտական արխիվը, որ ցրված էր իր հարկարաժնի երեք սենյակներուն մեջ և կարևոր չափով խառնված իր դիվանական նյութերուն, գրադարանին ու դույքերուն հետ։ Արդեն այս աշխատանքեն առաջ, Տեղապահ Սրբազանը, Տնօրեն ժողովը և անկե բխած հատուկ այլ մարմին մը հավաքած ու առանձնացուցած էին երանաշնորհ Տ. Գարեգին Հայրապետի դիվանական նյութերը (հատկապես թղթակցությանց ծրարները) և իրեղենները, ու տնօրինած՝ պարտն ու պատշաճը։

Քննիչ մարմինը զուտ գիտական ու գրական բնույթ ունեցող նյութերը առանձնացնելով գտնեցեց երկու ապակյա մեծ դարաններուն մեջ։

2. Քննիչ մարմինի երկրորդ դժվարին աշխատանքը եղավ առանձնացված նյութերու դասավորումը ըստ տեսակի։ Կատարվեցան հետևյալ գլխավոր ու մեծ խմբավորումները.

Ա. ձեռագրական հիշատակարաններ, որոնք կներկայացնեին ծավալով ամենամեծ խումբը, և որոնք մաս կկազմեն երանաշնորհ Հայրապետի հատորով մը արդեն տպագրված և հայորդները մամուլի տակ եղող ու

հրատարակելի մեծ գործին՝ հիշատակարանք ձեռագրաց Երկին: Այս խմբագրման միացվեցան հազարավոր թերթիկներ, որոնց վրա երանաշնորհ Հայրապետը ձգած էր նկատողություններ և առաջարկներ (ցուցումներ) ա՛յլ ձեռագիրներու, անոնց հիշատակարաններուն, գրիչներուն և անոնց հարակից հարցերուն մասին: Նույնպես այս խմբագրման մեջ պահվեցան հիշատակարանների այն ծարները, որոնք ըստ մանրանկարչական և գրչագրական դպրոցների և մերթ ըստ գրիչների առանձնացված էին երանաշնորհ Հայրապետի կողմե, անոնց հիմամբ ապագային գրելու համար հայ մանրանկարչական ու գրչագրական դպրոցների և կարևոր նկարիչների (ծաղկողներու) ու գրիչներու մասին առանձին մենագրություններ (ինչպես օրինակի համար գրած էր «Երզնկայի մանրանկարչական դպրոցը», «Գրիգոր մանրանկարիչ» և այլն): Գարձյալ այս խմբագրման միացվեցան երանաշնորհ Հայրապետի 1947 թվին Նրուսաղեմի Ս. Հակոբա վանքի ձեռագրատունին իր, իր հեռավորներուն և գիտական աշխատակիցին ձեռամբ արտագրված հիշատակարանների յոթը մեծ տետրակները, ինչպես նաև իր գիտական աշխատակիցին՝ տողերիս գրողին պատրաստած տպագրված հիշատակարանների ժողովածուն, դասավորված ըստ գարերու:

Բ. Մանրանկարչական նյութեր, բաղկացած գլխավորապես անավարտ մենագրություններն կամ համառոտիվ լրացած և ապագային ընդարձակվելիք ծրագիրով աշխատություններն, հարյուրավոր թղթիկներն (լի՝ նկատողություններով և առաջարկներով), մանրանկարներու և նկարչական զարդերու հազարավոր լուսանկարներու, նկարումներու, ֆիլմերու և ապակիներու ծարներն: Այս խումբին մեջ անտարակույս կարևորագույն տեղը կգրավի երանաշնորհ Հայրապետի գլուխ-գործոցը՝ Քարտես հայ մանրանկարչության, բաղկացած 120 հոլակապ ու դերընտիր գունավոր նկարումներե և 2—3.000 սև նմանահանությունների (լուսանկարներն)... Այս խումբի երկրորդ կառուցը գործն է Երզնկայի մանրանկարչական դպրոցը, որուն ուսումնասիրության բաժինը դժբախտաբար չէ գրված, թեպետ առոր նյութերը հավաքված են: Իսկ մանրանկարչական մասի գունավոր քսան նկարները արդեն տպագրված են գրեթե հինգ տարիներ առաջ, իսկ հարյուրե ավելի սև նկարներու կլիշեները նույնպես պատրաստված են տպագրության համար: Այս գործի ուսումնասիրական բաժինը պետք է որ գրվի օգտագործելով թե՛ երանաշնորհ Հայրապետի հավաքած նյութերը, թե՛ պարոն Հ. Քյուրտյանի մամուլի տակ եղող նրդնկա գործը և թե՛ ա՛յլ աղբյուրներ:

Մանրանկարներու և նկարչական զարդերու բոլոր լուսանկարները միացվեցան մանրանկարչական ընդհանուր նյութերու այս խմբավորման: Հայ գրչության և ա՛յլ արվեստներու վերաբերյալ նյութերու լուսանկարներն ոմանք ես կգտնվին այս խմբավորման մեջ:

Գ. Հայ գրչության արվեստի վերաբերյալ նյութեր: Այս խմբավորման կարևորագույն գործն է երանաշնորհ Հայրապետի մեծ մենագրությունը՝ Գրչության արվեստը հայոց մեջ, որ 1914—են առաջ արդեն պատրաստ էր և որուն երեք մասերեն երրորդը տպված էր նախ Շողակաթի մեջ և ապա առանձին, 1913 թվին: Այս մեծ գործը հետագա նյութերու հիմամբ պիտի լրացվեր, գառնալու համար իր տեսակին մեջ լավագույն մենագրությունը, զոր միայն կրնար գրել երանաշնորհ Տ. Գարեգին Կաթողիկոս՝ հայ ձեռագիրներու մեծագույն ուսումնասիրող գիտնականը: Այս խմբավորման մեջ կան նույնպես բազմաթիվ նկարներ և նկատողությանց թղթիկներ, գրչության արվեստի հետ առընչված:

Դ. Հայ ա՛յլ արվեստներու վերաբերյալ նյութեր, ինչպես ոսկերչության, քանդակագործության, ասեղնագործության և այլն: Այդ նյութերեն ոմանք արդեն տպագրված են, իսկ ոմանք մամուլի տակ են, իրրև Դ. պրակը երանաշնորհ Հայրապետի նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության շարքին:

Ե. Վիմական արձանագրություններու ժողովածուներ, որոնք կգտնվին տետրակներու, թուղթերու և փոքր ծոցատետրերու մեջ: Այս խումբի լավագույն գործը կարելի էր նկատել Հովհաննավանքի արձանագրությունները, եթե Կ. Զաֆագարյանի համանուն երկը հրատարակված չըլլար: Պետք է այս խումբեն զատել ա՛յն արձանագրությունները, զորս իրրև տեղագրական ու պատմական կարևոր աղբյուր կարելի է օգտագործել երանաշնորհ Հայրապետի ծրագրած, սկսած ու լրացուցած երկու գործերուն— Վաչուտյանց և Օրբելյանց իշխանական տուներու համար՝ փր հրատարակած Խաղբակյանց կամ Պռոշյանց եռահատոր գործի ծրագիրով ու ծավալով:

Այս խմբավորման միացվեցան բազմաթիվ լուսանկարները վանքերու, ավիրակներու, խաչքարերու և արձանագրությանց:

(Շարունակելի)

(«ՀԱՍԿ», պաշտոնաթերթ Կիլիկիո Կաթողիկոսության. Անթիլիաս, հունիս-հուլիս 1953):

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԳԵՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Տարվան մը հնությունը արդեն ծածկեր է հողակույտը երանաշնորհ Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի։ Բայց, ներհակաբար, չէ հնացած ու չէ թաղված իր մարմինին հետ հիշատակը իր անձին ու գործին՝ հայության հոգիին մեջ։

Այդ անմահ հիշատակին բնական թելադրությունն էր ու մղումը, որ Գունիսի 21-ին (1953), կիրակի օր, Անթիլիասի մայրավանքին մեջ համախմբված էր մեծ բազմություն մը՝ հաղորդելու համար զանոնք, անգամ մը ևս, անոր հետ մահու ևս դեռ կենդանի ու միշտ կենդանաբար պատգամներու «լույսին ու «կյանքին։

Տխուր էր օրը, բայց հանդիսավոր։ Առավոտյան ժամը 6.30-ին սկսաւ ժամերգությունը։ 9-ին՝ սուրբ պատարագ։ Պատարագիչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս թափորով իջավ Վեհարանեն ու «Հրաշափառով մտավ Տաճար։ Տիրող տրտմության և սուգի հանդարտ ու խաղաղ մթնոլորտին մեջ պատարագի սուրբ խորհուրդը կատարվեցավ ապավորիչ հանդիսավորությամբ, հանդարտ ու մեղմ կշռույթով, զեկավարությամբ գերապատիվ Տ. Գնել ծայրագույն վարդապետի։

Օրվան քարոզիչն էր Մեծի Տանն Կիլիկիո Տեղապահ բարձրապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս։ «Հայր մերոյ պահուն բեմ բարձրացավ ու խոսեցավ կարճ, բայց սրտահույզ շեշտով, իր խոսքի առանցքն ընելով՝ «Մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող» բնաբանը, խորանացիեն առնված։

Լայն ու ընդհանուր գիծերու մեջ նիրկայացուց մեծությունը հանգուցյալ Վեհափառի անձին ու գործին, դրվատելով անոր ծառայության ու անձնվիրության ոգին, անոր մտավորական արժանիքներն ու մշակութային անգնահատելի ծառայությունները։

Սիրտի խորունկ ցավով, սակայն, նշեց այն կարևոր պարագան, որ դեռ, տարի մը ետք անոր մահեն, անոր Աթոռը կմնար անտեր, անգահակալ, հակառակ թափված ճիդերուն, կատարված աշխատանքներուն, ի գործ դրված միջոցներուն, զանազան կարգի դժվարություններու և խոչընդոտներու պատճառով։ Բայց, ի վերջո, դիտել տվավ որ հետզհետե կհարթվին արգելքները, կբարելավվին պայմանները ու հայտնեց իր հույսն ու հավատքը, որ մոտիկ ապագային Աթոռը պիտի ունենա իր Պետը։

Հավարտ սուրբ պատարագի, թափորով միաբանությունը իր ամբողջական կազմով (ներկա էին նաև գերաշնորհ Տ. Ջարեհ եպիսկոպոս և գերաշնորհ Տ. Տաճատ ծայրագույն վարդապետ), Դպրեվանքի ուսանողությունն ու ներկա ուխտավոր հավատացյալներու բազմությունը գացին անոր հողակույտին մոտ՝ կատարելու համար տարելիցի հատուկ հոգեհանգստյան պաշտոնը։

Հողակույտին առջև հուզումով խոսք առավ գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազան, որուն խոսքին ամբողջությունը կուտանք ստորև.

«Սիրելի՝ ուխտավորներ,

Հրեից մեծ մարգարեն Մովսես՝ երբ իր հոտը կարածեր Քորեբ լեռան վրա, Աստված բոցեղեն կերպավորմամբ մորենիին մեջ՝ն երևցավ անոր։ Մովսես տեսավ որ մորենին կվառեր, բայց չէր այրեր, չէր հաներ։ Ու հոն լեռան վրա, մորենիին մեջեն Մովսես Աստուծմե մասնավոր պատվեր և իշխանություն ստացավ Իսրայելի ժողովուրդը՝ Եգիպտոսեն մեզը ու կաթ բխող երկիրը առաջնորդելու։

Հրեաներ՝ ազգային մեծ հպարտությամբ մի իրենց ցեղը կնմանցնեն բոցավառ մորենիին, որ գարերու կսկիծին ու տառապանքին մեջեն կվառի՝, կվառի՝, բայց չի սպառիր։ Այս առինքնող խորհրդանշանը կհանդիսանա հրեա ժողովուրդին տոկունության, պիմաղրականության և մշտնջենավորության դերագույն ազդակը։ Նյու-Յորքի հրեաներու աստվածաբանական մեծ ճեմարանին մուտքի ճակատը փորագրված է բոցավառ մորենի մը և անոր ստորոտը սա գրությունը. «Վառի՝ բայց չայրիր»։ Մենք ականատես եղած ենք այն իրողության, թե ի՝նչպես հրեա նոր սերունդը կդաստիարակվի ու կմեծնա այս ներշնչող պատկերին տեսիլքովն ու ոգիովը, որոնք դիրենք կառաջնորդեն բուն հավերժության։

Հայ ցեղը իր հավերժությունը խորհրդանշող ավելի ոգևորիչ ու ներշնչող պատկեր մը ունի, մեր հավատքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորիչի կանթեղն է ան, կախված երկինքեն՝ Արարատի քառագագաթ կատարին վրա։ Այս

կանթեղը անպարան է. Աստված իր ձեռքովը վառած ու կախած է դայն Հայոց աշխարհի երկինքեն լույս տալու ամբողջ հայության, մինչև ի կատարած աշխարհի։ Այդ կանթեղը փոխան յուղի ունի Սուրբին մաքուր արցունքը, որ կվառի երկնային հուրով մը և հիրավի՝

«Ո՛չ մարդկային ձեռք կհասնի
էն ահավոր բարձունքին,
Եվ ո՛չ քամին կհանգցնի
Վիշապ քամին ահագին»։

Արագածի կանթեղը խորհրդանշանն է Հայուն անմահ հավատքին, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և ազգի միության ու հավերժության.

«Այն մեր հողու լուսի ջահն է նվիրական,
Ողջույն ազգի կենդանության երաշխիք...
Եվ այն ճրագն. եղրա՛յր, անշեջ կլինի,
Քանի վառող Աջն է մեզ միշտ հովանի»։

Հայ ժողովուրդը միշտ «քաղցրությամբ պլպլացող» անպարան կանթեղին նայած է և անոր ցոլքովը լուսավորված։ Ան հանդիսացած է ոգեղեն զորությունը մեր խորհրդաբոլոր վանքերու մթին կամարներուն ներքև աճող ու զարգացող հավատավոր ու իդեապաշտ պարմանի հոգիներուն և կանոնք առաջնորդած դեպի ճշմարիտ հավերժությունը։

Սիրելի՛ ուխտավորներ, մեզի՝ արտասահմանի հայերուս՝ վայրավատին ցիրուցանված աշխարհի չորս կողմերը, բոցավառ մորենին ու մշտավառ կանթեղը կխորհրդանշվին այս լո՛ւյս գերեզմանով. «պլպլալի՞ք միշտ կանթեղը» կրնան տեսնել միայն անոնք, որոնք կապրին մեր ժողովուրդի իդեալովն ու հավատքովը, անոր ստեղծագործություններովն ու ավանդություններովը, որոնց իրական մարմնացումը հանդիսացավ Գարեգին Վեհաշնորհ Վեհը։

Ուխտավորներ կոչեցի ձեզ, հա՛յ ժողովուրդ, որովհետև համոզված եմ, որ այսօր հոս եկած ո՛չ սոսկ հոգեհանգստյան պաշտոնի մը ներկա ըլլալու, այլ ուխտ մը կատարելու Ներվի ինձ ըսել, որ երանաշնորհ Գարեգին Կաթողիկոս մեր աղոթքին այնքան պետք չունի, որքան մենք Իր աղոթքներուն։ Եթե Գարեգին Վեհը, որ հիմա անմահության լույսին մեջ կենդանի, ապրեր այն դարերուն, երբ Հայաստանյայց Եկեղեցին սուրբեր կհոչակեր, կրնամ անվարան հայտարարել, թե ինք արդեն սուրբ մը հռչակված պիտի ըլլար և մենք երկյուղածությամբ պիտի ապրեինք իրեն. «Ո՞վ սուրբ հոգի, բարեխոսեա՝ վասն անձանց մերոց առ Հայրն քո երկնաւոր, զի զնկեղեցիս Հայաստանեայց և զմնացորդս ժողովրդեան մերոյ պահեսցէ յաւերժ ի խաղաղութեան»։

Այս միտքով հետևարար սուրբի մը՝ Գարեգին սուրբին դերեզմանին առջև կանգնած ենք. պետք է որ ուխտենք ուրեմն՝ հանուն մեր մեծ խոստովանող առաքյալին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչին, որ հիմնեց Հայաստանյայց Մայր Կաթողիկեն՝ Ս. Էջմիածինը, ու քրիստոնեությունը տարածեց Հայոց աշխարհի մեջ՝ մեր նախնիքներու հոգիներուն մեջ, հանուն մեր սրբազան բարգմանիչներուն, որոնք մեր գիրն ու գրականությունը ստեղծեցին և Աստվածաշունչը հայացուցին, այդ գիրն ու շունչը տարածեցին Հայության հոգիին մեջ, հանուն սրբազնագույն աղոթասաց Ս. Գրիգոր Նարեկացիին, որ պերճորեն ճոխացուց մեր Եկեղեցին աղոթքի քերթողությամբ ու մեզի խոսիլ սորվեցուց Ամենակալին հետ, հանուն հույլին Շնորհալիներու, որոնք երկնեցին մեր հոգեշունչ երգերն ու շարականները ու մեզի սորվեցուցին քաղցրությամբ երգել «վեղանակաւոր երգս շարականաց», հանուն վարդանգիր Տարոնացիներու, որոնք սրտեռանդն պաշտպանեցին Հայաստանյայց Ս. Եկեղեցին արտաքին և ներքին բոլոր ոսոխներու դեմ և գոյատևել տվին դայն ու մեզի տվին սրբազան դասը անհողդողդ մաքառման և պայքարի, հանուն էջմիածնական և արմաշական այն իդեապաշտ, հավատավոր եկեղեցական խումբերուն, որոնք մեր օրերու Հայոց Եկեղեցվո փառքը հյուսեցին և որոնց հավերժական հիշատակը դեռ կմնա ու կծխա մեր ներսիդին, հանուն մեր քաջարի հերոսներուն, նահատակներուն ու իրավ հայրենասեր հեղափոխականներուն, որոնք իրենց արյունը թափեցին հայ Հայրենիքի և հայ ժողովուրդի գոյատևման համար և որոնցմե շատերուն արյան հեղման վկաները եղած ենք մենք, ուխտենք անսայթաք ընթանալ Գարեգին Հայրապետի ուղիեն, շարունակել իր սրբազան գործը և ճավատարիմ մնալ այն սկզբունքներուն և նպատակներուն, որոնց իրականացման և իրագործման համար ան շարունակ տքնեցավ իր կյանքի ընթացքին։

Թո՞ղ մեր երկնաբնակ սուրբերն ու մեր հայրերուն հոգիները վկա ըլլան մեր ուխտին։

Այս ուխտով զորացած, անով արբացած, անվեհեր և հանդուգն, արիաբար դիմակալելով ամեն նեղություն ու տառապանք, բոլորս, որոնց հոգիին մեջ Գարեգին սուրբին

«պլպլալիք միշտ կանթեղին հրայրքը կա-
նթեղված, նվիրվինք հայ ժողովուրդի, Հա-
յաստանյայց Ս. Եկեղեցվո և հայ մշակույ-
թի ծառայության, անսասանության և հա-
վերժ պահպանման. ամեն»։

Գերեզմանը, սևով պատած և ծաղիկներով
ու ծաղկեպսակներով զարդարված և գեղեց-
կացած, խունկի բույրով օծված և մոմի
լույսերով պայծառացած՝ ուխտատեղիի
հանգամանք էր ստացած, ուր կուգային հա-
վատացյալները՝ ներշնչվելու անոր մեջ ամ-
փոփված մարդու կյանքին խորհուրդով, ա-
նոր կյանքի սկզբունքներով, իդեալներով ու
իղձերով, և խնդրելու անոր աղոթքը իրենց,
Աղգին ու Եկեղեցվույն համար։

Մարդեր կապրին, երկար կապրին ու կապ-
րեցնեն, երբ չեն նվաճվիր հողեն ու նյու-
թեն և կբարձրանան անոնցմե վեր՝ զանոնք
նվաճելու ու հոգիի հաղթանակը շահելու ու
հոգիի թագավորությունը հաստատելու
«նյութավորս» նկատված այս աշխարհին մեջ։

(«ՀԱՍԿ», պաշտոնաթերթ Կիլիկիո Կաթո-
ղիկոսության, Անթիլիաս, հունիս—հուլիս
1953)։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԿԻԼԻԿԻՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Պրոֆ. Գ. Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հրատարակություն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Երևան, 1952 թ.



Պատմական Կիլիկիան, ուր կազմավորվել է Կիլիկյան Հայկական պետությունը, գտնվում է երեք մայր ցամաքների՝ Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի խաչմերուկի հանդուցում և մոտ 166 կիլոմետր երկարության ունենալով մի շերտով ձգվում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափով։ Նա խաղալ դեր է ունեցել Մերձավոր Արևելքի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի պատմության մեջ, ուստի և նրա պատմությունը արժանի է հատուկ ուշադրության։

Գ. Միքայելյանի «Կիլիկյան հայկական պետության պատմությունն» («История Киликийского Армянского государства») խորագրով ներկա աշխատությունը Կիլիկիայի պատմությանը նվիրված առաջին ուսումնասիրությունը չէ։ Կիլիկիայի պատմության շուրջը բավականին գրականություն է ստեղծվել. նրանով զբաղվել են ինչպես հայ պատմաբանները (Մ. Չամչյան, Ղ. Ալիշան, Լևոն, Մ. Երմանյան, Գարեգին կաթողիկոս Հովսեփյան և ուրիշները), այնպես և արևմտա-եվրոպական պատմաբանները (Գրուսսե, Վ. Լանգլուա, Տուրնեբիզ և ուրիշները)։ Սակայն նշված պատմաբանները զբաղվել են, գլխավորապես, քաղաքական պատմությամբ և կուլտուրայով։ Ըստ որում, արևմտյան եվրոպական պատմաբանները անդրադարձել են Կիլիկիայի պատմությանը միայն Արևելքի և Արևմուտքի միջև տեղի ունեցող առևտրական հարաբերությունների և կամ խաչակրաց արշավանքների ուսումնասիրության կապակցությամբ։ Նրանց բոլորի տեսադաշտից դուրս է մնացել բուն ժողովրդի, սրտագրողների պատմությունը։

Պրոֆ. Գ. Միքայելյանի ներկա աշխատությունը, ընդգրկված նյութի հարստությամբ և պատմական իրադարձությունների տրված մեկնաբանություններով, Կիլիկիայի պատմությանը նվիրված միակ լուրջ և ամբողջական աշխատությունն է։ Այդ իսկ առաջնությունը, գովելի ոգով համարել ինչպես հեղինակի, այնպես և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությունը, որի հրատարակությամբ լույս է տեսել նշված աշխատությունը։

Պրոֆ. Գ. Միքայելյանը, իր ուսումնասիրության մեջ, գլխավոր ձանրությունը դարձրել է Կիլիկիայի հայկական պետականության շրջանի պատմությունը (սկսած 1080-ից մինչև 1375 թ. թ.), քանի որ, ներածականի կարգով, տվել է պատմական համառոտ տեղեկություններ Կիլիկիայի բնական պայմանների և նախահայկական շրջանի մասին (սկսած հիթիթական ժամանակաշրջանից մինչև բյուզանդա-արաբական ժամանակաշրջանը)։

Աշխատության բուն նյութը սկսում է 3-րդ գլխից՝ «Հայերի արտագաղթը և հայկական իշխանությունների առաջացումը Կապադովկիայում, Միջագետքում, Սիրիայում և Կիլիկիայում» (էջ 54—80)։ Նա այստեղ պատմական հարուստ տվյալների վրա ցույց է տվել Բյուզանդիայի ենթգաղավ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ 11—12-րդ դարերում, մի ժամանակաշրջան, երբ հայ ժողովուրդը իր ֆիզիկական գոյության, իր անկախության համար կյանքի և մահու կռիվ էր մղում սելջուկյան ագրեսորների դեմ։ Բյուզանդական կառավարող շրջանները այդ ժամանակ աշխատում էին օգտագործել հայ ժողովրդի դժբախտ վիճակը, արտաքուստ հանդես գալով հայերի դաշնակցի դերով, ներքուստ խլուրդային աշխատանք էին տանում՝ քայքայելու Հայաստանի քաղաքական ամբողջականությունը՝ նպատակ ունենալով գրավել Հայաստանի նկատմամբ շրջանները, նրա ողջ հարստությունը։ Իրենց կողմը գրավելով տե-

դական կենտրոնախույս որոշ իշխանների, բյուզանդացիներին, վերլապես, հաջողվում է նասել իրենց նպատակին. նրանք իրենց ձեռքն են վերցնում Արևելյան Հայաստանի զգալի մասը (Անի, Կարս, Վան և այլն) և այսպես, ստարերկրյա սելջուկ նվաճողների առջևից և բյուզանդական ազդեցությունների թիկունքից տրված հարվածներից վերջնականապես ընկնում են Հայաստանի կիսանկախ իշխանությունները և Հայաստանը նվաճվում է բյուզանդական և սելջուկ զավթիչների կողմից։ Կարճ ժամանակում տրորվում է երկիրը, քայքայվում է ժողովուրդը և բնակչության զգալի մասը հարկադրված է լինում գաղթականի ցուպը վերցնել և ապաստան որոնել Միջագետքում, Սիրիայում և Կիլիկիայում։ Բուն Հայաստանից գաղթած ահա այս բնակչությունը ստվարացնում է Կիլիկիայում նախքան այդ գոյություն ունեցող բնակչության թիվը, այսպիսով, ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ քաղաքական և կուլտուրական կյանքի զոյատևման համար։

Հեղինակն իր աշխատության 4-րդ գլխում՝ «Կիլիկյան հայկական իշխանության կազմավորումը և պայքար անկախության համար 12-րդ դարում» (էջ 81—132), կանգ է առել այն պայքարի վրա, որ Կիլիկիայի հայ քաղաքական շրջանը, Ռուբեն իշխանի գլխավորությամբ, մղում է Բյուզանդիայի և սելջուկների դեմ մինչև վերջնական հաղթանակը։ Հետագայում Ռուբինյանների այս անկախ իշխանությունը ավելի է ընդարձակվում և ամրանում՝ դառնալով բավականին հզոր քաղաքական մի ուժ։ Հեղինակն իրավացիորեն գտնում է, որ «Առաջին Ռուբինյանների երախտիքը կայանում է նրանում, որ նրանք ապաստանելով բյուզանդական տիրապետության դեմ, համախմբեցին Կիլիկիայի հայերին պայքարի ոչ միայն ընդդեմ Բյուզանդիայի, այլև ընդդեմ սելջուկների» (էջ 89)։

Սակայն շուտով Կիլիկիայի քաղաքական ասպարեզի վրա երևան են գալիս խաչակիրները, որոնց նշանաբան ունենալով փրկել Քրիստոսի գերեզմանը, ըստ էության, կողոպտում, ավերում են ճանապարհի վրա գտնվող բնակիչները և ամեն տեսակ բռնություններ անում Արևելքում։ Այդ բախտին, ինչպես ցույց է տալիս հեղինակը, ենթարկվել է և Կիլիկյան Հայաստանը։ Խաչակիրները Կիլիկիա մտան 1097 թվականին, տեղի հայկական քաղաքական շրջանը սկզբում խաչակիրներին ցույց տվեց որոշ օգնություն՝ պարենով և զինական օգնությամբ, նրանց հետ միասին դրավեց Կիլիկիայի դաշտային մասերը, սակայն հետագայում, երբ համոզվեց, որ խաչակիրները ոչնչով չեն տարբերվում իր երկիրը դրավել ցանկացող մյուս նվաճողներից, սկսեց պայքարել նրանց դեմ։

Հայկական քաղաքական շրջանը դաշտային Կիլիկիայի վերջնական գրավման, ինչպես և Կիլիկիայում հայկական իշխանության ամրացման գործում, ինչպես ցույց է տվել հեղինակը, մեծ հաջողություններ հասավ 12-րդ դարի առաջին քառորդում։ Իսկ 12-րդ դարի վերջերին ավարտվում է Կիլիկիայի դրեթե բոլոր անկախ իշխանությունների միացումը միասնական մեկ պետության մեջ։ Ահա այս շրջանում է, որ ստեղծվում են նպաստավոր պայմաններ արտադրական ուժերի զարգացման համար. վերելք է ապրում ներքին և արտաքին առևտուրը, իսկ այս ամենը նպաստում է Կիլիկիայի հայկական թագավորության ավելի հզորացմանը։ Հայտնի է, որ Լևոն Առաջին իշխանը ճանաչվում է որպես թագավոր և թագադրվում Տարսոնում 1198 թվականին։

Գրոֆ. Միքայելյանն այս շրջանի, ինչպես և 13-րդ դարի իրադարձությունները մանրամասնությամբ քննության է առել իր աշխատության 5-րդ գլխում (էջ 139—176), որն ունի «Միջազգային հարաբերությունները և արտաքին քաղաքականությունը 12-րդ դարի վերջում և 13-րդ դարի սկզբում» խորագիրը։

6-րդ գլխում՝ «Կիլիկյան Հայաստանի քաղաքները. առևտրական ուղիները և առևտուրը 12—13-րդ դ. դ.» (էջ 177—202), պատմական հարուստ նյութի վրա, հեղինակը քննության է առնում Կիլիկիայի քաղաքային կյանքը (Սիս, Տարսոնի, Ադանայի, Մամեստիայի, Այասի, Կորիկոսի և այլ քաղաքների), այնտեղ գոյություն ունեցող արհեստագործական արտադրությունը և այլն։

Նույն գլխում հեղինակը կանգ է առել Կիլիկիայից անցնող տարանցիկ ուղիների վրա և ցույց տվել առևտրական այն կապը, որ գոյություն է ունեցել Ճենովայի, Ղրիմի ու սեծովյան երկրների հետ։

Կիլիկիայի և հարևան երկրների միջև գոյություն ունեցող առևտրական հարաբերություններին է նվիրված գրախոսվող աշխատության նաև 9-րդ գլուխը՝ «Կիլիկյան Հայաստանի մասնակցությունը և դերը միջազգային առևտրի մեջ 13-րդ դարի երկրորդ կիսում և 14-րդ դարի առաջին կիսում» (էջ 350—401)։

Ներկա աշխատության ամենախոշոր և, պետք է ասել, ամենատաժեքավոր գլուխներից է 7-րդը՝ «Հասարակական-քաղաքական կյանքը Կիլիկյան Հայաստանում» (էջ 203—290)։ Եթե նախորդ գլուխներում հեղինակի արծարծած այս կամ այն խնդիրը, այս կամ այն չափով, քննարկված է նախորդ ուսումնասիրությունների մեջ, ապա այս գլխում առաջադրված գրեթե բոլոր հարցերը նոր են և ունեն գիտական քարտություն։ Անվիճելի է, որ Կիլիկիայում գոյություն ունեցող հասարակական-տնտեսական հարաբերությունների հարցի ուսումնասիրության առաջնությունը պատկանում է ներկա աշխատության հեղինակին։ Նա է առաջին անգամ լույս դնում և քննության առնում այդ հարցերը։ Իրավացի է հեղինակի այն դիտողությունը, որ նախորդ պատմաբանները բոլորովին չեն հետաքրքրվել Կիլիկիայի աշխատավոր մասսաների սոցիալ-իրավական վիճակով, գյուղացիների և ավատատիրոջների փոխհարաբերություններով և ավատական շահագործման ձևերով։

Գրոֆ. Գ. Միքայելյանն օգտագործելով Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, Վարդան Այգեկցու Առակաց գիրքը, հայկական և օտար պատմագրքերը, քարոզագրքերը և այլ նյութեր, ցույց է տալիս, որ իրոք, Կիլիկիայի հայկական պետությունը հանդիսա-

ցել է տիպիկ ավատական պետություն, որ շահագործվող հիմնական քնակչությունը հանդիսացել է կախյալ կամ ճորտ գյուղացիությունը։ (Ավատական հարաբերությունները, ինչպես ցույց է տվել հեղինակը, Կիլիկիայում գոյություն են ունեցել հայկական պետության ստեղծումից առաջ, սակայն այդ հարաբերությունները իրենց զարգացումն են ապրել 12—13-րդ դարում)։

Սկզբնաղբյուրներում պահված կցկտուր տեղեկությունների հիման վրա, հեղինակը կանգ է առել նաև սոցիալական շարժումների վրա։

Հեղինակը Մխիթար Գոշի Դատաստանագրքի հիման վրա անդրադարձել է Կիլիկյան Հայաստանի պետական կարգին և սոցիալական տարբեր խավերի իրավունքին ու նրանց գոյավիճակին։ Նա շատ համառոտակի, ընդամենը հինգ էջի վրա, խոսել է նաև Կիլիկիայի հայկական կուլտուրայի մասին։

Կիլիկիայի քաղաքական պատմությանն է նվիրված աշխատության 8-րդ գլուխը՝ «Ներքին կյանքը և միջազգային հարաբերությունները 1200—1270 թ. թ.» (էջ 291—349)։ Երբ Կիլիկիայի քաղաքական իշխանության գլուխ է անցնում Հեթումյան թագավորական հարստությունը և երբ Արևելքում սկսում են փոթորկվել մոնղոլական արշավանքները։ Այս շրջանի կիլիկյան հայ թագավորները բանակցություններ են վարում մոնղոլական խաների հետ։ Հեթում Առաջինը 1253—1256 թվականներին անձամբ գնում է Կարակորում Մանգու խանի մոտ և փոխադարձության պայմանագիր կնքում։ Ըստ այս պայմանագրի, Կիլիկիայի հայկական զորքերը մասնակցում են մոնղոլական արևմտյան զորաբանակի հրամանատար Հուլավու խանի հետ Բաղդադի գրավմանը 1260 թվականին։

Կիլիկյան հայկական թագավորությունն իր անկման շրջանն է ապրում սկսած 13-րդ դարի վերջերից, երբ Կիլիկիայի հայկական պետությունը սկսում է կազմալուծվել, երբ ուժեղանում են միջֆեոդալական կռիվները և երբ սկսում են հաճախակի դառնալ մամլուքների արշավանքները Կիլիկիայի վրա։

Կիլիկիայի պետության անկման շրջանին են նվիրված աշխատության վերջին երեք գլուխները՝ «Կիլիկյան Հայաստանի ներքին վիճակը և միջազգային հարաբերությունները 13-րդ դարի վերջում և 14-րդ դարի սկզբում» (էջ 402—439), «Դիվանագիտական հարաբերությունները պապականության, Ֆրանսիայի և Անգլիայի հետ։ Պատերազմ եգիպտական սուլթանատի հետ 1307—1361 թ. թ.» (էջ 440—468) և «Կիլիկիայի հայկական բազավորության անկումը» (էջ 469—495)։

Կիլիկիայի պետականության անկման շրջանի հետ կապված իրադարձություններից առանձնապես ուշադրության արժանի է Վատիկանի Մերձավոր Արևելքում վարած նենգ քաղաքականությունը։ Օգտագործելով Կիլիկիայի հայ ժողովրդի ծանր տնտեսական կացությունը, կաթոլիկ պապերը աշխատել են հայ ժողովրդին հարկադրել կաթոլիկություն ընդունել, մտնել «կաթոլիկ փարախը՝ խոստանալով հայերին օգնություն ցույց տալ նրանց քաղաքական անկախությունը պահպանելու համար։ Բայց այստեղ ևս նրանք, սովորականի նման, խաբել են, վճռական րոպեին հեռու են կանգնել և լվացել իրենց արյունոտ ձեռքերը։ Վատիկանի այս ստոր քաղաքականության վրա, պատմական կոնկրետ նյութի հիմքի վրա, կանգ է առել հեղինակը։ Նա իրավացիորեն նկատում է, որ «ո՛չ Կիլիկյան հայկական թագավորության էպոխայում (11—14-րդ դ. դ.), և ո՛չ հետագայում Կիլիկիայի կամ բուն Հայաստանի հայերն Արևմուտքից օգնություն չստացան։ Ինչպես խաչակիրների նվաճողական քաղաքականությունը միջին դարերում, այնպես և եվրոպական պետությունների քաղաքականությունը նոր ժամանակներում, ինչպես դպրակոն դիվանագիտությունը խաչակրաց արշավանքի ժամանակ, այնպես և մեծ պետությունների դիվանագիտությունը իմպերիալիզմի էպոխայում հայ ժողովրդին բերեցին միայն թշվառություն և հարստահարություն» (էջ 138)։

Հեղինակը Կիլիկիայի հայերի պատմությունը հասցրել է մինչև 1375 թվականը, երբ Կիլիկիայի հայ պետականությունը վերջնականապես կործանվում է եգիպտական սուլթանության կողմից։

Պրոֆ. Գ. Միքայելյանի ներկա աշխատությունը արժեքավոր ներդրում է հայագիտության գանձարանում։

Բ.